



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

2026 թվականի հունվարի 30-ի թիվ 10-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԻՆՆ ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ (ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ) ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հաշվեքննիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով՝ Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատը

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1" Հաստատել Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի ինն ամիսների կատարման հաշվեքննության ընթացիկ եզրակացությունը (միջանկյալ հաշվետվությունը)՝ համաձայն հավելվածի:

ՀԱՇՎԵՔՆՆԻՉ  
ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ

ԱՏՈՄ ԶԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ

Հավելված  
Հաշվեքննիչ պալատի  
2026 թվականի հունվարի 30-ի թիվ 10-Ա որոշման

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ



### ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ (ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԻՆՆ ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ

Ներկայացվում է՝  
ՀՀ Ազգային ժողով,  
ՀՀ կառավարություն, և  
հրապարակվում է Հաշվեքննիչ պալատի պաշտոնական կայքում:

2026թ



**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

- 1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ .....3
- 2. ԱՄՓՈՓԱԳԻՐ .....4
- 3. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ .....6
- 4. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ.....9
- 5. ՀՀ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԻՆՆ ԱՄԻՍՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ..... 10
- 6. ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐ..... 11
- 7. ԱՅԼ ՓԱՍՏԵՐ .....30
- 8. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ..... 48
- 9. ՀԱՎԵԼՎԱԾ .....50



# 1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

## **Հաշվեքննության նպատակը.**

ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի տարեկան կադարման վերաբերյալ հաշվեքննության կարծիքը ձևավորելու համար ինն ամիսների կադարման արդյունքների միջանկյալ գնահատում<sup>1</sup>:

## **Հաշվեքննության հիմքը.**

Հաշվեքննիչ պալատի 2025 թվականի հունիսի 26-ի «2025 թվականի պետական բյուջեի կադարման հաշվեքննության առաջադրանքը հաստատելու մասին» թիվ 40-Ա որոշում:

## **Հաշվեքննության օբյեկտը.**

ՀՀ 2025 թվականի պետական բյուջեով սահմանված ծրագրերի միջոցառումները կատարող հանրային իշխանության մարմիններ և Հայաստանի Հանրապետության հիմնադրած՝ պետական գործառույթներով օժտված իրավաբանական անձինք:

## **Հաշվեքննության առարկան.<sup>2</sup>**

ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի կատարում:

## **Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը.**

2025 թվականի հունվարի 1-ից մինչև 2025 թվականի սեպտեմբերի 30-ը:

## **Հաշվեքննության կադարման ժամկետը.**

2025 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 2026 թվականի հունվարի 31-ը:

## **Հաշվեքննությունն իրականացրած կառուցվածքային ստորաբաժանումը.**

Հաշվեքննիչ պալատի ֆինանսական և համապատասխանության հաշվեքննության վարչություն:

## **Հաշվեքննության համակարգողը.**

Հաշվեքննիչ պալատի անդամ Կարեն Առուստամյան:

<sup>1</sup> «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն սույն Ընթացիկ եզրակացությունն օգտագործվում է ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի կադարման վերաբերյալ եզրակացությունը կազմելու համար:

<sup>2</sup> Պետական գաղտնիք հանդիսացող մասի հաշվեքննության արդյունքները շրջանառվել է «Պետական գաղտնիքի մասին» օրենքով սահմանված ընթացակարգով:



## 2. ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի ինն ամիսների կատարումը հաշվեքննելու համար Հաշվեքննիչ պալատը գնահատել է հանրային իշխանության մարմինների կողմից պատրաստված ՀՀ 2025 թվականի ինն ամիսների պետական բյուջեի կատարման հաշվետվությունները<sup>3</sup>, որպես կիրառելի հիմք սահմանելով դրանց պատրաստելու և բյուջետային ծախսերը դասակարգելու<sup>4</sup> օրենսդրական պահանջները:

Հաշվեքննությամբ պարզվել է, որ հաշվետվությունների բյուջետային ծախսերի առանձին ցուցանիշներում առկա են տնտեսագիտական հոդվածների դասակարգման և գումարի խեղաթյուրումներ<sup>5</sup>, մասնավորապես.

1. «Փաստ» («Դրամարկղային ծախս») կամ կատարված վճարումների ցուցանիշը խեղաթյուրված է 15,647,422.36 հազ. դրամով:
2. «Փաստացի ծախս» կամ սկզբնական հաշվառման փաստաթղթերով հիմնավորված և ձևակերպված իրական ծախսերի ցուցանիշը խեղաթյուրված է 23,151,386.31 հազ. դրամով:
3. Խեղաթյուրված են նաև
  - 3.1. «Դեբիտորական պարտքերի» կամ վճարված գումարների դիմաց չստացված ապրանքների և ծառայությունների ցուցանիշները՝
    - ✓ տարեսկզբի դրությամբ՝ 452,770.28 հազ. դրամով, և
    - ✓ սեպտեմբերի 30-ի դրությամբ՝ 8,366,712.35 հազ. դրամով:
  - 3.2. «Կրեդիտորական պարտքերի» կամ ստացված ապրանքների և ծառայությունների դիմաց դեռևս չվճարված գումարների ցուցանիշները՝
    - ✓ տարեսկզբի դրությամբ՝ 4,483,531.75 հազ. դրամով, և
    - ✓ սեպտեմբերի 30-ի դրությամբ՝ 5,594,323.23 հազ. դրամով:

Խեղաթյուրումների համառոտ նկարագիրը ներկայացված է սույն Ընթացիկ եզրակացության 6-րդ բաժնում, իսկ մանրամասները՝ Հավելված 1-ում:

<sup>3</sup> Հաստատված է ՀՀ ֆինանսների նախարարի 2019 թվականի մարտի 13-ի թիվ 254-Ն հրամանով, սակայն դրա հիման վրա պատրաստված հաշվետվությունները հրապարակելու օրենսդրական պահանջ նախատեսված չէ:

<sup>4</sup> Հաստատված է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007 թվականի հունվարի 9-ի «Հայաստանի Հանրապետության բյուջետային դասակարգումները և դրանց կիրառման կարգը հաստատելու մասին» N° 5-Ն հրամանով:

<sup>5</sup> Խեղաթյուրումը ֆինանսական հաշվետվությունում գումարի, դասակարգման, ներկայացման կամ բացահայտման ու դրանց համար ֆինանսական հաշվետվությունների պատրաստման կիրառելի հիմունքներով սահմանված պահանջների միջև տարբերությունն է («Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 4 հոդվածի 1-ին մասի 9-րդ կետ):



Հաշվեքննության ընթացքում գնահատվել են նաև հաշվեքննության ենթակա մարմիններում ներքին հսկողության համակարգերը, որոնց վերաբերյալ մանրամասները ներկայացված են սույն Ընթացիկ եզրակացության 8-րդ բաժնում:



### 3. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

#### Հաշվեքննության շրջանակը

Ինչպես նշվել է նախորդ եռամսյակների ընթացիկ եզրակացություններում ՀՀ Ազգային ժողովի կողմից 2024 թվականին ընդունված «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի նոր խմբագրությամբ վերանայված կարգավորումների համաձայն, պետական բյուջեի տարեկան կատարման վերաբերյալ Հաշվեքննիչ պալատի եզրակացությունը (ներառյալ՝ հաշվեքննության կարծիքը) ձևավորելու համար հաշվեքննության առարկան այլևս սահմանափակ թվով (8, 10 կամ այլ թվով) պետական մարմինների բյուջեների կատարումը չէ, այլ հաշվեքննության են ենթակա պետական բյուջեով նախատեսված բյուջետային ծրագրերը կատարող հանրային իշխանության մարմինները և Հայաստանի Հանրապետության հիմնադրած՝ պետական գործառույթներով օժտված իրավաբանական անձինք (Բյուջետային հատկացումների կարգադրիչներ):

ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի ինն ամիսների կատարումը գնահատելու համար որպես չափանիշ կիրառվել են ՀՀ բյուջետային դասակարգումները և դրանց կիրառման կարգը,<sup>6</sup> բյուջեների կատարման կարգը<sup>7</sup> և պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց ենթակա հիմնարկների ֆինանսական գործունեության հետ կապված հաշվետվությունների կազմման, ներկայացման և ամփոփման ընդհանուր պայմանները, հաշվետվությունների առանձին տեսակների կազմման ու ներկայացման առանձնահատկությունների մասին հրահանգը<sup>8</sup>:

Ընթացիկ եզրակացությունը կազմվել է ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի ինն ամիսների կատարման վերաբերյալ հաշվետվությունը պատրաստելու համար օրենսդրությամբ սահմանված պահանջների պահպանումը գնահատելու արդյունքում:

---

<sup>6</sup> Հաստատված է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007 թվականի հունվարի 9-ի N 5-Ն հրամանով:  
<sup>7</sup> Հաստատված է ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 9-ի N 706-Ն որոշմամբ:  
<sup>8</sup> Հաստատված է ՀՀ ֆինանսների նախարարի 2019 թվականի մարտի 13-ի N 254-Ն հրամանով:



## Հաշվեքննության մեթոդաբանությունը

ՀՀ պետական բյուջեի կատարումն իրականացվում է դրամարկղային սկզբունքով: Պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվությանը ներկայացվող պահանջները սահմանված են օրենքով<sup>9</sup>: Ըստ այդմ, բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունը ներառում է՝ «պետական բյուջեի եկամուտների, ծախսերի և դեֆիցիտի (հավելուրդի) հիմնավորվածությունը, դրանց համեմատական վերլուծությունը հաշվետու տարվան նախորդող տարվա փաստացի, ինչպես նաև հաշվետու տարվա համար հաստատված և փաստացի կատարված համապատասխան ցուցանիշների նկատմամբ»: Նշված հանգամանքներով պայմանավորված, Հաշվեքննիչ պալատը պետական բյուջեի տարեկան կատարման վերաբերյալ եզրակացությունը՝ ներառյալ կարծիքը, կազմում է<sup>10</sup> հիմք ընդունելով միայն այն հաշվետվությունների խեղաթյուրումները, որոնց ներկայացման պահանջը սահմանված է օրենքով:

Այդուհանդերձ, Հաշվեքննիչ պալատի Ընթացիկ եզրակացություններում (Միջանկյալ հաշվետվություններում) ներառվում են նաև հաշվեքննություններով բացահայտված այն փաստերը, որոնք վերաբերում են պետական բյուջեի կատարման շրջանակում ֆինանսական գործարքների (գործառնությունների), ինչպես նաև առնչվող այլ կարգավորումներով սահմանված պահանջների պահպանմանը:

Ընթացիկ եզրակացության մեջ ներկայացված են ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի ինն ամսվա կատարման ֆինանսական հաշվեքննության արդյունքները: Պետական բյուջեի տարեկան կատարման ֆինանսական հաշվեքննության ընթացքում կազմվող՝ երեք, վեց և ինն ամիսների կատարման Ընթացիկ եզրակացությունները չեն պարունակում «հաշվեքննության կարծիք»՝ դրանք օգտագործվում են պետական բյուջեի տարեկան կատարման վերաբերյալ Հաշվեքննիչ պալատի եզրակացությունը, ներառյալ՝ «հաշվեքննության կարծիքը» կազմելու համար:

<sup>9</sup> «Բյուջեդային համակարգի մասին» օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասի բ) կետ:

<sup>10</sup> «Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքով (24-րդ հոդված) Հաշվեքննիչ պալատը պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացությունը, ներառյալ կարծիքը, ներկայացնում է կառավարության կողմից ներկայացվող պետական բյուջեի կատարման վերաբերյալ:



## **ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

### **3.1. Բյուջետային հատկացումների կարգադրիչների պատասխանատվությունը ֆինանսական (բյուջետային) հաշվետվությունների համար**

Բյուջետային հատկացումների կարգադրիչները պատասխանատու են բյուջետային ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրության համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, ինչպես նաև այնպիսի ներքին հսկողության համակարգի ներդրման համար, որն անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

### **3.2. Հաշվեքննիչ պալատի պատասխանատվությունը**

Դրամարկղային հիմունքներով պետական բյուջեի եռամսյակային կատարման ֆինանսական հաշվեքննության ընթացիկ եզրակացությունը (միջանկյալ հաշվետվությունը)<sup>11</sup> պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացության<sup>11</sup> կազմման համար օգտագործվող, սակայն հաշվեքննության կարծիք չպարունակող եզրակացություն է, որը կենտրոնանում է եռամսյակային (աճողական) արդյունքներ վրա: Այն կազմվում է Օրենքի և միջազգային ստանդարտների հիման վրա մշակված մեթոդաբանություններին, ուղեցույցներին և այլ փաստաթղթերին համապատասխան իրականացված հաշվեքննության արդյունքում, էականության սկզբունքի հիման վրա և չի երաշխավորում, որ կհայտնաբերի բոլոր էական խեղաթյուրումները, երբ դրանք առկա են:

Հաշվեքննության ընթացքում կիրառվել է մասնագիտական դատողություն՝ պահպանելով մասնագիտական կասկածամտության սկզբունքը:

---

<sup>11</sup> Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն Հաշվեքննիչ պալատը պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացությունը կազմում է օգտագործելով այդ տարվա պետական բյուջեի երեք, վեց և ինն ամիսների կատարման ֆինանսական հաշվեքննության ընթացիկ եզրակացությունները:



#### **4. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Ընթացիկ եզրակացության ձևավորման նպատակով հաշվեքննության ենթակա մարմիններից և հասանելի էլեկտրոնային հարթակներից ստացվել է բավարար տեղեկատվություն: Այդուհանդերձ, բյուջետային առանձին գործարքների (գործառնությունների) հետ կապված արձանագրվել են տեղեկատվության ստացման սահմանափակումներ, որոնք ներկայացված են Ընթացիկ եզրակացության 8-րդ բաժնում:

Հաշվետվությունում ներկայացված են պլանային ցուցանիշները, որպես «Փաստ» ներկայացված են դրամարկղային ծախսերը և ներկայացված են «Փաստ»-ի և պլանային ցուցանիշների կատարման տոկոսները:

Նշված հաշվետվությունը գնահատելու համար Հաշվեքննիչ պալատն այն համադրել է պետական բյուջեի կատարման հաշվետվությունները պատրաստելու և բյուջետային ծախսերը դասակարգելու օրենսդրական պահանջների հետ:



**5. ՀՀ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԻՆՆ ԱՄԻՍՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ**

ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի ինն ամիսների կատարման հաշվետվությունների համաձայն՝ եկամուտները կազմել են 2,125,500,469.66 հազ. դրամ (կատարողականը՝ 101.6%), ծախսերը՝ 2,205,436,707.20 հազ. դրամ (կատարողականը՝ 85.7%) և արձանագրվել է 79,936,237.54 հազ. դրամ դեֆիցիտ (կատարողականը՝ 16.6%):



## 6. ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐ

ՀՀ օրենսդրության և արտաքին պետական հաշվեքննության միջազգային ստանդարտների համաձայն, խեղաթյուրումը ֆինանսական հաշվետվությունում **գումարի, դասակարգման, ներկայացման կամ բացահայտման** ու դրանց համար ֆինանսական հաշվետվությունների պատրաստման կիրառելի հիմունքներով սահմանված պահանջների միջև տարբերությունն է («Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 4 հոդվածի 1-ին մասի 9-րդ կետ):

ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի կատարման հաշվետվության հաշվեքննությամբ արձանագրվել են **դասակարգման և գումարի խեղաթյուրումներ**, որոնք ամփոփ ներկայացվում են ստորև, իսկ դրանց մանրամասն նկարագրությունը, ներառյալ գնահատման համար կիրառված իրավական ակտերը, հաշվեքննության ապացույցները, հաշվեքննության ենթարկված մարմինների մեկնաբանությունները և հաշվեքննողների արձագանքը՝ սույն Ընթացիկ եզրակացության (Միջանկյալ հաշվետվության) Հավելվածում:


ՀՀ Ազգային ժողով ներկայացվում և հրապարակվում են պետական բյուջեի կատարման հաշվետվություններ, որոնք պարունակում են ֆինանսական ցուցանիշներ միայն դրամարկղային գործառնությունների վերաբերյալ, քանի որ պետական բյուջեն կատարվում է դրամարկղային սկզբունքով<sup>12</sup>: Հետևաբար, պետական բյուջեի մասին օրենքով հաստատված ֆինանսական ցուցանիշներից բացի, հաշվետվությունների՝ ներառյալ հանրային հատվածի հաշվապահական հաշվառման կարգավորումներով նախատեսված ֆինանսական հաշվետվությունների այլ խեղաթյուրումները չեն ազդում սույն Ընթացիկ եզրակացության վրա:

### **6.1.«Տրանսպորտային սարքավորումներ» տնտեսագիտական հոդվածի (512100) դասակարգման և գումարի խեղաթյուրումները**

#### **6.1.1. ՀՀ պաշտպանության նախարարության «ՀՀ պաշտպանության ապահովում» ծրագրի (1169) «ՀՀ պաշտպանության նախարարության շենքային պայմանների բարելավում» միջոցառում (1169-31001)**

Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգման և պահպանման 581,602.25 հազ. դրամ ընթացիկ ծախսերը դասակարգվել են կապիտալ ծախսեր:

<sup>12</sup> «ՀՀ բյուջեի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդված 2-րդ մաս:



Փաստաթղթերով հիմնավորված իրական (փաստացի) ծախսերը կազմել են 581,602.25 հազ. դրամ, մինչդեռ հաշվետվությունում այն ներկայացվել է 2,346,712.40 հազ. դրամ կամ 1,765,110.15 հազ. դրամով խեղաթյուրված (ավելի):

Կրեդիտորական պարտքերի տարեսկզբի ցուցանիշը խեղաթյուրված է (պակաս է ներկայացված) 4,424,029.40 հազ. դրամով իսկ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ՝ 4,753,886.09 հազ. դրամի չափով:

***Մանրամասներին կարելի է ծանոթանալ հետևյալ հղմամբ՝ [Հավելվածի կետ 6.1.1](#)***

**6.2. «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ»  
տնտեսագիտական հոդվածի (423900) դասակարգման  
խեղաթյուրումը**

**6.2.1. ՀՀ Առողջապահության նախարարության «Սոցիալապես անապահով և առանձին խմբերի անձանց բժշկական օգնություն» ծրագրի (1207)  
«Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ» միջոցառում (1207-11004)**

Սոցիալական փաթեթի շահառուներին, հաշվետու ժամանակաշրջանում կատարված՝ 2,515,832.80 հազ. դրամ հատկացումները, այդ նպատակով սահմանված՝ «Սոցիալական ապահովության միջոցառումների իրականացման նպատակով աշխատողներին սոցիալական փաթեթով ապահովում» (475100) հոդվածի փոխարեն, դասակարգվել են «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» (423900) տնտեսագիտական հոդվածով:

Փաստը հանգեցրել է նույն գումարի չափով նշված հոդվածների ֆինանսական ցուցանիշների դասակարգման խեղաթյուրման :

***Մանրամասներին կարելի է ծանոթանալ հետևյալ հղմամբ՝ [Հավելվածի կետ 6.2.1](#):***

**6.3. «Երեխաների կամ ընտանեկան նպաստներ բյուջեից»  
տնտեսագիտական հոդվածի (472300) փաստացի ծախսերի և  
դեբիտորական պարտքերի գումարի խեղաթյուրումը**



**6.3.1. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն  
«Ժողովրդագրական վիճակի բարելավում» ծրագրի (1068) «Երեխայի  
ծննդյան միանվագ նպաստ» միջոցառում (1068-12002)**

**Կատարող՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության  
Միասնական սոցիալական ծառայություն**

Փաստաթղթերով հիմնավորված իրական (փաստացի) ծախսերը կազմել են 13,630,600.0 հազ. դրամ, մինչդեռ հաշվետվությունում այն ներկայացվել է 13,465,520.61 հազ. դրամ կամ 165,079.39 հազ. դրամով խեղաթյուրված (պակաս):

Կատարված վերահաշվարկից պարզվել է, որ «Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ դեբիտորական պարտքեր» ցուցանիշը խեղաթյուրված (ավելի) է 165,079.39 հազ. դրամով:

**Մանրամասներին կարելի է ծանոթանալ հետևյալ հղմամբ՝ [Հավելվածի կետ 6.3.1:](#)**

**6.3.2. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության  
«Անապահով և կյանքի դժվարին իրավիճակում սոցիալական խմբերին  
աջակցություն» ծրագրի (1011) «Ընտանիքի կենսամակարդակի  
բարձրացմանն ուղղված նպաստներ» միջոցառում (1011-12001)**

**Կատարող՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության  
Միասնական սոցիալական ծառայություն**

Փաստաթղթերով հիմնավորված իրական (փաստացի) ծախսերը կազմել են 15,720,096.36 հազ. դրամ, մինչդեռ մինչդեռ հաշվետվությունում այն ներկայացվել է 15,944,253.8 հազ. դրամ կամ 224,157.44 հազ. դրամով խեղաթյուրված (ավելի):

Կատարված վերահաշվարկից պարզվել է, որ «Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ դեբիտորական պարտքեր» ցուցանիշը խեղաթյուրված (պակաս) է 179,946.52 հազ. դրամով:

**Մանրամասներին կարելի է ծանոթանալ հետևյալ հղմամբ՝ [Հավելվածի կետ 6.3.2:](#)**

**6.4. «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ  
առևտրային կազմակերպություններին» տնտեսագիտական  
հոդվածի (463700) դասակարգման և գումարի  
խեղաթյուրումները**



**6.4.1. ՀՀ Ներքին գործերի նախարարության «Սեյսմիկ պաշտպանություն» ծրագրի (1089) «Սեյսմիկ պաշտպանության ոլորտում ծառայությունների տրամադրում» միջոցառում (1089-11001)**

Հատկացված կանխավճարները հաշվետվությամբ որպես փաստացի (իրական) ծախս արտացոլելու արդյունքում, փաստացի (իրական) ծախսերը խեղաթյուրվել են (ավել են ներկայացված) 486,604.20 հազ. դրամով:

Նույն գումարի չափով խեղաթյուրված է (պակաս է ներկայացված) նաև հաշվետվության «Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ դեբիտորական պարտքեր» ցուցանիշը:

*Մանրամասներին կարելի է ծանոթանալ հետևյալ հղմամբ՝ [Հավելվածի կետ 6.4.1:](#)*

**6.4.2. ՀՀ Ներքին գործերի նախարարության «Տեխնիկական անվտանգության կանոնակարգում» ծրագրի (1028) «Տեխնիկական անվտանգության կանոնակարգման ծառայություններ» միջոցառում (1028-11001)**

Հատկացված կանխավճարները հաշվետվությամբ որպես փաստացի (իրական) ծախս արտացոլելու արդյունքում, փաստացի (իրական) ծախսերը խեղաթյուրվել են (ավել են ներկայացված) 20,822.60 հազ. դրամով:

Նույն գումարի չափով խեղաթյուրված է (պակաս է ներկայացված) նաև հաշվետվության «Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ դեբիտորական պարտքեր» ցուցանիշը:

*Մանրամասներին կարելի է ծանոթանալ հետևյալ հղմամբ՝ [Հավելվածի կետ 6.4.2:](#)*

**6.4.3. ՀՀ ներքին գործերի նախարարության «Տեխնիկական անվտանգության կանոնակարգում» ծրագրի (1028) «Նաիրիտ գործարան» ՓԲԸ-ի անվտանգության պահովում» միջոցառում (1028-11002)**



«Նաիրիտ գործարան» ՓԲԸ-ի հետ կնքված դրամաշնորհային պայմանագրերով կատարված 225,000.00 հազ. դրամ ծախսերը «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների առևտրային կազմակերպություններին» (463800) տնտեսագիտական հոդվածի փոխարեն դասակարգվել են «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման (463700) հոդվածով:

Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ փաստացի (իրական) ծախսը հիմնավորող փաստաթղթերի բացակայության պայմաններում, հատկացված գումարը դեբիտորական պարտք ճանաչելու փոխարեն, ձևակերպվել և հաշվետվությամբ արտացոլվել է որպես փաստացի (իրական) ծախս, ինչի արդյունքում նշված ցուցանիշները խեղաթյուրված են ներկայացվել 225,000.00 հազարական դրամով:

***Մանրամասներին կարելի է ծանոթանալ հետևյալ հղմամբ՝ [Հավելվածի կետ 6.4.3:](#)***

**6.4.4. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Արվեստների ծրագիր» ծրագրի (1168) միջոցառումներ՝**

**(1168-11001) «Օպերային և բալետային արվեստի ներկայացումներ»**

**(1168-11002) «Ազգային ակադեմիական թատերարվեստի ներկայացումներ»**

**(1168-11003) «Թատերական ներկայացումներ»**

**(1168-11004) «Երաժշտարվեստի և պարարվեստի համերգներ»**

**(1168-11006) «Ազգային ակադեմիական խմբերգային համերգներ»**

Փաստացի (իրական) ծախսը հիմնավորող փաստաթղթերի բացակայության պայմաններում հատկացված 5,411,417.34 հազար դրամ գումարը դեբիտորական պարտք ճանաչելու փոխարեն, ձևակերպվել են որպես փաստացի (իրական) ծախսեր:

Նշված անհամապատասխանության արդյունքում հաշվետվություններում փաստացի ծախսերը և հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ դեբիտորական պարտքերը խեղաթյուրված են ներկայացվել 5,411,417.34 հազարական դրամով:

***Մանրամասներին կարելի է ծանոթանալ հետևյալ հղմամբ՝ [Հավելվածի կետ 6.4.4:](#)***



## **6.5. «Կենսաթոշակներ» տնտեսագիտական հոդվածի (474100) գումարի խեղաթյուրումները**

### **6.5.1. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Կենսաթոշակային ապահովություն» ծրագրի (1102) «Աշխատանքային կենսաթոշակներ» միջոցառում (1102-12003)**

#### **Կատարող՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Միասնական սոցիալական ծառայություն**

Փաստաթղթերով հիմնավորված փաստացի (իրական) ծախսը կազմել է 216,001,715.20 հազ. դրամ, մինչդեռ մինչդեռ հաշվետվությունում այն ներկայացվել է 216,115,590.90 հազ. դրամ կամ 113,875.70 հազ. դրամով խեղաթյուրված (ավելի):

Կատարված վերահաշվարկից պարզվել է, որ «Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ դեբիտորական պարտքեր» ցուցանիշը խեղաթյուրված (պակաս) է 8,191.50 հազ. դրամով:

**Մանրամասներին կարելի է ծանոթանալ հետևյալ հղմամբ՝ [Հավելվածի կետ 6.5.1:](#)**

### **6.5.2. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Կենսաթոշակային ապահովություն» ծրագիր (1102) «Սպայական անձնակազմի և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակներ» միջոցառում (1102-12001)**

#### **Կատարող՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Միասնական սոցիալական ծառայություն**

Փաստաթղթերով հիմնավորված փաստացի (իրական) ծախսը կազմել է 33,131,324.80 հազ. դրամ, մինչդեռ հաշվետվությունում այն ներկայացվել է 33,133,120.30 հազ. դրամ կամ 1,795.50 հազ. դրամով խեղաթյուրված (ավելի):

Կատարված վերահաշվարկներով պարզվել է, որ հաշվետվությունում հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ դեբիտորական և կրեդիտորական պարտերի ցուցանիշները խեղաթյուրված են (ավել և պակաս են ներկայացված) համապատասխանաբար՝ 433.79 հազ. դրամով և 7,529.29 հազ. դրամով:

**Մանրամասներին կարելի է ծանոթանալ հետևյալ հղմամբ՝ [Հավելվածի կետ 6.5.2:](#)**

## **6.6. «Այլ ընթացիկ դրամաշնորհներ» տնտեսագիտական հոդվածի (463900) դասակարգման և գումարի խեղաթյուրումները**



**6.6.1. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Կրթության որակի ապահովում» ծրագրի (1192) «Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող «Կրթության բարելավման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում» վարկային ծրագիր» միջոցառում՝ (1192-11023)**

ՊՈԱԿ-ների հետ կնքված դրամաշնորհային պայմանագրերով կատարված 119,045.61 հազ. դրամի ծախսը տնտեսագիտական դասակարգման «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» (463700) հոդվածի փոխարեն դասակարգվել է «Այլ ընթացիկ դրամաշնորհներ» հոդվածով (463900): Արդյունքում, այդ գումարի չափով խեղաթյուրվել են հաշվետվության դրամարկղային և փաստացի ծախսերի ցուցանիշները:

*Մանրամասներին կարելի է ծանոթանալ հետևյալ հղմամբ՝ [Հավելվածի կետ 6.6.1:](#)*

**6.6.2. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Մեծ նվաճումների սպորտ» ծրագրի (1041) «ՀՀ առաջնություններին և միջազգային միջոցառումներին մասնակցության ապահովման համար մարզիկների նախապատրաստում և առաջնությունների անցկացում» միջոցառում՝ (1041-11001)**

Փակ բաժնետիրական ընկերության հետ կնքված դրամաշնորհային պայմանագրով կատարված 135,368.20 հազ. դրամի ծախսը տնտեսագիտական դասակարգման «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների առևտրային կազմակերպություններին» (463800) հոդվածի փոխարեն դասակարգվել է «Այլ ընթացիկ դրամաշնորհներ» (463900) հոդվածով: Արդյունքում, այդ գումարի չափով խեղաթյուրվել են հաշվետվության դրամարկղային և փաստացի ծախսերի ցուցանիշները:

*Մանրամասներին կարելի է ծանոթանալ հետևյալ հղմամբ՝ [Հավելվածի կետ 6.6.2:](#)*

**6.6.3. ՀՀ առողջապահության նախարարության «Առողջապահության ոլորտում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգ» ծրագրի (1126) «Առողջապահական համակարգի պետական առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններին ֆինանսական աջակցության հատկացում» միջոցառում (1126-12006)**



ՓԲԸ-ների և ՊՈԱԿ-ների հետ կնքված դրամաշնորհային պայմանագրերով կատարված համապատասխանաբար՝ 144,677.0 հազ.դրամ և 144,162.70 հազ. դրամ ծախսերը տնտեսագիտական դասակարգման «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների առևտրային կազմակերպություններին» (463800) և «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» (463700) հոդվածների փոխարեն դասակարգվել են «Այլ ընթացիկ դրամաշնորհներ» (463900) հոդվածով:

Արդյունքում, համապատասխանաբար խեղաթյուրվել են դրամարկղային ծախսի ցուցանիշները 144,677.00 հազ. դրամով, 144,162.70 հազ. դրամով և 288,839.70 հազ. դրամով, փաստացի ծախսի ցուցանիշները 126,878.24 հազ. դրամով, 126,474.57 հազ. դրամով և 253,352.81 հազ. դրամով, իսկ ժամանակաշրջանի վերջի դրությամբ դեբիտորական պարտքերի ցուցանիշները 17,771.72 հազ. դրամով, 17,715.17 հազ. դրամով և 35,486.89 հազ. դրամով:

***Մանրամասներին կարելի է ծանոթանալ հետևյալ հղմամբ՝ [Հավելվածի կետ 6.6.3:](#)***

**6.6.4. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Գիտական և գիտատեխնիկական հետազոտություններ» ծրագրի (1162) «Գիտական և գիտատեխնիկական նպատակային-ծրագրային հետազոտություններ» միջոցառում (1162-11006)**

***Կատարող՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտե***

ՊՈԱԿ-ների հետ կնքված դրամաշնորհային պայմանագրերով կատարված 79,580.90 հազ. դրամի ծախսերը տնտեսագիտական դասակարգման «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» (463700) հոդվածի փոխարեն դասակարգվել են «Այլ ընթացիկ դրամաշնորհներ» (463900) հոդվածով:

Փաստացի (իրական) ծախսը հիմնավորող փաստաթղթերի բացակայության պայմաններում 210,567.60 հազ. դրամ ընդհանուր գումարով հատկացումները դեբիտորական պարտքերին վերագրելու փոխարեն, ձևակերպվել և հաշվետվությամբ արտացոլվել է որպես փաստացի ծախս: Ըստ այդմ, նշված գումարի չափով խեղաթյուրվել են հաշվետվության «Փաստացի ծախս» և «Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ դեբիտորական պարտքեր» ցուցանիշները:

***Մանրամասներին կարելի է ծանոթանալ հետևյալ հղմամբ՝ [Հավելվածի կետ 6.6.4:](#)***



**6.6.5. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության  
«Գիտական և գիտատեխնիկական հետազոտություններ» Ծրագիր՝ (1162)  
«Գիտաշխատողներին գիտական աստիճանների համար տրվող  
հավելավճարներ» միջոցառում՝ (1162-12001)**

**Կատարող՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության  
բարձրագույն կրթության և գիտության կոմիտե**

ՓԲԸ-ների և ՊՈԱԿ-ների հետ կնքված դրամաշնորհի պայմանագրերով կատարված համապատասխանաբար՝ 6,095.40 հազ. դրամ և 200,386.60 հազ. դրամ ծախսերը տնտեսագիտական դասակարգման «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների առևտրային կազմակերպություններին» (463800) և «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» (463700) հոդվածների փոխարեն դասակարգվել են «Այլ ընթացիկ դրամաշնորհներ» (463900) հոդվածով: Արդյունքում, այդ գումարների չափերով խեղաթյուրվել են հաշվետվության դրամարկղային և փաստացի ծախսերի ցուցանիշները:

Բացի այդ, հաշվետու ժամանակաշրջանի՝ փաստաթղթերով հիմնավորված փաստացի (իրական) ծախսը կազմել է 188,374.60 հազ. դրամ, մինչդեռ հաշվետվությամբ այն ներկայացվել է 299,421.51 հազ. դրամ կամ 111,046.91 հազ. դրամով խեղաթյուրված (ավելի):

Արձանագրված տարբերության չափով՝ 111,046.91 հազ. դրամով խեղաթյուրվել է նաև «Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ դեբիտորական պարտքեր» ցուցանիշը:

**Մանրամասներին կարելի է ծանոթանալ հետևյալ հղմամբ՝ [Հավելվածի կետը 6.6.5:](#)**

**6.6.6. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության  
«Գիտական և գիտատեխնիկական հետազոտություններ» ծրագրի (1162)  
«Գիտական աստիճանաշնորհման և գիտամանկավարժական կոչումների  
շնորհում» միջոցառում (1162-11019)**

**Կատարող՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության  
բարձրագույն կրթության և գիտության կոմիտե**

ՊՈԱԿ-ների հետ կնքված դրամաշնորհային պայմանագրերի շրջանակներում կատարված 1,612.00 հազ. դրամի ծախսերը, տնտեսագիտական դասակարգման «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» (463700) հոդվածի փոխարեն դասակարգվել են «Այլ



ընթացիկ դրամաշնորհներ» (463900) հողվածում: Արդյունքում, այդ գումարի չափով խեղաթյուրվել են հաշվետվության դրամարկղային և փաստացի ծախսերի ցուցանիշները:

***Մանրամասներին կարելի է ծանոթանալ հետևյալ հղմամբ՝ [Հավելվածի կետ 6.6.6:](#)***

**6.6.7. ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության «Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության էկոհամակարգի և շուկայի զարգացման ծրագիր» ծրագրի (1043) «Ձեռներեցության տեխնոլոգիական էկոհամակարգ» միջոցառում (1043-11009)**

Ոչ պետական, ոչ ֆինանսական կազմակերպությունների հետ (ՓԲԸ-ներ, ՍՊԸ-ներ) 2024-2025 թվականների կնքված դրամաշնորհի տրամադրման պայմանագրերի շրջանակներում կատարված 185,404.81 հազ. դրամի ծախսերը տնտեսագիտական դասակարգման «Սուբսիդիաներ ոչ պետական ոչ ֆինանսական կազմակերպություններին» (452100) հողվածի փոխարեն դասակարգվել են «Այլ ընթացիկ դրամաշնորհներ» տնտեսագնտական դասակարգման (463900) հողվածով:

Բյուջետային ծախսը դրա համար չնախատեսված տնտեսագիտական դասակարգման հողվածով նախատեսելու և կատարելու արդյունքում, խեղաթյուրված են նաև փաստացի ծախսի, տարեսկզբի և հաշվետու ժամանակահատվածի վերջի դրությամբ դեբիտորական պարտքերի ցուցանիշները համապատասխանաբար 289,639.43 հազ. դրամով, 388,114.62 հազ. դրամով և 283,880.00 հազ. դրամով:

***Մանրամասներին կարելի է ծանոթանալ հետևյալ հղմամբ՝ [Հավելվածի կետ 6.6.7:](#)***

**6.6.8. ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության «Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության էկոհամակարգի և շուկայի զարգացման ծրագիր» ծրագրի (1043) «Պետական աջակցություն տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում գործունեություն իրականացնող առևտրային կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին» միջոցառում (1043-11018)**

Առևտրային կազմակերպությունների հետ (ՓԲԸ-ներ, ՍՊԸ-ներ) 2024-2025 թվականների կնքված «Պետության կողմից դրամաշնորհի տրամադրման ֆինանսական աջակցության մասին» պայմանագրերի շրջանակներում, հաշվետու



ժամանակաշրջանում կատարված 5,157,816.16 հազ. դրամ ծախսը «Սուբսիդիաներ ոչ պետական ոչ ֆինանսական կազմակերպություններին» (452100) հոդվածի փոխարեն դասակարգվել են «Այլ ընթացիկ դրամաշնորհներ» (463900) հոդվածում: Արդյունքում այդ գումարի չափով խեղաթյուրվել են (ըստ հոդվածների պակաս և ավել է ներկայացվել) դրամարկղային և փաստացի ծախսերի հաշվետվական ցուցանիշները:

***Մանրամասներին կարելի է ծանոթանալ հետևյալ հղմամբ՝ [Հավելվածի կետ 6.6.8:](#)***

**6.6.9. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Կրթության, մշակույթի և սպորտի ոլորտներում միջազգային և սփյուռքի հետ համագործակցության զարգացում» ծրագրի (1215) «Օտարերկրյա պետություններում հայերենի և հայագիտական առարկաների դասավանդում» միջոցառում (1215-12001)**

Փաստացի (իրական) ծախսը հիմնավորող փաստաթղթերի բացակայության պայմաններում, հաշվետու ժամանակաշրջանում կատարված 121,550.00 հազ. դրամ ընդհանուր գումարով հատկացումները դեբիտորական պարտքերին վերագրելու փոխարեն, ձևակերպվել և հաշվետվությամբ արտացոլվել են որպես փաստացի ծախս, որը հանգեցրել է հաշվետվությամբ արտացոլված փաստացի ծախսի և հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ դեբիտորական պարտքի ցուցանիշների՝ նույն գումարի չափով խեղաթյուրումների:

***Մանրամասներին կարելի է ծանոթանալ հետևյալ հղմամբ՝ [Հավելվածի կետ 6.6.9:](#)***

**6.7. «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական հոդվածի (472900) գումարի խեղաթյուրումները**

**6.7.1. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Սոցիալական ապահովություն» ծրագրի (1205) «Ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստներ» միջոցառում (1205-12001)**

***Կատարող՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Միասնական սոցիալական ծառայություն***

Փաստաթղթերով (վճարման ցուցակներով) հիմնավորված փաստացի (իրական) ծախսը կազմել է 38,162,125.10 հազ. դրամ, մինչդեռ հաշվետվությունում



այն ներկայացվել է 38,176,772.80 հազ. դրամ կամ 14,646.70 հազ. դրամով խեղաթյուրված (ավելի):

Կատարված վերահաշվարկներով պարզվել է, որ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ դեբիտորական և կրեդիտորական պարտքերի ցուցանիշները խեղաթյուրված են (պակաս են ներկայացված) համապատասխանաբար 17,607.30 հազ. դրամով և 14,646.70 հազ. դրամով:

***Մանրամասներին կարելի է ծանոթանալ հետևյալ հղմամբ՝ [Հավելվածի կետ 6.7.1:](#)***

### **6.7.2. ՀՀ առողջապահության նախարարության բյուջետային 4 ծրագրերի 6 միջոցառումներ**

**Ծրագիր՝**

**1. «Մոր և մանկան առողջության պահպանում» ծրագրի (1200)՝**

**1.1. «Երեխաների բժշկական օգնության ծառայություններ» միջոցառում (1200-11003),**

**1.2. «Մանկաբարձական բժշկական օգնության ծառայություններ» միջոցառում (1200-11001):**

**2. «Սոցիալապես անապահով և առանձին խմբերի անձանց բժշկական օգնություն» ծրագրի (1207)՝ «Սոցիալապես անապահով և առանձին խմբերի անձանց բժշկական օգնություն» միջոցառում (1207-11001):**


**3. «Առողջության առաջնային պահպանում» ծրագրի (1099)՝ «Առողջության առաջնային պահպանման բժշկական օգնության ծառայություններ» միջոցառում (1099-11001):**

**4. «Ոչ վարակիչ հիվանդությունների բժշկական օգնության ապահովում» ծրագրի (1202)՝**

**4.1. «Անհետաձգելի բժշկական օգնություն՝ այդ թվում սրտի վիրահատություններ» միջոցառում (1202-11002),**

**4.2. «Ուռուցքաբանական և արյունաբանական հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ» միջոցառում (1202-11004)**

Միջոցառումների շրջանակներում մի քանի կազմակերպություններ պայմանագրերով նախատեսված հաշվետվությունները և մատուցված ծառայությունների հանձնման-ընդունման արձանագրությունները էլեկտրոնային հաշվառման համակարգ մուտագրել են սահմանված ժամկետների ուշացումներով, սակայն ժամկետանց օրերի համար պայմանագրով սահմանված տույժերը և տուգանքները չեն հաշվարկվել, ինչը տվյալ դեպքում կազմում է 68,563.39 հազ.



դրամ: Արդյունքում, հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ դեբիտորական պարտքերի հաշվետվական ցուցանիշը խեղաթյուրված է (պակաս է արտացոլված) այդ գումարի չափով:

*Մանրամասներին կարելի է ծանոթանալ հետևյալ հղմամբ՝ [Հավելվածի կետ 6.7.2:](#)*

**6.8. «Առողջապահական և լաբորատոր նյութեր»  
տնտեսագիտական հոդվածի (426600) գումարի  
խեղաթյուրումը**

**6.8.1. ՀՀ առողջապահության նախարարության «Դեղապահովում» ծրագրի (1188) «Դեղորայքի տրամադրում ամբուլատոր-պոլիկլինիկական, հիվանդանոցային բուժօգնություն ստացողներին և հատուկ խմբերում ընդգրկված ֆիզիկական անձանց» միջոցառում (1188-12001)**

Գնման պայմանագրով ոչ ռեզիդենտ կազմակերպության կողմից մատակարարվող ապրանքների (դեղորայքի) համար ՀՀ մաքսային սահմանին վճարման ենթակա մաքսատուրքի և մաքսավճարի գումարները ներառվել է պայմանագրի գնում, մինչդեռ՝ փաստացի 29,595.56 հազ. դրամ կազմող նշված պարտադիր վճարումներն, առանց այդ չափով մատակարար կազմակերպությանը վճարված պայմանագրի գինը նվազեցնելու, իրականացրել է Նախարարությունը: Արդյունքում, հաշվետվության դրամարկղային ծախսի ցուցանիշը խեղաթյուրված է ոչ ռեզիդենտ կազմակերպությանը ավել վճարված՝ 29,595.56 հազ. դրամի չափով:

*Մանրամասներին կարելի է ծանոթանալ հետևյալ հղմամբ՝ [Հավելվածի կետ 6.8.1:](#)*

**6.9. «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում»  
տնտեսագիտական հոդվածի (511300) դասակարգման և  
գումարի խեղաթյուրումները**

**6.9.1. Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության «Ճանապարհային ցանցի բարելավում» ծրագրի (1049) «Տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգում» միջոցառում (1049-21002)**

Շինարարական աշխատանքները պայմանագրով (համաձայնագրերով) սահմանված ժամկետներում չավարտելու պարագայում չեն հաշվարկվել



պայմանագրով սահմանված տույժերը: Արդյունքում հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ դեբիտորական պատքերի ցուցանիշը խեղաթյուրվել է (պակաս է ներկայացվել) 18,858.63 հազ. դրամի չափով:

***Մանրամասներին կարելի է ծանոթանալ հետևյալ հղմամբ՝ [Հավելվածի կետ 6.9.1:](#)***

### **6.9.2. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների**

**նախարարության «Ճանապարհային ցանցի բարելավում» ծրագրի (1049) «Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների միջին նորոգում» միջոցառում՝ (1049-21020)**

Ավտոճանապարհների միջին նորոգման՝ 3,473,317.03 հազ. դրամ ընթացիկ ծախսերը (պատվածքի մաշվող վերին շերտի փոխման աշխատանքներ, որը չի երկարացնում ճանապարհի օգտակար ծառայության ժամկետը) դասակարգվել են որպես կապիտալ ծախսեր: Արդյունքում, խեղաթյուրվել են տնտեսագիտական դասակարգման «Շենքեր և շինությունների կապիտալ վերանորոգում» (511300) և «Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում» (425100) հոդվածներով (համապատասխանաբար ավել և պակաս) դրամարկղային ծախսի, փաստացի ծախսերի, տարեսկզբի և հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կրեդիտորական պարտքերի ցուցանիշները համապատասխանաբար 3,473,317.03 հազ. դրամով, 4,183,805.90 հազ. դրամով, 59,502.35 հազ. դրամով և 769,991.22 հազ. դրամով:

***Մանրամասներին կարելի է ծանոթանալ հետևյալ հղմամբ՝ [Հավելվածի կետ 6.9.2:](#)***

### **6.9.3. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Հանրակրթական և նախադպրոցական հաստատությունների հիմնում, կառուցում, բարելավում» ծրագրի (1236) «Մանկապարտեզների շենքերի վերակառուցում, հիմնանորոգում» միջոցառում (1236-32002)**

#### ***Կատարողներ՝***

- ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն (Տարածքային զարգացման հիմնադրամ)***
- ՀՀ տարածքային զարգացման և ենթակառուցվածքների նախարարություն***
- ՀՀ գեղարքունիքի մարզպետի աշխատակազմ***

Համայնքային սեփականություն հանդիսացող մանկապարտեզների շենքերի հիմնանորոգման և վերակառուցման 719,505.30 հազ. դրամի ծախսերը «Այլ



կապիտալ դրամաշնորհներ համայնքներին» (465300) տնտեսագիտական դասակարգման հոդվածով դասակարգելու և իրականացնելու փոխարեն, դասակարգվել, կատարվել և հաշվետվությամբ արտացոլվել են «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» (511300) հոդվածում:

Բյուջետային ծախսը, դրա համար չնախատեսված տնտեսագիտական դասակարգման հոդվածով նախատեսելու և կատարելու արդյունքում այդ գումարի չափով խեղաթյուրվել են նշված հոդվածների դրամարկղային և փաստացի ծախսերի հաշվետվական ցուցանիշները:

***Մանրամասներին կարելի է ծանոթանալ հետևյալ հղմամբ՝ [Հավելվածի կետ 6.9.3](#):***

**6.10. «Շենքերի և շինությունների շինարարություն» (511200)  
Տնտեսագիտական հոդվածի գումարի խեղաթյուրումները**


**6.10.1. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի  
նախարարության «Հանրակրթական և նախադպրոցական  
հաստատությունների հիմնում, կառուցում, բարելավում» ծրագրի (1236)  
«Մանկապարտեզների նոր շենքերի կառուցում» միջոցառում (1236-32001)**

***Կատարող՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե***

Կանխավճարը պայմանագրով սահմանված առավելագույն չափից 29,492.35 հազ. դրամով ավել հատկացնելու արդյունքում, նույն գումարի չափով խեղաթյուրվել է հաշվետվության դրամարկղային ծախսի ցուցանիշը:

Բացի այդ, Կապալային աշխատանքների կատարման պայմանագրերով սահմանված՝ կանխավճարների հատկացման պարտադիր պահանջները (շինարարության կազմակերպման նախագծով աշխատանքների մեկնարկման փուլում նախատեսված միջոցառումները կապալառուի կողմից ամբողջությամբ իրականացնելը) չապահովելու պայմաններում հատկացվել է 133,763.54 հազ. դրամ կանխավճար: Արդյունքում, այդ չափով խեղաթյուրվել է հաշվետվության դրամարկղային ծախսի ցուցանիշը:

Շինարարական հրապարակի պատշաճ կահավորումը չկազմակերպելու, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ, բնապահպանական նորմերը չապահանման համար տուգանքներն, աշխատանքները պայմանագրերով սահմանված ժամկետներում չավարտելու դեպքերում, պայմանագրերով սահմանված տույժերն ամբողջությամբ չհաշվարկելու և «...Կապալառուներին վճարվող գումարների հետ...» սահմանվածից պակաս չափերով հաշվանցելու արդյունքում



325,271.31 հազ. դրամով խեղաթյուրված է (պակաս է ներկայացված) դեբիտորական պարտքերի՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ցուցանիշը:

*Մանրամասներին կարելի է ծանոթանալ հետևյալ հղմամբ՝ [Հավելվածի կետ 6.10.1:](#)*

**6.10.2. ՀՀ առողջապահության նախարարության «Առողջապահության ոլորտում պետական քաղաքականության մշակում ծրագրերի համակարգում և մոնիթորինգ» ծրագրի (1126) «Առողջապահական կազմակերպությունների կառուցում, վերակառուցում» միջոցառում (1126-31003)**

**Կատարող՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ**

Փաստաթղթերով հիմնավորված փաստածի (իրական) ծախսը կազմել է 135,653.36 հազ. դրամ, մինչդեռ հաշվետվությունում այն ներկայացվել է 434,895.99 հազ. դրամ կամ 299,242.63 հազ. դրամով խեղաթյուրված (ավելի): Դրանով պայմանավորված, նույն չափով խեղաթյուրված է նաև հաշվետվության հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ դեբիտորական պարտքերի ցուցանիշը:

*Մանրամասներին կարելի է ծանոթանալ հետևյալ հղմամբ՝ [Հավելվածի կետ 6.10.2:](#)*

**6.10.3. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Հանրակրթական և նախադպրոցական հաստատությունների հիմնում կառուցում, բարելավում» ծրագրի (1236) «Հանրակրթական դպրոցների նոր շենքերի կառուցում» միջոցառում (1236-32003)**

**Կատարող՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե**

Փաստաթղթերով (վերահաշվարկով) հիմնավորված դեբիտորական պարտքերի տարեսկզբի և ժամանակաշրջանի վերջի ցուցանիշները կազմել են, համապատասխանաբար՝ 321,036.04 հազ. դրամ և 323,282.09 հազ. դրամ, մինչդեռ հաշվետվությամբ դրանք ներկայացված են՝ 279,270.07 հազարական դրամ: Ըստ այդմ, տարեսկզբի պարտքի չափը խեղաթյուրված է (պակաս է ներկայացված) 41,765.97 հազ. դրամով իսկ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ՝ 44,012.02 հազ. դրամով:

*Մանրամասներին կարելի է ծանոթանալ հետևյալ հղմամբ՝ [Հավելվածի կետ 6.10.3:](#)*



**6.10.4. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Հանրակրթական և նախադպրոցական հաստատությունների հիմնում կառուցում, բարելավում» ծրագրի (1236) «Հանրակրթական դպրոցների նոր շենքերի կառուցում» միջոցառում (1236-32003)**

***Կատարող՝ Հայաստանի Տարածքային զարգացման հիմնադրամ***

Շինհրապարակի պատշաճ կահավորումը չկազմակերպելու, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ, բնապահպանական նորմերը չպահպանման համար տուգանքներն, աշխատանքները պայմանագրերով սահմանված ժամկետներում չավարտելու դեպքերում, պայմանագրերով սահմանված տույժերն ամբողջությամբ չհաշվարկելու և «...Կապալառուներին վճարվող գումարների հետ...» չհաշվանցելու արդյունքում հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ դեբիտորական պատքերի ցուցանիշը խեղաթյուրվել է (պակաս է ներկայացվել) 97,531.09 հազ. դրամի չափով:

***Մանրամասներին կարելի է ծանոթանալ հետևյալ հղմամբ՝ [Հավելվածի կետ 6.10.4:](#)***

**6.10.5. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Առողջապահության ոլորտում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգ» ծրագրի (1126) «Առողջապահական կազմակերպությունների կառուցում, վերակառուցում» միջոցառում (1126- 31003)**

***Կատարող՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե***

Աշխատանքները պայմանագրերով սահմանված ժամկետներում չավարտելու դեպքերում, պայմանագրերով սահմանված տույժերն ամբողջությամբ չհաշվարկելու և գանձելու կամ «...կատարողականների դիմաց կապալառուին վճարվող գումարներից» չպակասեցնելու արդյունքում հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ դեբիտորական պատքերի ցուցանիշը խեղաթյուրվել է (պակաս է ներկայացվել) 235,599.23 հազ. դրամով:

***Մանրամասներին կարելի է ծանոթանալ հետևյալ հղմամբ՝ [Հավելվածի կետ 6.10.5:](#)***



**6.10.6. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Մասսայական սպորտ» ծրագրի՝ (1163) «Վորքաութ» տեսակի մարզահրապարակների կառուցում» միջոցառում (1163-32005)**

***Կատարող՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ:***

Հաշվետու ժամանակաշրջանի՝ փաստաթղթերով հիմնավորված փաստացի (իրական) ծախսը կազմել է 151.262.60 հազ. դրամ, մինչդեռ հաշվետվությամբ ներկայացել է 128,375.72 հազ. դրամ կամ 22,889.69 հազ. դրամով խեղաթյուրված (պակաս):

Բացի այդ, փաստաթղթերով (վերահաշվարկով) հիմնավորված դեբիտորական պարտքի տարեսկզբի մնացորդը կազմել է 22,889.69 հազ. դրամ, հաշվետվությամբ ներկայացվել է 0: Արդյունքում, նույն գումարի չափով խեղաթյուրվել է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կրեդիտորական պարքերի ցուցանիշը:

***Մանրամասներին կարելի է ծանոթանալ հետևյալ հղմամբ՝ [Հավելվածի կետ 6.10.6:](#)***





## 7. ԱՅԼ ՓԱՍՏԵՐ

### 7.1. Տեղեկատվության տրամադրման սահմանափակումներ

#### 7.1.1. Էլեկտրոնային շտեմարաններին հասանելիության սահմանափակումներ

Համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2025 թվականի հունվարի 20-ի № 264-Լ հրամանի<sup>13</sup> Հավելված 1-ի և Հավելված 2-ի՝ օֆերտայի և հրապարակային օֆերտայի պայմանագրերի 3.2.11 կետերի «...կատարողը պարտավոր է ապահովել վճարովի հիմունքներով իրականացրած բժշկական օգնության և սպասարկման ծավալների ամբողջական հաշվառումը, գրանցումը, մուտքագրումը էլեկտրոնային առողջապահական համակարգ՝ սահմանված ժամկետներում և տեխնիկական չափանիշներին համապատասխան...»:

Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ մատուցված և վճարովի հիմունքներով բժշկական օգնության ծառայություններ մատուցված շահառուների համադրումների և վերլուծությունների իրականացման համար Առողջապահության նախարարությունից հայցել էինք բժշկական հաստատություններում ըստ շահառուների վճարովի հիմունքներով իրականացրած բժշկական օգնության և սպասարկման ծավալների ամբողջական հաշվառման, գրանցման, տեխնիկական չափանիշներին համապատասխան էլեկտրոնային առողջապահության համակարգ սահմանված ժամկետներում մուտքագրված տեղեկատվությունը<sup>14</sup>: Տեղեկատվության հայցման նպատակն է պարզելու՝ պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններում բժշկական օգնություն և սպասարկում իրականացված պացիենտներին պետության կողմից սահմանված գների շուրջ 113,349,480.00 հազ. դրամ փոխհատուցման պայմաններում՝ բուժօգնության շրջանակներում որոշ հետազոտությունների կամ այլ բժշկական ծառայությունների մասով պացիենտներից լրացուցիչ (կրկնակի) գումարներ գանձելու դեպքերը:

Պահանջված տեղեկատվություն Նախարարությունը չի տրամադրել 2025 թվականի նոյեմբերի 13-ի գրությամբ պատճառաբանելով որ «...Առողջապահության նախարարությունը բժշկական կազմակերպությունների կողմից վճարովի հիմունքներով իրականացված բժշկական օգնության և սպասարկման վերաբերյալ

<sup>13</sup> «Հրապարակային օֆերտայով և օֆերտայով կնքվող պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատելու մասին»

<sup>14</sup> Հայցվել է Հաշվեքննիչ պալատի 2025 թվականի օգոստոսի 18 թիվ ՀՊԵ/01/422-2025 գրությամբ:



էլեկտրոնային առողջապահության Արմեդ համակարգից ըստ շահառուների արտահանման հնարավորություն չունի...», անյուհետև 2025 թվականի դեկտեմբերի 25-ի գրությամբ,<sup>15</sup> որ «...ՀՀ առողջապահության նախարարի 2021 թվականի մայիսի 18-ի թիվ 40-Ն հրամանի հավելված 1-ի, կետ 3-ի 5-րդ ենթակետի համաձայն, պացիենտին սպասարկող ապահովագրական ընկերությունը և ՊԱԳ-ի աշխատակիցները կարող են դիտել միայն պացիենտի առողջության ֆինանսական պատմությունը և իրենց կողմից ֆինանսավորած այցի տվյալները: Հետևաբար, համաձայն նշված հրամանի, ՊԱԳ-ի կողմից (վճարովի, ապահովագրական և այլն) չփոխհատուցվող ծառայություններին վերաբերվող տվյալները «Արմեդ» էլեկտրոնային առողջապահության համակարգը մանրամասն բացվածքով դիտարկման հնարավորություն չի տալիս և դրանց վերաբերյալ ստացվող հաշվետվությունները կրում են միայն քանակական բնույթ...»:

ՀՀ առողջապահության նախարարի 2025 թվականի նոյեմբերի 26-ի № 7285-Լ հրամանով<sup>16</sup> փոփոխություն է կատարվել ՀՀ առողջապահության նախարարի 2025 թվականի հունվարի 20-ի № 264-Լ հրամանում՝ Հավելվածներից հանվել են կատարողների կողմից վճարովի հիմունքներով իրականացրած բժշկական օգնության և սպասարկման ծավալների ամբողջական հաշվառումը, գրանցումը, էլեկտրոնային առողջապահական համակարգ՝ սահմանված ժամկետներում և տեխնիկական չափանիշներին համապատասխան մուտքագրելու պահանջը:

**7.2. Ֆինանսական կառավարումը, հսկողական համակարգերը<sup>17</sup>**

**7.2.1. Տնտեսագիտական հոդված՝ 511200 «Շենքերի և շինությունների շինարարություն»**

***Ծրագիր՝ 1236 «Հանրակրթական և նախադպրոցական հաստատությունների հիմնում կառուցում, բարելավում»***

---

<sup>15</sup> Գրություն N 02/16.4/42018-2025 գրություն

<sup>16</sup> «ՀՀ առողջապահության նախարարության 2025 թվականի հունվարի 20-ի N 264-Լ հրամանում փոփոխություններ կատարելու մասին»

<sup>17</sup> «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքով սահմանված հասկացություն է (հոդված 2, 4-րդ կետը), ըստ որի՝

«4) ֆինանսական կառավարման, հսկողության համակարգեր՝ կազմակերպության ղեկավարության կողմից սահմանված կանոնների (քաղաքականության), ընթացակարգերի և գործողությունների ամբողջությունը, որով ողջամիտ ձևով երաշխավորվում է հեղուկ պայմաններին համապատասխան կազմակերպության նպատակների իրականացումը՝

ա. Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և կազմակերպության գործունեությանն առնչվող այլ պայմաններին (պայմանագրերին և այլնին) համապատասխանություն,

բ. փնտրող, արդյունավետ և օգտավետ գործառույթներ,



## **Միջոցառումներ**

**1236-32001՝ «Մանկապարտեզների նոր շենքերի կառուցում»**

**1236-32003՝ «Հանրակրթական դպրոցների նոր շենքերի կառուցում»**

**1236-32005՝ «Կրթահամալիրների կառուցում»**

**Պատասխանատու՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն**

**Կատարողներ՝**

**ՀՀ քաղաքաշինության կոմիտե**

**Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ**

## **Շինարարության նկատմամբ հավաստագրված մասնագետների կողմից օրենսդրությամբ սահմանված հսկողական գործառույթների վերաբերյալ**

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2025 թվականի փետրվարի 10-ի N° 05-Ն հրամանի<sup>18</sup>

✓ 82-րդ կետի՝ որակի տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպության հավաստագրված մասնագետները և ինժեներատեխնիկական անձնակազմը պետք է համապատասխանեն մատուցվող ծառայությունների բնույթին և ծավալին: Մասնավորապես, տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպությունների կազմում պետք է առկա լինի յուրաքանչյուր օբյեկտի առումով առնվազն 1 համապատասխան ենթատեսակի հավաստագրված տեխնիկական հսկիչ:

✓ 83-րդ կետի՝ 4-րդ և 5-րդ խմբերի ռիսկայնության օբյեկտների շինարարության ընթացքում հավաստագրված ճարտարագետ տեխնիկական հսկիչն աշխատանքային ժամերին պետք է մշտապես գտնվի շինհրապարակում:

✓ 83.1. կետի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի նոյեմբերի 30-ի N° 2106-Ն որոշման<sup>19</sup> 1-ին կետով հաստատված հավելված 1-ի 6.1 կետով սահմանված իրավաբանական անձանց<sup>20</sup> կողմից որակի տեխնիկական հսկողությունն իրականացնում են հավաստագրված ճարտարագետ

գ. տեղեկությունների ամբողջականություն և վստահելիություն,

դ. կորուստներից, չարաշահումներից և վնասներից ակտիվների ու ռեսուրսների պահպանման հուսալիություն.»

<sup>18</sup>«ՀՀՇՆ 13-04-2025 «Քաղաքաշինության բնագավառում քաղաքաշինական գործունեության տեսակներին համապատասխան քաղաքաշինական գործունեության օբյեկտներում իրականացվող աշխատանքների և ծառայությունների մատուցման գործելակարգեր և պատասխանատու մասնագետների մասնագիտական բնութագրեր» Հայաստանի Հանրապետության շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության 1998 թվականի ապրիլի 28-ի N 44 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին»

<sup>19</sup> «Քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ու որակավորման կարգը հաստատելու մասին»

<sup>20</sup> Այդ իրավաբանական անձանցից է նաև ՀՏՀՀ-ն:



տեխնիկական հսկիչները, այս դեպքում՝ մեկ հավաստագրված տեխնիկական հսկիչին միաժամանակ կարող է վերապահվել մի քանի օբյեկտների տեխնիկական հսկողություն, ընդ որում, վերջնանշված եղանակով ամենօրյա հսկողությունը կարող է իրականացվել չհավաստագրված, սակայն համապատասխան մասնագիտական կրթությամբ շինարարության բնագավառում աշխատանքային փորձ ունեցող և սույն կետում նշված իրավաբանական անձի աշխատակից հանդիսացող մասնագետների կողմից, ովքեր հաշվետու են տվյալ օբյեկտի հսկողությունն իրականացնող հավաստագրված տեխնիկական հսկիչին:

✓ 83.2.-րդ կետի՝ սույն նորմերի 83.1 կետում նշված դեպքերում օբյեկտներում աշխատանքների վկայագրման, հետագա աշխատանքների իրականացման օբյեկտը տեխնիկապես պատրաստ լինելու մասին միջանկյալ ընդունման, ավարտված օբյեկտի հանձնման-ընդունման ժամանակ համապատասխան փաստաթղթերի վավերացումը հավաստագրված տեխնիկական հսկիչի կողմից պարտադիր է:

✓ ՀՀ քաղաքաշինության մասին օրենքի 7.1-րդ հոդվածի 6-րդ մասի՝ «.....1-ին դասի քաղաքաշինական գործունեություն իրականացնող քաղաքաշինության գործունեության սուբյեկտները պարտավոր են ունենալ պաշտոնական կայք, որն առնվազն պետք է պարունակի տեղեկատվություն ծառայությունների, մասնագետների վերաբերյալ, ինչպես նաև ապահովի հետադարձ կապի հնարավորություն...»:

Հաշվեքննությամբ պարզվել է, որ ՀՏՀՀ-ն նշված ծրագրային միջոցառումների մասով հանդիսանալով որպես պատվիրատու, մատուցում է նաև այդ նույն աշխատանքների շինարարության որակի տեխնիկական հսկողության ծառայություններ: Թվով 114 դպրոցների, մանկապարտեզների և կրթահամալիրների շինարարության որակի տեխնիկական հսկողության ծառայությունները մատուցում է ընդամենը 43 աշխատակիցներով, որոնցից միայն 18 աշխատակիցներն են հավաստագրված տեխնիկական հսկիչներ: Ընդ որում, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից, ի պատասխան մեր արտաքին հաստատմանը տրված տեղեկատվության համաձայն, նշված 18 հավաստագրված տեխնիկական հսկիչները համատեղության կարգով աշխատում են ևս մեկ կամ երկու ընկերություններում: Մնացած 25 չհավաստագրված տեխնիկական հսկիչների՝ համապատասխան մասնագիտական կրթությունը և շինարարության բնագավառում աշխատանքային փորձը հիմնավորող՝ հաշվեքննողների կողմից հայցված փաստաթղթերը ՀՏՀՀ-ն հաշվեքննության չի ներկայացրել:



Նշված 114 օբյեկտներից միայն 48 օբյեկտների որակի տեխնիկական հսկողությունն է վերապահվել հավաստագրված տեխնիկական հսկիչի: Ընդհանուր 43 աշխատակիցներից միայն 5 աշխատակցի է վերապահվել ընդամենը մեկական օբյեկտ, սակայն այս աշխատակիցները նույնպես աշխատանքային ժամերին մշտապես չեն գտնվել շինհրապարակում (այն չի հիմնավորվում գործուղման հրամաններով և տաբելով):

ՀՏԶՀ-ի կայք էջում բացակայում են ծառայությունների և մասնագետների վերաբերյալ տեղեկությունները:

***Մանկապարտեզների, դպրոցների և կրթահամալիրների շինարարական աշխատանքներն առանց օրենսդրությամբ սահմանված կարգով կազմված, հաստատված և փորձաքննություն անցած (այդ թվում սեյսիկ փորձաքննություն) նախագծանախահաշվային փաստաթղթերի առկայության իրականացնելու վերաբերյալ:***

- ✓ Համաձայն «Քաղաքաշինության մասին» օրենքի
  - 17-րդ հոդվածի 14-րդ կետի գ ենթակետի՝ բազմակի օգտագործման օրինակելի նախագծերի (0 նիշից ցածր ստորգետնյա հատվածի) տեղակապման նախագծային փաստաթղթերը ենթակա են հաստատման օրենսդրությամբ սահմանված կարգով:
  - 6-րդ հոդվածի 4-րդ պարբերության ա կետի՝ կառուցապատողները պարտավոր են կառուցապատումն իրականացնել օրենքով սահմանված կարգով՝ հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան<sup>5</sup>
  - 7.1-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի ա ենթակետի՝ շինարարություն իրականացնող քաղաքաշինության գործունեության սուբյեկտը պարտավոր է շինարարության ընթացքում ապահովել **հաստատված** նախագծի, նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի պահանջները:
  - 7.1-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի ա ենթակետի՝ շինարարության որակի տեխնիկական հսկողություն իրականացնող քաղաքաշինության գործունեության սուբյեկտը պարտավոր է շինարարության բոլոր փուլերում ստուգել շինարարական աշխատանքների որակն ու տեխնոլոգիական հերթականությունը, դրանց համապատասխանությունը ճարտարապետաշինարարական նախագծով տրված լուծումներին և պահանջներին:



- ✓ Համաձայն ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N<sup>օ</sup> 596-Ն<sup>21</sup> որոշման Հավելված 1-ի
  - 101-րդ կետի՝ նախագծային փաստաթղթերը համարվում են հաստատված իրավասու մարմնի կողմից համաձայնեցվելուց և շինարարության թույլտվությունը տրամադրվելուց հետո:
  - 98-րդ կետի՝ Կառուցապատողը, նախագծային փաստաթղթերի համաձայնեցման և միաժամանակ շինարարության թույլտվության ստացման նպատակով դիմում է իրավասու մարմնին՝ մի շարք այլ փաստաթղթերի հետ միասին կցելով նաև նախագծերը և փորձաքննության դրական եզրակացությունը (եզրակացությունները):
  - 109-րդ կետի՝ Կառուցապատման նախագծի շինարարության թույլտվությունը բազմակի օգտագործման կամ սերտիֆիկացված նախագծերով կառուցապատում իրականացնելու դեպքում տրվում է դրանց տեղակապման նախագծերի հիման վրա:
  - 97-րդ կետի՝ բազմակի օգտագործման օրինակելի նախագծերի կամ սերտիֆիկացված նախագծերի տեղակապման (գրոյական նիշից ցածր) նախագծային փաստաթղթերը մշակվում են տեղակապվող օբյեկտի ռիսկայնության աստիճանի (կատեգորիայի) համար սույն կարգով սահմանված պահանջներին համապատասխան:
  - 93-րդ կետի Կառուցապատողը նախագծային աշխատանքների ավարտից հետո նախագծային փաստաթղթերը ներկայացնում է համապատասխան լիցենզիա ունեցող անձին փորձաքննության:
  - 16-րդ կետի 3-րդ ենթկետի և 27-րդ կետի 4-րդ ենթակետի՝ բարձր ռիսկայնության աստիճանի օբյեկտների՝ IV կատեգորիա օբյեկտների նախագծային փաստաթղթերը ենթակա են պետական համալիր փորձաքննության՝ ներառյալ օրենքով սահմանված պետական լիազորված մարմինների փորձաքննությունները կամ մասնագիտական եզրակացությունները:
- ✓ Համաձայն ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2025 թվականի փետրվարի 10-ի N<sup>օ</sup> 05-Ն<sup>22</sup> հրամանի հավելվածի

<sup>21</sup> «ՀՀ կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին»

<sup>22</sup> «ՀՀՇՆ 13-04-2025 «քաղաքաշինության բնագավառում քաղաքաշինական գործունեության տեսակներին համապատասխան քաղաքաշինական գործունեության օբյեկտներում իրականացվող աշխատանքների և ծառայությունների մատուցման գործելակարգեր և պատասխանատու մասնագետների մասնագիտական բնութագրեր» ՀՀ շինարարական նորմերը հաստատելու և ՀՀ քաղաքաշինության նախարարության 1998 թվականի ապրիլի 28-ի N 44 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին»



- 47-րդ կետի՝ 4-րդ խմբի ռիսկայնության օբյեկտների շինարարության ընթացքում հավաստագրված ճարտարագետ շինարարը շինմոնիտաժային աշխատանքների ամբողջ ընթացքում պետք է մշտապես գտնվի շինհրապարակում:
  - 83-րդ և 83.1-րդ կետերի՝ 4-րդ խմբի ռիսկայնության օբյեկտների շինարարության ընթացքում հավաստագրված ճարտարագետ տեխնիկական հսկիչը (առանձին դեպքերում դեպքում՝ համապատասխան մասնագիտական կրթությամբ շինարարության բնագավառում աշխատանքային փորձ ունեցող տեխնիկական հսկիչն) աշխատանքային ժամերին պետք է մշտապես գտնվի շինհրապարակում:
- ✓ Պետության կարիքների համար կապալային աշխատանքների կատարման պետական գնման Պայմանագրերի՝ Կապալառուն պարտավորվել է իրականացնել նաև տեղակապման նախագծանաշահաշվային աշխատանքները և ապահովել նախագծի համալիր պետական փորձաքննությունը, որոնց կատարման ժամկետ է սահմանվել պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրվանից 90 օրացուցային օր:

Հաշվեքննության ընթացքում աշխատանքների հանձնման-ընդունման արձանագրություններում նշված աշխատանքների կատարման ժամկետների, շինարարության վարման մատյանների, տեխնիկական հսկիչների ներկայացրած հաշվետվությունների ուսումնասիրությամբ, թվով 6 օբյեկտներում տեղում կատարված զննությամբ<sup>23</sup> և թվով 2 օբյեկտների<sup>24</sup> տեսախցիկներով կատարված զննությամբ պարզվել է, որ

✓ թվով 12 օբյեկտներում<sup>25</sup> առանց օրենսդրությամբ սահմանված կարգով կազմված, հաստատված և համալիր պետական փորձաքննություն անցած նախագծանախահաշվային փաստաթղթերի առկայության, տեղում ընթանում էին (կատարվել էին) շինարարական աշխատանքներ՝ այդ թվում հիմքերի կառուցման աշխատանքներ, որոնց համար հենց պետք է կազմվեր տեղակապման նախագիծը և

---

<sup>23</sup> Պայմանագրեր ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-25/3, ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-25/2, ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-25/1, ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-22/2, ՀՏՁՀ ԴԲՄ ԱՇՁԲ-2024/105 և ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-23/34

<sup>24</sup> Պայմանագրեր ՀՏՁՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/89-1 և ՀՏՁՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/79

<sup>25</sup> Պայմանագրեր ՀՏՁՀ ԴԲՄ ԱՇՁԲ-2024/105, ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-25/3, ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-25/2, ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-25/1, ՀՏՁՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/89-1, ՀՏՁՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/79, ՀՏՁՀ ԴԲՄ ԱՇՁԲ-2024/13, ՀՏՁՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/89-1, ՀՏՁՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/37, ՀՏՁՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/111-1, ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-23/7 և ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-23/4:



այն անցներ պարզ և համալիր պետական փորձաքննություն՝ այդ թվում սեյսմիկ փորձաքննություն:

✓ Թվով 5 օբյեկտներում<sup>26</sup> աշխատանքներն ընթացել են ոչ միայն առանց սահմանված կարգով հաստատված և պետական համալիր փորձաքննություն անցած նախագծերի առկայության, այլ նաև պայմանագրերի կասեցված ժամանակահատվածներում:

✓ Թվով 4 օբյեկտների<sup>27</sup> նախագծանախահաշվային փաստաթղթերի բացակայության և պայմանագրերի կասեցված լինելու պարագայում ընդունվել են աշխատանքների հանձնման-ընդունման արձանագրություններ:

✓ Տեղում զննության ենթարկված բոլոր 6 օբյեկտում ներկա չէին հավաստագրված ճարտարագետ շինարարը **և հավաստագրված ճարտարագետ տեխնիկական հսկիչը (առանձին դեպքերում՝ տեխնիկական հսկիչը):**

**ՀՀ քաղաքաշինության կոմիտեի մեկնաբանությունը.**

«...ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 22-ի N1071-Ա որոշման համաձայն՝ քաղաքաշինական գործունեության վերահսկողություն և ստուգում իրականացվում է ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից: Կոմիտեի պատվիրատվությամբ իրականացվող շինարարական օբյեկտներում պահպանված են տեխնիկական հսկողություն իրականացնող անձանց նկատմամբ ներկայացվող պահանջները և հետագա վերահսկողական մեխանիզմները նախատեսվում է ամրապնդել և զարգացնել լիցենզավորման համակարգի միջոցով տեղեկատվության փոխանցման էլեկտրոնային գործիքների ամբողջական գործարկմանը զուգընթաց...»:

**7.2.2. Տնտեսագիտական հոդված՝ 511300 «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում»**

**Ծրագիր՝ 1049 «Ճանապարհային ցանցի բարելավում»**

**Միջոցառում՝ 21020 «Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների միջին նորոգում»**

**Պատասխանատու և կատարող՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն**

<sup>26</sup> Պայմանագրեր՝ ՀՏՀ ԴԲՄ ԱՇՁԲ-2024/105, ՀՏՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/79, ՀՏՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/37, ՀՏՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/104 և ՀՏՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/111-1

<sup>27</sup> Պայմանագրեր՝ ՀՏՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/111-1, ՀՀԲԿ-ՀԲՄԱՇՁԲ-23/4, ՀՏՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/37 և ՀՏՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/89-1



Համաձայն ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի № 596-Ն<sup>28</sup> որոշման Հավելված № 1-ի 26-րդ կետի և Հավելված № 4-ի Ցանկ № 1-ի 7-րդ կետի 11-րդ ենթակետի ժդ պարբերության՝ ցածր ռիսկայնության աստիճանի (I կատեգորիայի) օբյեկտների թվին են դասվում շինություններում (կառուցվածքներում) միջին նորոգման՝...ծածկի վերին շերտի մաշված և քայքայված հատվածների վերականգնում, անհրաժեշտության դեպքում նորոգվող հատվածի փոսային նորոգում, ֆրեզում, հարթեցնող շերտի տեղադրում, առանձին հատվածների պատվածքի քայքայված տեղամասերի փոխարինում՝ նորոգվող ճանապարհահատվածի մակերեսի ոչ ավելի, քան 3 % -ի չափով: Նշված օբյեկտները կարող են իրականացվել կառուցապատողի կողմից՝ առանց նախագծման և շինարարության թույլտվությունների:

Միջոցառման շրջանակում հաշվետու ժամանակահատվածում կնքվել են Պետության կարիքների համար կապալային աշխատանքների կատարման պետական գնման 7,185,916.00 հազ. դրամի թվով 17 պայմանագրեր: Պայմանագրերով պատվիրված և կատարված աշխատանքներն ընդունվել են որպես ցածր ռիսկայնության աստիճանի (I կատեգորիայի) օբյեկտներ և աշխատանքներն իրականացնելու համար սահմանված կարգով չեն կազմվել նախագծային փաստաթղթեր և չեն ապահովվել այդ աշխատանքների նկատմամբ շինարարության որակի տեխնիկական հսկողություն:

Հաշվեքննությամբ պարզվել է, որ բոլոր Պայմանագրերում հարթեցնող շերտի տեղադրման աշխատանքների ծավալը կազմում է նորոգվող ճանապարհահատվածի մակերեսի 14%-ից 29%-ը, թվով 12 պայմանագրերում մաշվող շերտի ֆրեզման աշխատանքների ծավալը կազմում է նորոգվող ճանապարհահատվածի մակերեսի 3.2%-ից մինչև 100%-ը: Համաձայն ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի № 596-Ն<sup>29</sup> որոշման Հավելված № 4-ի Ցանկ № 2.1-ի 1-ին կետի, 2-րդ կետի 8-րդ ենթակետի, Ցանկ № 2-ի 4-րդ կետի 2-րդ ենթակետի Պայմանագրերով պատվիրված օբյեկտները հանդիսանում են միջինից բարձր ռիսկայնության աստիճանի (III կատեգորիայի) դասակարգում ունեցող օբյեկտներ:

---

<sup>28</sup> «Հայասրանի Հանրապետությունում կառուցապարման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայասրանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին»

<sup>29</sup> «Հայասրանի Հանրապետությունում կառուցապարման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայասրանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին»



Համաձայն «Լիցենզավորման մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի, 2-րդ մասի լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների աղյուսակի 17-րդ բաժնի 10-րդ կետի 2-րդ դասի (1-ին, 2-րդ և 3-րդ ռիսկայնության աստիճանի քաղաքաշինական գործունեության օբյեկտներում ծառայությունների մատուցման) շինարարության որակի տեխնիկական հսկողություն ծառայությունների մատուցումը համարվում է լիցենզավորման ենթակա գործունեություն:

Համաձայն «ՀՀ քաղաքաշինության մասին» օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ պարբերության ա և թ կետերի՝ կառուցապատողները պարտավոր են՝

«...ա) կառուցապատումն իրականացնել օրենքով սահմանված կարգով՝ հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան ...».

թ) օրենքով սահմանված կարգով ապահովել շինարարության որակի տեխնիկական հսկողություն շինարարական աշխատանքների նկատմամբ:

Այսպիսով միջինից բարձր ռիսկայնության աստիճանի (III կատեգորիայի) դասակարգում ունեցող օբյեկտների հիմնանորոգման աշխատանքների (քաղաքաշինության բնագավառի 2-րդ դասի գործունեության տեսակ) համար հաշվետու ժամանակաշրջանում կնքվել են 7,185,916.00 հազ. դրամ ընդհանուր գումարով պայմանագրեր և դրանց շրջանակներում իրականացվել են 4,156,355.79 հազ. դրամի աշխատանքներ (դրամարկղային ծախսը 3,435,315.79 հազ. դրամ) առանց օրենսդրությամբ սահմանված կարգով կազմված, հաստատված և փորձաքննություն անցած նախագծանախահաշվային փաստաթղթերի: Բացի այդ պատվիրատուն (կառուցապատողը) օրենքով սահմանված կարգով չի ապահովել համապատասխան գործունեություն իրականացնելու լիցենզիա ունեցող անձի կողմից շինարարական աշխատանքների որակի տեխնիկական հսկողության իրականացումը:

**ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության մեկնաբանությունը:**

«...ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N° 596-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի 24-րդ ենթակետի համաձայն՝ ավտոմոբիլային ճանապարհների միջին նորոգում՝ ավտոմոբիլային ճանապարհի պատվածքի մաշված վերին շերտը վերականգնելու, ավտոմոբիլային ճանապարհի, արհեստական կառույցների, ինչպես նաև ճանապարհային կահավորանքի շինարարական նորմերով նախատեսված սկզբնական որակական ցուցանիշների ապահովման նպատակով իրականացվող նորոգման աշխատանքներ:

ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N° 596-Ն որոշմամբ Հավելված N° 4-ի Ցանկի N° 1-ի 7-րդ կետի 11-րդ ենթակետի «ժղ.» պարբերության



համաձայն՝ ծածկի վերին շերտի մաշված և քայքայված հատվածների վերականգնում, անհրաժեշտության դեպքում նորոգվող հատվածի փոսային նորոգում, ֆրեզում, հարթեցնող շերտի տեղադրում, առանձին հատվածների պատվածքի քայքայված տեղամասերի փոխարինում՝ նորոգվող ճանապարհահատվածի մակերեսի ոչ ավելի, քան 3 %-ի չափով:

Տվյալ դեպքում՝ նորոգվող ճանապարհահատվածի մակերեսի ոչ ավելի, քան 3 %-ի չափով աշխատանքների սահմանափակումը վերաբերում է միայն առանձին հատվածների պատվածքի քայքայված տեղամասերի փոխարինման աշխատանքներին: Միաժամանակ՝ ֆրեզման, հարթեցնող շերտի տեղադրման աշխատանքների ծավալների սահմանափակման անհաժեշտություն չկա, քանի որ այդ աշխատանքները միջին նորոգմանը բնորոշ հիմնական աշխատանքներն են, որոնք հնարավորություն են տալիս ապահովել ճանապարհների սկզբնական որակական ցուցանիշները:...»:

**Հաշվեքննողների արձագանքը.**

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին և 7-րդ մասերի՝ նորմատիվ իրավական ակտում նորմի կիրառման համար թվարկված բոլոր պայմանների առկայությունը պարտադիր է, եթե իրավական ակտում նշված նորմի կիրառումը պայմանավորված է միայն ստորակետերով բաժանված պայմաններով: ՀՀ կառավարության վերը նշված որոշմամբ սահմանված 3%-ի սահմանափակումը վերաբերվում է ոչ միայն «...առանձին հատվածների պատվածքի քայքայված տեղամասերի փոխարինման...» պայմանին այլ նաև որոշմամբ սահմանված և ստորակետերով առանձնացված բոլոր պայմաններին՝ փոսային նորոգումանը, ֆրեզմանը և հարթեցնող շերտի տեղադրմանը:

Այսպիսով, սույն կետում նշված օբյեկտները չեն հանդիսանում ցածր ռիսկայնության աստիճանի (I կատեգորիայի) օբյեկտներ և աշխատանքները պետք է իրականացվեն օրենսդրությամբ սահմանված կարգով կազմված, հաստատված և փորձաքննություն անցած նախագծանախահաշվային փաստաթղթերի առկայության դեպքում: Բացի այդ պատվիրատուն (կառուցապատողը) օրենքով սահմանված կարգով պետք է ապահովեր համապատասխան գործունեություն իրականացնելու լիցենզիա ունեցող անձի կողմից շինարարական աշխատանքների որակի տեխնիկական հսկողության իրականացումը:

**7.2.3. Շինարարության ոլորտում լիցենզավորման գործընթացի հսկողական համակարգի վերաբերյալ**

Համաձայն «Լիցենզավորման մասին» օրենքի



✓ 36-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ «...Լիցենզիայի գործողությունը կարող է կասեցվել... լիցենզավորված անձի կողմից լիցենզավորման ենթակա գործունեությունից բխող՝ օրենքով նախատեսված հաշվետվությունների ներկայացման ժամկետը 10 օրվանից ավելի ժամկետով խախտելու դեպքում, եթե տվյալ խախտման համար լիցենզավորված անձի նկատմամբ այդ բնագավառը կարգավորող օրենքով պատասխանատվության այլ միջոց սահմանված չէ...»:

✓ 43-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն «...միայն սույն հոդվածի աղյուսակի իններորդ սյունակում «Հ» տառով նշված գործունեության տեսակներով զբաղվող լիցենզավորված անձանցից լիցենզավորող մարմիններն իրավունք ունեն պահանջել լիցենզավորված գործունեությանն առնչվող հաշվետվություններ կամ տեղեկություններ...»:

Համաձայն ՀՀ քաղաքաշինության կոմիտեի 2024 թվականի դեկտեմբերի 12-ի № 26-Ն հրամանի<sup>30</sup>

✓ 3-րդ կետի՝ «...Սույն հրամանի գործողությունը տարածվում է 2025 թվականի ապրիլի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա...»:

✓ Հավելված № 1-ի 2-րդ կետի՝ «...Քաղաքաշինության բնագավառում լիցենզավորված կամ քաղաքաշինության գործունեության թույլտվություն ստացած սուբյեկտները հաշվետվությունները լիցենզավորող մարմին են ներկայացնում էլեկտրոնային եղանակով՝ քաղաքաշինության բնագավառի պետական ծառայությունների միասնական հարթակի միջոցով (Էլ. հասցե urban.e-gov.am)...»:

✓ Հավելված № 1-ի 4-րդ կետի՝ «...Սույն հրամանի 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված օրինակելի ձևերին համապատասխան հաշվետվությունները լիցենզավորող մարմին են ներկայացվում տարվա յուրաքանչյուր եռամսյակի համար՝ մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 20-ը...»:

«Լիցենզավորման մասին» օրենքի 43-րդ հոդվածի աղյուսակի իններորդ սյունակում «Հ» տառով նշված գործունեություններից են՝ Քաղաքաշինական փաստաթղթերի կազմումը, Քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության իրականացումը, շինարարության իրականացում, շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացումը, քաղաքաշինական գործունեության օբյեկտների հետախուզման և հետազննման ծառայությունների իրականացումը:

<sup>30</sup> «Լիցենզավորված անձանց կողմից ներկայացվող հաշվետվության և մասնագետների հետ կնքվող աշխատանքային պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատվելու եվ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2009 թվականի օգոստոսի 18-ի N120-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին»



Հաշվեքննությանը պարզվել է, որ նշված գործունեության տեսակներից որևիցե մեկի մասով հաշվեքննությանը ընդգրկող ժամանակաշրջանում ՀՀ քաղաքաշինության կոմիտե նշված հաշվետվությունները սահմանված կարգով չեն ներկայացվել, որևէ լիցենզիա չի կասեցվել:

**ՀՀ քաղաքաշինության կոմիտեի մեկնաբանությունը.**

«...ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2024 թվականի դեկտեմբերի 12-ի N26-Ն հրամանի համաձայն՝ լիցենզավորված անձինք լիցենզավորող մարմին եռամսյակային հաշվետվություններ պետք է ներկայացնեն էլեկտրոնային եղանակով՝ քաղաքաշինության բնագավառի պետական ծառայությունների միասնական «urban.e-gov.am» հարթակի (այսուհետ՝ հարթակ) միջոցով: Այն իրենից պետք է ներկայացնի կատարված աշխատանքների վերաբերյալ ճշտված տեղեկություններ, որի ստուգումն իրականացվում է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում գործող փորձեր գրանցամատյաններով: Գործընթացը պետք է փոխկապակցված լինի շինարարության թույլտվությունների տրամադրման համակարգի հետ, և տեղեկատվության գերակշռող մասը պետք է ինքնաշխատ եղանակով ներբեռնվի վերոհիշյալ թվային հարթակից: Հարթակում հավաքված տեղեկատվությունը հիմք է դառնալու ընկերությունների մոնիթորինգի և վարկանիշավորման համար: Էլեկտրոնային գործընթացը կարող է իրականացվել միայն հարթակի վերազինումից հետո, որի համար ՀՀ թվայնացման խորհրդի որոշմամբ այն դրվել է «ԷԿԵՆԳ» ՓԲ ընկերության պատասխանատվության ներքո և առայժմ չի գործարկվել: Իսկ մինչ հարթակի ամբողջական գործարկումը հաշվետվություններ ներկայացվում են հին ընթացակարգով՝ ՀՀ քաղաքաշինության նախարարի 2009 թվականի օգոստոսի 18-ի N120-Ն հրամանով սահմանված կարգով (N 8.2.3 կետի վերաբերյալ):...»:

**Հաշվեքննողների արձագանքը.**

Համաձայն Քաղաքաշինության կոմիտեի 02.03.2026թ.-ին տրամադրած տեղեկատվության, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի 2024 թվականի դեկտեմբերի 12-ի N° 26-Ն հրամանը ուժի մեջ մտնելուց՝ 2025 թվականի ապրիլի 1-ից հետո ՀՀ քաղաքաշինության նախարարի 2009 թվականի օգոստոսի 18-ի N120-Ն հրամանով սահմանված կարգով (հին ընթացակարգով) հաշվետվությունն են ներկայացրել միայն «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացում» և «Քաղաքաշինական գործունեության օբյեկտների հետախուզում և հետազննում» գործունեության տեսակներով զբաղվող համապատասխանաբար 317 և 359 կազմակերպություններից 121-ը և 33-ը:



«Քաղաքաշինական փաստաթղթերի կազմում», «Քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության իրականացում» և «Շինարարության իրականացում» գործունեության տեսակով զբաղվող որևէ կազմակերպություն ՀՀ քաղաքաշինության կոմիտե հաշվետվություն չեն ներկայացրել:

#### **7.2.4. Տնտեսագիտական հոդված 472900՝ «Այլ նպաստներ բյուջեից»**

**Միջոցառում 1207-11001՝ «Սոցիալապես անապահով և առանձին խմբերի անձանց բժշկական օգնություն»**

**Պատասխանատու և Կատարող՝ ՀՀ առողջապահության նախարարություն:**

Հաշվեքննությամբ արձանագրվել է, որ հաշվետու ժամանակահատվածում ՀՀ առողջապահության նախարարի 2025 թվականի հունվարի 31-ի N<sup>o</sup> 507-Լ հրամանի Հավելված 3-ով սահմանված

- «Զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց հիվանդանոցային փորձաքննություն և բուժում»<sup>31</sup> ենթամիջոցառման շրջանակում 8072 դեպքով 43,836.5 հազ. դրամի ծառայություն է մատուցվել մինչև 16 տարեկան և 37 տարեկանից բարձր տարիքի անձանց:
- «Արտահիվանդանոցային հատուկ և դժվարամատչելի գործիքային ախտորոշիչ հետազոտություններ 18 և բարձր տարիքի անձանց» ենթամիջոցառման շրջանակներում 359 դեպքով 15,847.5 հազ. դրամի ծառայություն է մատուցվել մինչև 18 տարին լրացած անձանց:
- «Արտահիվանդանոցային դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտություններ մինչև 18 տարեկան անձանց» ենթամիջոցառման շրջանակում 277 դեպքով 5,534.5 հազ. դրամի ծառայություն է մատուցվել 18 տարին լրացած անձանց:
- «Արտահիվանդանոցային հատուկ և դժվարամատչելի լաբորատոր ախտորոշիչ հետազոտություններ 18 և բարձր տարիքի անձանց» ենթամիջոցառման շրջանակներում 155 դեպքով 438.5 հազ. դրամի ծառայություն է մատուցվել մինչև 18 տարին լրացած անձանց:
- <<1200-11003-Երեխաների բժշկական օգնության ծառայություններ>> ծրագրային միջոցառման շրջանակում 35 դեպքով 3,847.14 հազ. դրամի բուժօգնության ծառայություններ են մատուցվել 18 տարին լրացած անձանց:

#### **ՀՀ Առողջապահության նախարարության մեկնաբանությունը.**

<sup>31</sup> ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 405-Ն որոշման Հավելված 1-ի 1-ին կետի՝ նախազորակոչային տարիք է համարվում 16-18 տարիքը, իսկ զորակոչային տարիք է համարվում 18-37 տարիքը:



«...Հաշվեքննությանը արձանագրված ենթամիջոցառումների շրջանակներում ներկայացված ծառայությունների անճշտությունների վերաբերյալ հայտնում եմ.

1304 «Ձորակոչային և նախազորակոչային փարիքի անձանց հիվանդանոցային փորձաքննություն և բուժում» ծածկույթով են ներկայացվում նաև վարժական հավաքների կանչված զինապարտները, որոնց փարիքը կարող է լինել նաև 37-ից բարձր:

1326 «Արտահիվանդանոցային դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտություններ մինչև 18 փարեկան անձանց», 1334 «Արտահիվանդանոցային հատուկ և դժվարամատչելի գործիքային ախտորոշիչ հետազոտություններ 18 և բարձր փարիքի անձանց», 1335 «Արտահիվանդանոցային հատուկ և դժվարամատչելի լաբորատոր ախտորոշիչ հետազոտություններ 18 և բարձր փարիքի անձանց» ենթամիջոցառումները «Սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածներին բժշկական օգնության ծառայություններ» միջոցառման բաղկացուցիչներն են, դրանց փարանշարումը իրականացվել է հսկողության իրականացման հեշտացման և առանձնացված վիճակագրական տվյալների ստացման աշխատանքային անհրաժեշտությունից, դեպքերի փոխհատուցումն իրականացվում է մեկ ընդհանուր միջոցառման բյուջեի տողով/շրջանակներում և միևնույն գներով:...»:

**Հաշվեքննողների արձագանքը.**

«Հ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 405-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) Հավելված 1-ի 1-ին կետի համաձայն՝ նախազորակոչային փարիք է համարվում 16-18 փարիքը, իսկ զորակոչային փարիք է համարվում 18-37 փարիքը:

«Ձորակոչային և նախազորակոչային փարիքի անձանց հիվանդանոցային փորձաքննություն և բուժում» ենթամիջոցառման շրջանակում ծառայություններ են մատուցվել 1-ից մինչև 75 փարեկան անձանց:

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 57-րդ հոդվածի համաձայն պահեստազորի խմբերի և պահեստազորում գտնվելու սահմանային փարիքը փափանցվում է 53-70 միջակայքում, կապված՝ զինվորական ծառայության կազմերի և կոչումների հետ:

Միջոցառման շրջանակում, բացի նախազորակոչային և զորակոչային փարիքը լրացած անձանցից (այդ թվում՝ վարժական հավաքներին մասնակցող անձանցից, որոնց մասով էլեկտրոնային առողջապահության համակարգում արտացոլված տեղեկատվությունը ոչ ամբողջական է, օրինակ՝ բացակայում են զինվորական ծառայության կազմերի և կոչումների վերաբերյալ տեղեկատվությունը), ծառայություններ են մատուցվել 16 փարին չլրացած և 70-ից բարձր փարիքի անձանց:



Այսպիսով միջոցառումը ըստ բաղկացուցիչների տարանջատելը չի նպաստել մեկնաբնությունում նշված՝ «...հսկողության իրականացման հեշտացման և առանձնացված վիճակագրական տվյալների ստացման...» նպատակի իրագործմանը:

**Միջոցառումներ՝**

**(1202-11002) «Անհետաձգելի բժշկական օգնություն՝ այդ թվում սրտի վիրահատություններ»**

**(1200-11003) «Երեխաների բժշկական օգնության ծառայություններ»**

**Պատասխանատու և Կատարող՝ ՀՀ առողջապահության նախարարություն**

• Միջոցառումների շրջանակներում համադրվել են ՊԱԳ<sup>32</sup>-ի կողմից հաստատված և մերժված դեպքերը (հայցերը)՝ ՀՀ առողջապահության նախարարի 2024 թվականի ապրիլի 11-ի թիվ 2092-Լ հրամանի հավելվածի 13-րդ կետով սահմանված՝ փորձագետների կողմից հաստատման ենթակա դեպքերի նվազագույն շեմի ցուցանիշների հետ (80% և 70%): Փորձագետների կողմից ըստ քառանիշ ծածկույթների դիտարկված արդյունքները ներկայացված են ստորև.

- ✓ «1302՝ անհետաձգելի բժշկական օգնություն» քառանիշ ծածկույթի մասով 67%՝ 80%-ի փոխարեն,
- ✓ «1329՝ Աորտայի անևրիզմաների պատռվածքների և (կամ) շերտազատումների վիրահատություններ» քառանիշ ծածկույթի մասով 36%՝ 80%-ի փոխարեն,
- ✓ «1317՝ Երեխաներին բժշկական օգնության ծառայություններ» քառանիշ ծածկույթի մասով 60%՝ 70%-ի փոխարեն:

• «1202-11002-Անհետաձգելի բժշկական օգնություն՝ այդ թվում սրտի վիրահատություններ» ծրագրային միջոցառման 1329 ծածկույթի «0330016՝ Վերել աորտայի շերտազատված անևրիզմայի վիրահատական բուժում» յոթանիշ ծառայության ծածկագիրը ընդգրկված է ՀՀ առողջապահության նախարարի 2024 թվականի ապրիլի 11-ի թիվ 2092-Լ հրամանի հավելվածի 13-րդ կետով սահմանված փորձագետների կողմից դիտարկման ենթակա դեպքերի ցանկում: Հաշվեքննությամբ արձանագրվել է, որ փաստացի էլեկտրոնային առողջապահության «Արմեդ» համակարգում չի ընդգրկվել վերը նշված միջոցառումը և ներկայացված հայցերը հաստատվել են առանց փորձագետների կողմից հաստատվելու (ինքնաշխատ եղանակով): Նշված 0330016 յոթանիշ ծառայության

<sup>32</sup> ՀՀ առողջապահության նախարարության պետական առողջապահական գործակալություն



ծածկագրով 9 ամիսների ընթացքում «Բ....Լ....» ԲԿ-ի կողմից ներկայացվել է թվով 16 հայցեր՝ ընդհանուր 54,880.0 հազ. դրամ գումարով (յուրաքանչյուրը 3,430.0 հազ. դրամ արժեքով) և ՊԱԳ-ի կողմից ինքնաշխատ եղանակով ընդունվել և ներկայացվել են վճարման:

### **7.3. Շինարարական նորմերից շեղումներ**

Հոդված-511300՝ «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում»  
Միջոցառում 1049- 21001՝ «Պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգում»:

Պատասխանատու և Կատարող՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

Համաձայն ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2022 թվականի դեկտեմբերի 12-ի № 28-Ն<sup>33</sup> հրամանի Հավելվածի 589-րդ կետի 3-րդ ենթակետի աշխատանքների ընդունման ժամանակ պետք է ստուգել նաև ավտոմոբիլի անիվի կառչումը ծածկից կամ ծածկի անողորկությունը (խորդուբորդությունը), սակայն 2025 թվականի փետրվարից հետո կնքված պայմանագրերի շրջանակում կատարված աշխատանքներից ոչ մեկի դեպքում նշված ցուցանիշը չի ստուգվել և առանց պահանջվող ստուգումն իրականացնելու հաշվետու ժամանակաշրջանում ընդունվել են շուրջ 1005814 քմ ասֆալտբետոնյա վերին շերտի աշխատանքներ 5,285,721.27 հազ. դրամի:

#### **ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության մեկնաբանությունը.**

*«... հայտնում ենք նաև, որ ՀՀ-ում գործող լաբորատորիաները հագեցված չեն ավտոմոբիլի անիվի կառչումը ծածկից չափող սարքավորումներով, ինչի հետևանքով հնարավոր չէ իրականացնել նշված փորձարկումները: Նախատեսվում է «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի կազմում գործող լաբորատորիայի համար համապատասխան սարքավորումները ձեռքբերել 2026 թվականի ընթացքում:...»:*

<sup>33</sup> «ՀՀՇՆ 32-01-2022 «Գվտոմոբիլային ճանապարհներ» Հայաստանի Հանրապետության շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2022 թվականի հունիսի 14-ի N 11-Ն հրամանում փոփոխություն կատարելու մասին»



### **Հաշվեքննողների արձագանքը.**

✓ Համաձայն ՀՀ քաղաքաշինության նախարարի 2008 թվականի հունվարի 14-ի N° 11-Ն հրամանի<sup>34</sup> Հավելվածի 71-րդ կետի Աղյուսակ Ա 4-ի աշխատանքների ընդունման համար անհրաժեշտ ստուգումներն ու փորձարկումներն իրականացնում է կապալառուն:

✓ Չի ներկայացվել որևէ ապացույց, որ ՀՀ-ում գործող լաբորատորիաները հագեցված չեն ավտոմոբիլի անիվի կառչումը ծածկից չափող սարքավորումներով:

✓ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2022 թվականի դեկտեմբերի 12-ի N° 28-Ն հրամանի Հավելվածով աշխատանքների ընդունման համար սահմանված ստուգումների՝ այդ թվում նաև ավտոմոբիլի անիվի կառչումը ծածկից կամ ծածկի անողորկության ստուգման համար որևէ բացառություն սահմանված չէ:

---

<sup>34</sup> «ՀՀԸՆ 1-3.01.01-2008 «Շինարարական արտադրության կազմակերպման աշխատանքների կատարում» շինարարական նորմերը հաստատվելու մասին»



## 8. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հաշվեքննիչ պալատը ընթացիկ եզրակացությունն օգտագործում է ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ կարծիքը<sup>35</sup> ձևավորելու համար:

Ստորև ներկայացվում են հաշվեքննությանը արձանագրված անհամապատասխանությունների և խեղաթյուրումների վերացմանն ուղղված առաջարկությունները, որոնց իրագործմամբ ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը կարող է համապատասխանեցվել հաշվետվության պատրաստման կիրառելի հիմունքներով սահմանված պահանջներին:

### 8.1. Ընթացիկ եզրակացության 7-րդ բաժնում ներկայացված խեղաթյուրումներին վերաբերելի բյուջետային միջոցառումների պատասխանատու պետական մարմիններին.

Միջոցներ ձեռնարկել արձանագրված խեղաթյուրումները ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի տարեկան կատարման հաշվետվության մեջ վերացնելու ուղղությամբ:

### 8.2. Հայաստանի Հանրապետության՝ Ընթացիկ եզրակացության 8-րդ բաժնում ներկայացված պատասխանատու մարմիններին.

Միջոցներ ձեռնարկել առանձին միջոցառումների իրականացման հսկողական համակարգերում արձանագրված բացթողումները վերացնելու և այդ համակարգերի արդյունավետության՝ շինարարական նորմերի պահպանման և շինարարության որակի տեխնիկական հսկողության ապահովման ուղղությամբ:

X

---

ԿԱՐԵՆ ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆ  
Հաշվեքննիչ պալատի անդամ  
30 հունվար 2026 թվական  
Հաշվեքննիչ պալատ  
Բաղրամյան փող. 19, ք. Երևան,  
Հայաստանի Հանրապետություն

<sup>35</sup> Սահմանված է «Հաշվեքննիչ պալատի մասին օրենքի» 24-րդ հոդվածի 2-րդ մասով::





## 9. ՀԱՎԵԼՎԱԾ

### 6. ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐ<sup>36</sup>

#### 6.1.«Տրանսպորտային սարքավորումներ» տնտեսագիտական հոդվածի (512100) դասակարգման և գումարի խեղաթյուրումները

##### 6.1.1. ՀՀ պաշտպանության նախարարության «ՀՀ պաշտպանության ապահովում» ծրագրի (1169) «ՀՀ պաշտպանության նախարարության շենքային պայմանների բարելավում» միջոցառում (1169-31001)

6.1.1.1. *Տնտեսագիտական դասակարգման «Տրանսպորտային սարքավորումներ» (512100՝ կապիտալ ծախսեր) և «Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում» (425200՝ ընթացիկ ծախսեր) հոդվածների դասակարգման խեղաթյուրումը.*

##### **Գնահատման կիրառելի հիմքը.**

ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007 թվականի հունվարի 9-ի № 5-Ն հրամանը<sup>37</sup>, մասնավորապես.

- Հիմնական միջոցների պահպանման և ընթացիկ վերանորոգման ծախսերն արտացոլվում են «Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում» (425200) հաշվում, Հավելված №16:
- Տրանսպորտային սարքավորումների ձեռքբերման, պահպանման և հիմնանորոգման հետ կապված ծախսերն արտացոլվում են «Տրանսպորտային սարքավորումներ» (512100) հաշվում, Հավելված №17:

##### **Խեղաթյուրումը.**

ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի ինն ամիսների կատարման Ձև Հ-2 հաշվետվությունում դասակարգման խեղաթյուրմամբ են ներկայացված «Տրանսպորտային սարքավորումներ» (512100՝ կապիտալ ծախսեր) տնտեսագիտական հոդվածի (ավել է ներկայացված) և «Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում» (425200՝ ընթացիկ ծախսեր)

<sup>36</sup> \*\* Համարակալված խեղաթյուրումները 1-ին կիսամյակի հաշվեքննությամբ արձանագրված խեղաթյուրումներն են, որոնց ցուցանիշները ինն ամիսներին չեն փոփոխվել:

<sup>37</sup> «Հ. պայստանի Հանրապետության բյուջեի մասին» դասակարգումները և դրանց կիրառման կարգը հաստատվելու մասին»:



տնտեսագիտական հողվածի (պակաս է ներկայացված) դրամարկղային 7 փաստացի ծախսերի ցուցանիշները՝ 581,602.25 հազարական դրամով:

**Փաստերը, որոնց հիման վրա արձանագրվել է խեղաթյուրումը.**

ՀՀ պաշտպանության նախարարությունը 2025 թվականի փետրվարին կնքել է պետության կարիքների համար ծառայությունների մատուցման երեք պայմանագիր<sup>38</sup>: Կնքված պայմանագրերի հիման վրա, հաշվետու ժամանակաշրջանում՝ ավտոտրանսպորտային միջոցների ընթացիկ վերանորոգման ծառայությունների<sup>39</sup> ձեռքբերման 581,602.25 հազ. դրամ ծախսերը<sup>40</sup> նախատեսվել և կատարվել են «Տրանսպորտային սարքավորումներ» տնտեսագիտական դասակարգման (512100) կապիտալ ծախսերի հողվածով: Մինչդեռ, տրանսպորտային միջոցների պահպանման և ընթացիկ վերանորոգման ծախսերը պետք է դասակարգվեն «Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում» (425200) տնտեսագիտական դասակարգման հողվածով: Արդյունքում ՀՀ պետական բյուջեի ինն ամիսների կատարման Ձև Հ-2 հաշվետվությունում ներկայացված «Դրամարկղային ծախս» ցուցանիշները խեղաթյուրված են 581,602.25 հազ. դրամով:

Բյուջետային ծախսը, դրա համար չնախատեսված տնտեսագիտական դասակարգման հողվածով նախատեսելու և կատարելու արդյունքում, նույն հաշվետվությունում խեղաթյուրվել են նաև «Փաստացի ծախս» ցուցանիշները 581,602.25 հազ. դրամով (համապատասխանաբար՝ ավել և պակաս է ներկայացվել) «Տրանսպորտային սարքավորումներ» (512100) և «Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում» (425200) տնտեսագիտական դասակարգման հողվածներով:

**ՀՀ պաշտպանության նախարարության մեկնաբանությունը.**

<sup>38</sup> Ավտոտրանսպորտային միջոցների ընթացիկ վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով 14-04-2025թ-ին կնքվել է 24.02.2025թ-ին կնքված ՄԱԾՁԲ-25-4-3 պայմանագրի Համաձայնագիր № 1-ը, 18-04-2025թ-ին՝ 04.03.2025թ-ին կնքված ՄԱԾՁԲ-25-4-4 պայմանագրի Համաձայնագիր № 1-ը և 21.08.2025թ-ին՝ 21.04.2025թ-ին կնքված ԳՀԾՁԲ-25-4/1-1 պայմանագրի Համաձայնագիր № 1-ը համապատասխանաբար 460,000.00 հազ. դրամ, 400,000.00 հազ. դրամ և 32,848,67 հազ. դրամ գումարներով:

<sup>39</sup> Ձեռք են բերվել յուղեր, արգելակման կոճղակների, ինչպես նաև անվադողերի վերանորոգման և/կամ փոխարինման, ինչպես նաև այլ ընթացիկ բնույթի ծառայություններ:

<sup>40</sup> ՄԱԾՁԲ-25-4-3 պայմանագրի մասով 357,285.39 հազ. դրամ, ՄԱԾՁԲ-25-4-4 պայմանագրի մասով 220,264.94 հազ. դրամ և ԳՀԾՁԲ-25-4/1-1 պայմանագրի մասով 4,051,92 հազ. դրամ:



«...Ընդունվել է ի գիտություն: 2026թ. և հաջորդող տարիներին ձեռքբերման գնման առարկաների բնույթով պայմանավորված կիրականացվեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված անհրաժեշտ գործառնությունները...»:

**6.1.1.2. Տնտեսագիտական դասակարգման «Տրանսպորտային սարքավորումներ» (512100՝ կապիտալ ծախսեր) հոդվածի փաստացի ծախսի և կրեդիտորական պարտքերի գումարի խեղաթյուրումները.**

**Գնահատման կիրառելի հիմքերը.**

✓ «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի՝ «...գործառնությունները, այլ դեպքերը և իրադարձությունները ճանաչվում են, երբ դրանք տեղի են ունենում և ներկայացվում են այն ժամանակահատվածների ֆինանսական հաշվետվություններում, որոնց դրանք վերաբերում են»:


✓ ՀՀ ֆինանսների նախարարի 13.03.2019թ. № 254-Ն հրամանի Հավելված 2-ի «Օրինակելի ձև Հ-2-ի լրացման պահանջների» 9-րդ կետի Հ-2 հաշվետվության փաստացի ծախսի սյունակում լրացվում են «...հաշվետու ժամանակահատվածում հիմնարկի՝ համապատասխան փաստաթղթերով ձևակերպված իրական ծախսերը, ներառյալ կրեդիտորների չվճարված հաշիվները...»:

**Խեղաթյուրումը.** Ձև Հ-2 հաշվետվությունում ներկայացված «Փաստացի ծախս» ցուցանիշը և Ձև Հ-4 հաշվետվությունում ներկայացված «Տարեսկզբի կրեդիտորական պարտքեր» և «Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կրեդիտորական պարտքեր» ցուցանիշները խեղաթյուրված են համապատասխանաբար՝ 1,765,110.15 հազ. դրամով, 4,424,029.40 հազ. դրամով և 4,753,886.09 հազ. դրամով:

**Փաստերը, որոնց հիման վրա արձանագրվել է խեղաթյուրումը.**

ՀՀ պաշտպանության նախարարությունը 2019 և 2020 թվականներին կնքել է տարաժամկետ վճարումների պայմանով ապրանքների մատակարարման երկու պայմանագիր<sup>41</sup>: Պայմանագրերով նախատեսված գնման ենթակա առարկաներն, համաձայն ներմուծման հարկային հայտարարագրերի, նյութատեխնիկական միջոցների ընդունման ակտերի, պահեստի մուտքի օրդերների, ինչպես նաև վճարման հանձնարարականների ամբողջությամբ մատակարարվել և համապատասխան ձևակերպումներ են ստացել 2019-2021 թվականներին: Հաշվետու ժամանակաշրջանի համար առկա են միայն ՄԱԾՁԲ-25-4-3, ՄԱԾՁԲ-25-4-4 և

<sup>41</sup> Տրանսպորտային միջոցների ձեռքբերման նպատակով 2019 թվականի հուլիսի 18-ին ընդհանուր 49,543,490.0 Եվրո և 2020 թվականի մարտի 20-ին ընդհանուր 30,049,386.22 Եվրո գներով՝ փորձաժամկետ վճարման պայմանով կնքված համապատասխանաբար 225/DR02/0010/015/19 և ԸՀԾ/01-21/051/40096783-20036 պայմանագրեր:



ԳՀԾՁԲ-25-4/1-1 պայմանագրերի շրջանակներում կազմված 581,602.25 հազ. դրամի իրական ծախսերը հիմնավորող հանձնման-ընդունման արձանագրություններ, մինչդեռ Ձև Հ-2 հաշվետվությունում ներկայացվել է 2,346,712.40 հազ. դրամ փաստացի ծախս: Արդյունքում «Փաստացի ծախս» ցուցանիշը խեղաթյուրված է 1,765,110.15 հազ. դրամով:

Հաշվետու ժամանակաշրջանի տարեսկզբի կրեդիտորական պարտքի գնահատման նպատակով վերահաշվարկվել են ցուցանիշի հիմքերը (գործարքները), որոնց արդյունքում այն կազմել է 8,723,832.40 հազ. դրամ, մինչդեռ՝ Ձև Հ-4 հաշվետվության մեջ որպես տարեսկզբի կրեդիտորական պարտք ներկայացված է 4,299,803.00 հազ. դրամ կամ 4,424,029.40 հազ. դրամով խեղաթյուրված:

Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կրեդիտորական պարտքի գնահատման նպատակով կատարված վերահաշվարկից պարզվել է, որ Ձև Հ-4 հաշվետվությունում «Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կրեդիտորական պարտքեր» ցուցանիշը խեղաթյուրված է 4,753,886.09 հազ. դրամով:

**ՀՀ պաշտպանության նախարարության մեկնաբանությունը.**

*«Ընդունվել է ի գիտություն ...*

*Միաժամանակ նշեմ, որ ընդհանուր առմամբ ՊՆ հաշվեկշռում ներկայացված ցուցանիշները համապատասխանում են անալիտիկ տվյալներին:»*

Ընթացիկ եզրակացության «6. Խեղաթյուրումներ» բաժին կարելի է վերադառնալ հետևյալ հղմամբ՝ [6.1.1](#):

**6.2. «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ»**

**Տնտեսագիտական հոդվածի (423900) դասակարգման խեղաթյուրումները**

**6.2.1. ՀՀ Առողջապահության նախարարության «Սոցիալապես անապահով և առանձին խմբերի անձանց բժշկական օգնություն» ծրագրի (1207) «Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ» միջոցառում (1207-11004)**

6.2.1.1. *\*\*Տնտեսագիտական դասակարգման «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» (423900) և «Սոցիալական ապահովության միջոցառումների իրականացման նպատակով աշխատողներին սոցիալական փաթեթով ապահովում» (475100) հոդվածների դասակարգման խեղաթյուրումները.*

**Գնահատման կիրառելի հիմքը.**

ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007 թվականի հունվարի 9-ի № 5-Ն հրամանը, մասնավորապես.

- բժշկական ապահովագրությունը, որը երաշխավորում է աշխատողների՝ ՀՀ կառավարության կողմից սահմանված կատեգորիաների բժշկական ապահովության իրականացումը երաշխավորող բժշկական ապահովագրության ծախսերն արտացոլվում են «Սոցիալական ապահովության միջոցառումների իրականացման նպատակով աշխատողներին սոցիալական փաթեթով ապահովում» (475100) հաշվում, Հավելված №16:
- Վարչական, համակարգչային, աշխատակազմի մասնագիտական զարգացման, տեղեկատվական, կառավարչական, կենցաղային և հանրային սննդի ծառայություններից և ներկայացուցչական ծախսերից բացի մնացած ընդհանուր բնույթի այլ ծառայությունների հետ կապված ծախսերն արտացոլվում են «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» (423900) հաշվում, Հավելված №16:

**Խեղաթյուրումը.** ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի ինն ամիսների կատարման Ձև Հ-2 հաշվետվությունում դասակարգման խեղաթյուրմամբ են ներկայացված «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» տնտեսագիտական դասակարգման (423900) տնտեսագիտական հոդվածի (ավել է ներկայացված) և «Սոցիալական ապահովության միջոցառումների իրականացման նպատակով աշխատողներին սոցիալական փաթեթով ապահովում» (475100) տնտեսագիտական հոդվածի (պակաս է ներկայացված) դրամարկղային ծախսի ցուցանիշները 2,515,832.80 հազարական դրամով:

Բյուջետային ծախսը, դրա համար չնախատեսված տնտեսագիտական դասակարգման հոդվածով նախատեսելու և կատարելու արդյունքում, նույն հաշվետվությունում խեղաթյուրվել են նաև «Փաստացի ծախս» ցուցանիշները 2,515,832.80 հազարական դրամով (համապատասխանաբար՝ ավել և պակաս է ներկայացվել) «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» (423900) և «Սոցիալական ապահովության միջոցառումների իրականացման նպատակով աշխատողներին



սոցիալական փաթեթով ապահովում» (475100) տնտեսագիտական դասակարգման հոդվածներով:

**Փաստերը, որոնց հիման վրա արձանագրվել է խեղաթյուրումը.**

ՀՀ Առողջապահության նախարարությունը 2025 թվականի ապրիլին կնքել է սոցիալական փաթեթի շահառուների, ինչպես նաև պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով առողջության առաջնային պահպանման և նեղ մասնագիտական ծառայություններ իրականացնող կազմակերպությունների աշխատողների՝ առողջության ապահովագրության չորս պայմանագիր<sup>42</sup>: Կնքված պայմանագրերի հիման վրա, հաշվետու ժամանակաշրջանում 2,515,832.80 հազ. դրամի ծախսերը նախատեսվել, կատարվել և ՀՀ պետական բյուջեի ինն ամիսների կատարման Ձև Հ-2 հաշվետվությունում դասակարգվել են «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» (423900) տնտեսագիտական դասակարգման հոդվածով: Մինչդեռ, «Սոցիալական ապահովության միջոցառումների իրականացման նպատակով աշխատողներին սոցիալական փաթեթով ապահովում» (475000) խումբը ներառում է բժշկական ապահովագրությունը, որը երաշխավորում է աշխատողների՝ ՀՀ կառավարության կողմից սահմանված կատեգորիաների բժշկական ապահովության իրականացումը: 475100 - «Սոցիալական ապահովության միջոցառումների իրականացման նպատակով աշխատողներին սոցիալական փաթեթով ապահովում» սինթետիկ հաշիվն ընդգրկում է նաև ենթաանալիտիկ 475111 հաշիվը՝ բժշկական ապահովագրություն: Այսինքն՝ գործարքները պետք է դասակարգվեին «Սոցիալական ապահովության միջոցառումների իրականացման նպատակով աշխատողներին սոցիալական փաթեթով ապահովում» (475100) տնտեսագիտական դասակարգման հոդվածով:

**ՀՀ առողջապահության նախարարության մեկնաբանությունը.**

*«...Արձանագրված անհամապատասխանությունը կշտկվի ՄԺԾԾ 2027-2029 թվականների հայտի ներկայացման փուլում...»:*

**Հաշվեքնողների արձագանքը.**

<sup>42</sup> Պայմանագրեր 02535733.314-2025, 02574465.314-2025, 02551341.314-2025 և 02706942.314-2025 ընդհանուր գումարով 2,515,832.80 հազ. դրամ:



Սույն Ընթացիկ եզրակացությամբ առաջարկվել է միջոցներ ձեռնարկել արձանագրված խեղաթյուրումները ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի տարեկան կադարման հաշվետվության մեջ վերացնելու ուղղությամբ:

Ընթացիկ եզրակացության «6. Խեղաթյուրումներ» բաժին կարելի է վերադառնալ հետևյալ հղմամբ՝ [6.2.1](#):

**6.3. «Երեխաների կամ ընտանեկան նպաստներ բյուջեից»  
տնտեսագիտական հոդվածի (472300) գումարի  
խեղաթյուրումները**

**6.3.1. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության  
«Ժողովրդագրական վիճակի բարելավում» ծրագրի (1068) «Երեխայի  
ծննդյան միանվագ նպաստ» միջոցառում (1068-12002)  
Կատարող՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության  
Միասնական սոցիալական ծառայություն**

*6.3.1.1. Տնտեսագիտական դասակարգման «Երեխաների կամ  
ընտանեկան նպաստներ բյուջեից» հոդվածի (472300) փաստացի  
ծախսերի և դեբիտորական պարտքերի գումարի  
խեղաթյուրումները.*

**Գնահատման կիրառելի հիմքերը.**

✓ ՀՀ ֆինանսների նախարարի 13.03.2019թ. № 254-Ն հրամանի Հավելված 2-ի «Օրինակելի ձև Հ-2-ի լրացման պահանջների» 9-րդ կետը՝ Հ-2 հաշվետվության փաստացի ծախս սյունակում լրացվում են «...հաշվետու ժամանակահատվածում հիմնարկի՝ համապատասխան փաստաթղթերով ձևակերպված իրական ծախսերը, ներառյալ կրեդիտորների չվճարված հաշիվները...»:

✓ ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 6-ի № 275-Ն որոշման<sup>43</sup> Հավելված 1-ի 23-րդ կետը՝ «...Նպաստը նշանակելու և վճարելու վերաբերյալ որոշում կայացնելու դեպքում նպաստի գումարն արտացոլվում է վճարման ցուցակներում: Գումարը բանկ փոխանցելու դեպքում այդ մասին ծառայությունը տեղեկացնում է

<sup>43</sup> «Երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը սահմանելու, երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու և վճարելու կարգը հաստատելու մասին»



ծնողին՝ էլեկտրոնային հաղորդագրություն ուղարկելով նրա հետադարձ կապի բջջային հեռախոսահամարին կամ էլեկտրոնային փոստի հասցեին...»:

**խեղաթյուրումը.**

Ձև Հ-2 հաշվետվությամբ ներկայացված «Փաստացի ծախս» և Ձև Հ-4 հաշվետվությամբ ներկայացված «Հաշվետու ժամանակահատվածի վերջի դրությամբ դեբիտորական պարտքեր» ցուցանիշները խեղաթյուրված են 165,079.39 հազարական դրամով:

**Փաստերը, որոնց հիման վրա արձանագրվել է խեղաթյուրումը.**

Ըստ վճարման ցուցակների շահառուներին վճարման ենթակա գումարի չափը 2025 թվականի ինն ամիսներին կազմել է 13,630,600.0 հազ. դրամ, մինչդեռ հաշվետու ժամանակաշրջանում Ձև Հ-2 հաշվետվությունում փաստացի ծախսը ցույց է տրվել 13,465,520.61 հազ. դրամ, ինչը հանգեցրել է ցուցանիշի խեղաթյուրման 165,079.39 հազ. դրամով:

Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ դեբիտորական պարտքի գնահատման նպատակով կատարված վերահաշվարկից պարզվել է, որ Ձև Հ-4 հաշվետվությունում «Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ դեբիտորական պարտքեր» ցուցանիշը խեղաթյուրված է 165,079.39 հազ. դրամով:

**ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության մեկնաբանությունը.**

«...2025 թվականի ինն ամիսների դրամարկղային ծախսը կազմել է 13,617,913.01 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 13,465,520.61 հազ. դրամ: Դեբիտորական պարտքը տարեսկզբին կազմել է 3,089.68 հազ. դրամ, հաշվետու ժամանակաշրջանի վերջում՝ 485,714.78 հազ. դրամ:

2024 թ. պետական բյուջեի տարեկան կատարման հաշվեքննության արդյունքների վերաբերյալ եզրակացությամբ արձանագրվել էր, որ 2024 թվականի տարեվերջի դրությամբ դեբիտորական պարտքը կազմել է 330,232.7 հազ. դրամ, որը հաշվառվել է 2025 թ. առաջիկա կիսամյակի ընթացքում և որպես շեղում արտացոլված է կիսամյակային և ինն ամիսների հաշվետվություններում (LS Finance հաշվետվության համակարգի «Շեղում» պատուհան):

Նշված ծրագրի գծով փաստացի ծախսը կազմում է  $13617913.01 + 3089.68 - 485714.78 + 330232.70 = 13465520.61$  հազ. դրամ:...»:

**Հաշվեքննողների արձագանքը.**



«Փաստացի ծախս» ցուցանիշը մեկնաբանությունում նշված կամ այլ ցուցանիշների օգտագործմամբ հաշվարկվող մեծություն չէ: Այն, ինչպես նշված է գնահատման կիրառելի հիմքում, հաշվետու ժամանակահատվածում հիմնարկի՝ համապատասխան փաստաթղթերով (տվյալ դեպքում վճարման ցուցակներով) ձևակերպված իրական՝ 13,630,600.0 հազ. դրամ ծախսերն են:

**Ընթացիկ եզրակացության «6. Խեղաթյուրումներ» բաժին կարելի է վերադառնալ հետևյալ հղմամբ՝ [6.3.1](#):**

**6.3.2. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Անապահով և կյանքի դժվարին իրավիճակում սոցիալական խմբերին աջակցություն» ծրագրի (1011) «Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ» միջոցառում (1011-12001) Կատարող՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Միասնական սոցիալական ծառայություն**

*6.3.2.1. Տնտեսագիտական դասակարգման «Երեխաների կամ ընտանեկան նպաստներ բյուջեից» հոդվածի (472300) փաստացի ծախսերի և դեբիտորական պարտքերի գումարի խեղաթյուրումները.*

**Գնահատման կիրառելի հիմքերը.**

✓ ՀՀ ֆինանսների նախարարի 13.03.2019թ. № 254-Ն հրամանի Հավելված 2-ի «Օրինակելի ձև Հ-2-ի լրացման պահանջների» 9-րդ կետ՝ Ձև Հ-2 հաշվետվության փաստացի ծախս սյունակում «...լրացվում են հաշվետու ժամանակահատվածում հիմնարկի՝ համապատասխան փաստաթղթերով ձևակերպված իրական ծախսերը, ներառյալ կրեդիտորների չվճարված հաշիվները...»:

✓ ՀՀ կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի №145-Ն<sup>44</sup> որոշման Հավելված 8-ի 47-րդ և 48-րդ կետեր, մասնավորապես՝ նպաստի և հրատապ օգնության կանխիկ վճարման ցուցակները կազմվում են էլեկտրոնային տարբերակով՝ գնահատման համակարգի կենտրոնական տեղեկատվական բազան շահագործող կազմակերպության կողմից տարածքային կենտրոնների տրամադրած ամենամսյա տեղեկատվության հիման վրա: Նպաստը և հրատապ օգնությունը վճարվում են յուրաքանչյուր ամիս (անհրաժեշտության դեպքում՝ 2 ամսվանը միասին) վճարման ցուցակներով:

<sup>44</sup> «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին»



**խեղաթյուրումը.** Ձև Հ-2 հաշվետվությունում ներկայացված «Փաստացի ծախս» ցուցանիշը խեղաթյուրված է 224,157.44 հազ. դրամով և Ձև Հ-4 հաշվետվությունում ներկայացված «Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ դեբիտորական պարտքեր» ցուցանիշը խեղաթյուրված է 179,946.52 հազ. դրամով:

**Փաստերը, որոնց հիման վրա արձանագրվել է խեղաթյուրումը.**

✓ Ըստ վճարման ցուցակների շահառուներին վճարման ենթակա գումարի չափը հաշվետու ժամանակաշրջանի համար կազմել է 15,720,096.36 հազ. դրամ, այնինչ Ձև Հ-2 հաշվետվությունում փաստացի ծախսը ցույց է տրվել 15,944,253.8 հազ. դրամ: Արդյունքում փաստացի ծախսը խեղաթյուրված (ավել) է 224,157.44 հազ. դրամով:

✓ Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ դեբիտորական պարտքի գնահատման նպատակով կատարված վերահաշվարկից (ելակետային տվյալներում ներառելով նաև հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ Ծառայության տարածքային կենտրոնների կողմից շահառուներից հետգանձման ենթակա գումարների հաշվառման ցուցանիշը՝ 40,811.59 հազ. դրամը) պարզվել է, որ Ձև Հ-4 հաշվետվությունում «Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ դեբիտորական պարտքեր» ցուցանիշը խեղաթյուրված (պակաս) է 179,946.52 հազ. դրամով:

**ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության մեկնաբանությունը.**

«...2025 թվականի ինն ամիսների դրամարկղային ծախսը կազմել է 15,602,081.18 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 15,944,253.80 հազ. դրամ: Դեբիտորական պարտքը տարեսկզբին կազմել է 305,305.7 հազ. դրամ, հաշվետու ժամանակաշրջանի վերջում՝ 48,155.90 հազ. դրամ:

2024 թ. պետական բյուջեի տարեկան կատարման հաշվեքննության արդյունքների վերաբերյալ եզրակացությամբ արձանագրվել էր, որ 2024 թվականի տարեվերջի դրությամբ դեբիտորական պարտքը կազմել է 85,022.50 հազ. դրամ, որը հաշվառվել է 2025 թ. առաջին կիսամյակի ընթացքում և որպես շեղում արտացոլված է կիսամյակային և ինն ամիսների հաշվետվություններում (LS Finance հաշվետվության համակարգի «Շեղում» պատուհան):

Նշված ծրագրի գծով փաստացի ծախսը կազմում է  $15602081.18 + 305305.71 - 48155.59 + 85022.5 = 15944253.80$  հազ. դրամ:...»:

**Հաշվեքննողների արձագանքը.**



Փաստացի ծախս» ցուցանիշը մեկնաբանությունում նշված կամ այլ ցուցանիշների օգտագործմամբ հաշվարկվող մեծություն չէ: Այն, ինչպես նշված է գնահատման կիրառելի հիմքում, հաշվետու ժամանակահատվածում հիմնարկի՝ համապատասխան փաստաթղթերով (տվյալ դեպքում վճարման ցուցակներով) ձևակերպված իրական՝ 15,720,096.36 հազ. դրամ ծախսերն են:

**Ընթացիկ եզրակացության «6. Խեղաթյուրումներ» բաժին կարելի է վերադառնալ հետևյալ հղմամբ՝ [6.3.2](#):**

#### **6.4. «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին» տնտեսագիտական հոդվածի (463700) դասակարգման և գումարի խեղաթյուրումները**

**6.4.1. ՀՀ Ներքին գործերի նախարարության «Սեյսմիկ պաշտպանություն» ծրագրի (1089) «Սեյսմիկ պաշտպանության ոլորտում ծառայությունների տրամադրում» միջոցառում (1089-11001)**

*6.4.1.1. Տնտեսական դասակարգման «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին» հոդվածի (463700) փաստացի ծախսերի և դեբիտորական պարտքերի գումարի խեղաթյուրումները.*

##### **Գնահատման կիրառելի հիմքերը.**

✓ «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մաս՝ «...հաշվապահական հաշվառման գրանցումները կատարվում են սկզբնական հաշվապահական հաշվառման փաստաթղթերի (այսուհետ՝ սկզբնական հաշվառման փաստաթղթեր) հիման վրա, որոնք արձանագրում են գործառնությունների կատարումը, այլ դեպքերի և իրադարձությունների տեղի ունենալը...»:

✓ ՀՀ ֆինանսների նախարարի 13.03.2019թ. № 254-Ն հրամանի Հավելված 2-ի «Օրինակելի ձև Հ-2-ի լրացման պահանջների» 9-րդ կետ՝ Հ-2 հաշվետվության փաստացի ծախս սյունակում «...լրացվում են հաշվետու ժամանակաշրջանում հիմնարկի՝ համապատասխան փաստաթղթերով ձևակերպված իրական ծախսերը, ներառյալ կրեդիտորների չվճարված հաշիվները ...»:



✓ «Սեյսմիկ պաշտպանության տարածքային ծառայություն» ՊՈԱԿ-ի հետ 2025 թվականի հունվարի 24-ին կնքված պայմանագրի<sup>45</sup>

- 3.2 կետ՝ վճարումները կատարվում են ամսական՝ կանխավճարային ձևով, յուրաքանչյուր ամսվա առաջին տասը աշխատանքային օրվա ընթացքում:
- 2.3.6 կետ՝ կազմակերպությունը պարտավոր է ՀՀ օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով նախատեսված ձևով և կարգով Նախարարություն ներկայացնել ամսական, եռամսյակային և տարեկան հաշվետվություններ և տեղեկատվություն Պայմանագրի կատարման ընթացքի մասին:
- 2.3.5 կետ՝ կազմակերպությունը պարտավոր է Նախարարությանը հանձնել աշխատանքների արդյունքները՝ չխախտելով այլ անձանց իրավունքները:
- 5.1 կետ՝ Նախահաշվով նախատեսված աշխատանքների իրականացման ընթացիկ և վերջնական արդյունքները Կազմակերպության կողմից հանձնվում և Նախարարության կողմից ընդունվում են Կոլեգիալ մարմնի դրական եզրակացության հիման վրա:

***Խեղաթյուրումը.***

Ձև Հ-2 հաշվետվությունում ներկայացված «Փաստացի ծախս» և Ձև Հ-4 հաշվետվությունում ներկայացված «Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ դեբիտորական պարտքեր» ցուցանիշները խեղաթյուրված են 486.604.20 հազարական դրամով:

***Փաստերը, որոնց հիման վրա արձանագրվել է խեղաթյուրումը.***

Միջոցառման շրջանակում «Սեյսմիկ պաշտպանության տարածքային ծառայություն» ՊՈԱԿ-ի հետ կնքվել է պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին պայմանագիր:

Միջոցառման շրջանակում հաշվետու ժամանակաշրջանում կատարվել է 486.604.20 հազ. դրամի կանխավճարային վճարումներ: Նախարարությունում առկա չեն Կազմակերպության կողմից աշխատանքների արդյունքները Նախարարությանը հանձնելը հավաստող որևէ փաստաթուղթ, այդ թվում կազմակերպության կողմից

---

<sup>45</sup> 2025 թվականի հունվարի 24-ի «Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին» պայմանագիր



ներկայացված ամսական և/կամ եռամսյակային հաշվետվություններ, ինչպես նաև ընթացիկ աշխատանքները ընդունելու վերաբերյալ Նախարարության կողմից ամսական դրական եզրակացություններ: Նախարարությունում համապատասխան փաստաթղթերով ձևակերպված իրական ծախսերի բացակայության պայմաններում Ձև Հ-2 հաշվետվությունում ցույց է տրվել 486.604.20 հազ. դրամի փաստացի ծախս: Արդյունքում Ձև Հ-2 հաշվետվությունում փաստացի ծախսի ցուցանիշը խեղաթյուրված (ավել) է 486.604.20 հազ. դրամով:

Նշված խեղաթյուրման արդյունքում Ձև Հ-4 հաշվետվությունում «Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ դեբիտորական պարտք» ցուցանիշը խեղաթյուրված (պակաս) է 486.604.20 հազ. դրամով:

**Ընթացիկ եզրակացության «6. Խեղաթյուրումներ» բաժին կարելի է վերադառնալ հետևյալ հղմամբ՝ [6.4.1](#):**

**6.4.2. \*\* ՀՀ Ներքին գործերի նախարարության «Տեխնիկական անվտանգության կանոնակարգում» ծրագրի (1028) «Տեխնիկական անվտանգության կանոնակարգման ծառայություններ» միջոցառում (1028-11001)**

*6.4.2.1. Տնտեսագիտական դասակարգման «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին» ողվածի (463700) փաստացի ծախսերի և դեբիտորական պարտքերի գումարի խեղաթյուրումները.*

**Գնահատման կիրառելի հիմքերը.**

✓ ՀՀ ֆինանսների նախարարի 13.03.2019թ. № 254-Ն հրամանի Հավելված 2-ի «Օրինակելի ձև Հ-2-ի լրացման պահանջների» 9-րդ կետ՝ Հ-2 հաշվետվության փաստացի ծախս սյունակում «...լրացվում են հաշվետու ժամանակահատվածում հիմնարկի՝ համապատասխան փաստաթղթերով ձևակերպված իրական ծախսերը, ներառյալ կրեդիտորների չվճարված հաշիվները ...»:

✓ Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ 2025 թվականի հունվարի 17-ին կնքված պայմանագրի<sup>46</sup>

➢ 4.1 կետ՝ կազմակերպության կողմից աշխատանքներն իրականացվում են հաշվետու տարվա ընթացքում, իսկ վճարումները

<sup>46</sup> «Պետության կողմից դրամաշնորհի ձևով փրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին»



կատարվում են ամսական՝ կանխավճարային ձևով, յուրաքանչյուր ամսվա առաջին տասը աշխատանքային օրվա ընթացքում:

- 2.4.4 կետ՝ կազմակերպությունը պարտավոր է պայմանագրով սահմանված կարգով պետական մարմին ներկայացնել միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ, իսկ ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն:
- 3.1 կետ՝ համաձայն աշխատանքների իրականացման ընթացիկ և վերջնական արդյունքները կազմակերպության կողմից հանձնվում և Նախարարության կողմից ընդունվում են կոլեգիալ կառավարման մարմնի դրական եզրակացության հիման վրա:

**խեղաթյուրումը.** Ձև Հ-2 հաշվետվությունում ներկայացված «Փաստացի ծախս» և Ձև Հ-4 հաշվետվությունում ներկայացված «Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ դեբիտորական պարտքեր» ցուցանիշները խեղաթյուրված են 20,822.60 հազարական դրամով:

**Փաստերը, որոնց հիման վրա արձանագրվել է խեղաթյուրումը.**

Միջոցառման շրջանակում 2025 թվականի հունվարի 17-ին «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ կնքվել է պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին պայմանագիր: Հաշվետու ժամանակաշրջանում կատարվել է 20,822.60 հազ. դրամի դրամարկղային ծախս՝ կանխավճարային վճարումներ: Նախարարությունում առկա չեն Կազմակերպության կողմից ներկայացված միջոցառումների իրականացման մասին ընթացիկ և/կամ վերջնական հաշվետվություններ և դրանց ընդունման վերաբերյալ կոլեգիալ կառավարման մարմնի դրական եզրակացություններ, սակայն Ձև Հ-2 հաշվետվությունում ցույց է տրվել 20,822.66 հազ. դրամի փաստացի ծախս: Արդյունքում Ձև Հ-2 հաշվետվությունում «Փաստացի ծախս» ցուցանիշը խեղաթյուրված է 20,822.60 հազ. դրամով:

Նշված խեղաթյուրման արդյունքում Ձև Հ-4 հաշվետվությունում «Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ դեբիտորական պարտք» ցուցանիշը խեղաթյուրված է 20,822.60 հազ. դրամով:

**Ընթացիկ եզրակացության «6. խեղաթյուրումներ» բաժին կարելի է վերադառնալ հետևյալ հղմամբ՝ [6.4.2](#):**



### 6.4.3. ՀՀ ներքին գործերի նախարարության «Տեխնիկական անվտանգության կանոնակարգում» ծրագրի (1028) «Նախրիտ գործարան» ՓԲԸ-ի անվտանգության պահովում» միջոցառում (1028-11002)

6.4.3.1. *Տնտեսագիտական դասակարգման «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» (463700) և «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների առևտրային կազմակերպություններին» (463800) հոդվածների դասակարգման խեղաթյուրումները.*

#### **Գնահատման կիրառելի հիմքը.**

ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007 թվականի հունվարի 9-ի N° 5-Ն հրամանը, մասնավորապես.

- Պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին ընթացիկ դրամաշնորհների տրամադրման ծախսերն արտացոլվում են «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» (463700) հաշվում, Հավելված N°16:
- Պետական և համայնքների առևտրային կազմակերպություններին ընթացիկ դրամաշնորհների տրամադրման ծախսերն արտացոլվում են «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների առևտրային կազմակերպություններին» (463700) հաշվում, Հավելված N°16:

**Խեղաթյուրումը.** ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի ինն ամիսների կատարման Ձև Հ-2 հաշվետվությունում դասակարգման խեղաթյուրմամբ են ներկայացված «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» տնտեսագնատական դասակարգման (463700) տնտեսագիտական հոդվածի (ավել է ներկայացված) և «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների առևտրային կազմակերպություններին» (463800) տնտեսագիտական հոդվածի (պակաս է ներկայացված) դրամարկղային ծախսի ցուցանիշները 225,000.00 հազարական դրամով:

#### **Փաստերը, որոնց հիման վրա արձանագրվել են խեղաթյուրումը.**

Հաշվետու ժամանակահատվածում վերոնշյալ միջոցառման շրջանակում «Նախրիտ գործարան» ՓԲԸ-ի հետ կնքված դրամաշնորհային պայմանագրերով կատարված 225,000.00 հազ. դրամ ծախսերը նախատեսվել և կատարվել են «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման (463700) հոդվածով, այնինչ պետք է դասակարգվեին «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և



համայնքների առևտրային կազմակերպություններին» (463800) տնտեսագիտական հոդվածով, ինչը հանգեցրել է ՀՀ պետական բյուջեի ինն ամիսների կատարման Ձև Հ-2 հաշվետվությունում նշված տնտեսագիտական հոդվածներով դրամարկղային ծախսի *դասակարգման* խեղաթյուրման:

*6.4.3.2. Տնտեսագիտական դասակարգման «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» հոդվածի (463700) փաստացի ծախսերի և դերիտորական պարտքերի գումարի խեղաթյուրումները.*

**Գնահատման կիրառելի հիմքերը.**

✓ «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մաս՝ «...հաշվապահական հաշվառման գրանցումները կատարվում են սկզբնական հաշվապահական հաշվառման փաստաթղթերի (այսուհետ՝ սկզբնական հաշվառման փաստաթղթեր) հիման վրա, որոնք արձանագրում են գործառնությունների կատարումը, այլ դեպքերի և իրադարձությունների տեղի ունենալը...»:

✓ ՀՀ ֆինանսների նախարարի 13.03.2019թ. № 254-Ն հրամանի Հավելված 2-ի «Օրինակելի ձև Հ-2-ի լրացման պահանջների» 9-րդ կետ՝ «...Հ-2 հաշվետվության փաստացի ծախս սյունակում լրացվում են հաշվետու ժամանակաշրջանում հիմնարկի՝ համապատասխան փաստաթղթերով ձևակերպված իրական ծախսերը, ներառյալ կրեդիտորների չվճարված հաշիվները ...»:

✓ «Նաիրիտ գործարան» ՓԲԸ-ի հետ 2025 թվականի հունվարի 24-ին կնքված Պայմանագրի

➤ 3.2 կետ՝ «...կազմակերպության կողմից աշխատանքներն իրականացվում են հաշվետու տարվա ընթացքում, իսկ վճարումները կատարվում են ամսական՝ կանխավճարային ձևով, յուրաքանչյուր ամսվա առաջին տասը աշխատանքային օրվա ընթացքում...»:

➤ 2.3.5 կետ՝ «... կազմակերպությունը պարտավոր է ՀՀ օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով նախատեսված ձևով ու կարգով նախարարություն ներկայացնել ամսական, եռամսյակային և տարեկան հաշվետվություններ և տեղեկատվություն պայմանագրի կատարման ընթացքի մասին...»:

**Խեղաթյուրումը.** Ձև Հ-2 հաշվետվությունում ներկայացված «Փաստացի ծախս» և Ձև Հ-4 հաշվետվությունում ներկայացված «Հաշվետու ժամանակաշրջանի



վերջի դրությամբ դեբիտորական պարտքեր» ցուցանիշները խեղաթյուրված են 225,000.00 հազարական դրամով:

**Փաստերը, որոնց հիման վրա արձանագրվել է խեղաթյուրումը.**

Միջոցառման շրջանակում 2025 թվականի հունվարի 24-ին «Նաիրիտ գործարան» ՓԲԸ-ի հետ կնքված «Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին» պայմանագրով նախատեսված ամսական և եռամսյակային հաշվետվություններ և պայմանագրի կատարման ընթացքի մասին տեղեկատվություն կազմակերպությունը Նախարարություն չի ներկայացրել:

Նախարարությունում փաստացի ծախսը հիմնավորող սկզբնական հաշվառման փաստաթղթերի և ձևակերպված իրական ծախսերի բացակայության պայմաններում Ձև Հ-2 հաշվետվությունում ցույց է տրվել 225,000.00 հազ. դրամի փաստացի ծախս: Արդյունքում Ձև Հ-2 հաշվետվությունում «Փաստացի ծախս» և Ձև Հ-4 հաշվետվությունում «Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ դեբիտորական պարտք» ցուցանիշները խեղաթյուրված (համապատասխանաբար ավել և պակաս) են ներկայացվել 225,000.00 հազարական դրամով:

**Ընթացիկ եզրակացության «6. Խեղաթյուրումներ» բաժին կարելի է վերադառնալ հետևյալ հղմամբ՝ [6.4.3](#):**

**6.4.4. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության**

**«Արվեստների ծրագիր» ծրագրի (1168) միջոցառումներ՝**

**(1168-11001) «Օպերային և բալետային արվեստի ներկայացումներ»**

**(1168-11002) «Ազգային ակադեմիական թատերարվեստի ներկայացումներ»**

**(1168-11003) «Թատերական ներկայացումներ»**

**(1168-11004) «Երաժշտարվեստի և պարարվեստի համերգներ»**

**(1168-11006) «Ազգային ակադեմիական խմբերգային համերգներ»**

*6.4.4.1. Տնտեսագիտական դասակարգման «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» տնտեսագիտական հոդվածի (463700) փաստացի ծախսերի և դեբիտորական պարտքերի գումարի խեղաթյուրումները.*

**Գնահատման կիրառելի հիմքերը.**

✓ «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» օրենքի



- 11-րդ հոդվածի 1-ին մաս՝ «...հաշվապահական հաշվառման գրանցումները կատարվում են սկզբնական հաշվապահական հաշվառման փաստաթղթերի (այսուհետ՝ սկզբնական հաշվառման փաստաթղթեր) հիման վրա, որոնք արձանագրում են գործառնությունների կատարումը, այլ դեպքերի և իրադարձությունների տեղի ունենալը...»:
- ✓ ՀՀ ֆինանսների նախարարի 2019 թվականի մարտի 13-ի № 254-Ն հրամանի Հավելված 2-ի Օրինակելի ձև Հ-2-ի լրացման պահանջների 9-րդ կետ՝ «... հիմնարկի կատարած բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին Հ-2 հաշվետվության «Փաստացի ծախս» սյունակում լրացվում են հաշվետու ժամանակահատվածում հիմնարկի՝ համապատասխան փաստաթղթերով ձևակերպված իրական ծախսերը, ներառյալ կրեդիտորների չվճարված հաշիվները...»:
- ✓ Պայմանագրերի
  - 5.1 կետ՝ աշխատանքների ընդունման կարգը՝ «...սույն պայմանագրի 1-ին կետում նշված և կատարված միջոցառումների մասով, կազմակերպությունը ոչ ուշ քան յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 10-ը, իսկ տարեկան կտրվածքով ոչ ուշ քան 2026 թվականի հունվարի 20-ը, պետական մարմին է ներկայացնում եռամսյակում հիմնական կատարողական ցուցանիշները (ՀԿՑ) համաձայն Հավելված № 4-ի և ոչ ֆինանսական ցուցանիշների վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն Հավելված № 5-ի: Տարեկան ցուցանիշների և հաշվետվության ամփոփման արդյունքում տրված դրական եզրակացության հիման վրա պետական մարմնի կողմից կազմվում է հանձնման-ընդունման արձանագրություն՝ համաձայն Հավելված № 6-ի...»:

### ***Խեղաթյուրումը.***

Ձև Հ-2 հաշվետվությունում ներկայացված «Փաստացի ծախս» և Ձև Հ-4 հաշվետվությունում ներկայացված «Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ դեբիտորական պարտքեր» ցուցանիշները խեղաթյուրված է 5,411,417.34 հազարական դրամով:

### ***Փաստերը, որոնց հիման վրա արձանագրվել է խեղաթյուրումը.***

Փաստացի ծախսը հիմնավորող սկզբնական հաշվառման փաստաթղթերը՝ տարեկան ցուցանիշների և հաշվետվության ամփոփման արդյունքում տրված դրական եզրակացության հիման վրա Նախարարության կողմից կազմված



հանձնման-ընդունման արձանագրությունները (Հավելված N<sup>o</sup> 6) կազմվում են տարվա համար:

Հաշվետու տարվա 9 ամսվա ընթացքում հատկացված՝ 5,411,417.34 հազ. դրամ դրամաշնորհները, փաստացի (իրական) ծախսը հիմնավորող վերը նշված փաստաթղթերի բացակայության պայմաններում, դեբիտորական պարտքերին վերագրելու փոխարեն, ձևակերպվել և հաշվետվությամբ արտացոլվել են որպես փաստացի (իրական) ծախս:

Արդյունքում.

Ձև Հ-2 հաշվետվությունում «Փաստացի ծախս»-ը խեղաթյուրված (ավել) է ներկայացվել 5,411,417.34 հազ. դրամով, իսկ Ձև Հ-4 հաշվետվությունում «Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ դեբիտորական պարտքեր» ցուցանիշը խեղաթյուրված (պակաս է) ներկայացվել՝ նույն գումարի չափով:

Խեղաթյուրումներն ըստ միջոցառումների ներկայացվում են ստորև.

(հազ. դրամ)

Միջոցառում	Փաստացի ծախս	Հաշվետու ժամանակահատվածի վերջի դեբիտորական պարտքեր
1168-11001	1,555,234.20	1,555,234.20
1168-11002	259,646.50	259,646.50
1168-11003	1,323,159.20	1,323,129.20
1168-11004	2,005,017.34	2,005,017.34
1168-11006	268,360.10	268,360.10

**ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության մեկնաբանությունը.**

«...Հաշվեքննողի «..... փաստացի ծախսը հիմնավորող սկզբնական հաշվառման փաստաթղթերի և ձևակերպված իրական ծախսերի բացակայության պայմաններում» ձևակերպումը, ինչպես արդեն նշվել է, ևս անընդունելի է, քանի որ



ՊՈԱԿ-ները առանձին իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպությունները են, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» և «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքներով սահմանված կարգով ինքնուրույն են իրականացնում իրենց հաշվապահական հաշվառումը, և չկա «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» օրենքի 11-րդ հոդվածով սահմանված սկզբնական հաշվապահական հաշվառման փաստաթղթերը նախարարություն ներկայացնելու որևէ օրենսդրական պահանջ: Հաշվի առնելով նաև այդ փաստաթղթերի ահռելի ծավալը՝ դրանք նախարարությանը ներկայացնելը գործնականում անհնարին է: Անհրաժեշտության դեպքում, ինչպես նախարարությունը, այպես էլ ստուգում կամ հաշվեքննություն իրականացնող ցանկացած մարմին, կարող է ուսումնասիրել կազմակերպություններում վարվող սկզբնական հաշվապահական հաշվառման փաստաթղթերը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը, ինչպես նաև այդ կազմակերպություններում օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է իրականացվել ներքին աուդիտ:...» :

### **Հաշվեքննողների արձագանքը.**

Խեղաթյուրումների հանգեցրած անհամապատասխանություններն արձանագրվել են ոչ թե ՊՈԱԿ-ների այլ Նախարարության կողմից կատարված իրական ծախսերը հիմնավորող փաստաթղթերի՝ տվյալ դեպքում դրական եզրակացության հիման վրա կազմված հանձնման-ընդունման արձանագրությունների բացակայության վերաբերյալ:

Միաժամանակ հարկ է նշել, որ «Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին» պայմանագրերը ՀՀ կառավարության 27.01.2021 թվականի N 97-Ն որոշմամբ սահմանված պահանջներին համապատասխանեցման կարիք ունեն, քանի որ ինչպես սահմանված է որոշման 3-րդ կետի 3-րդ ենթակետով «Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման հիման վրա առանց մրցույթի անցկացման կնքված դրամաշնորհի տրամադրման պայմանագրերի նկատմամբ կիրառվում են սույն որոշման հավելվածի 20.1-ին, 36.1-ին և 36.2-րդ կետերով նախատեսված պայմանները»: Մասնավորապես, ըստ որոշման հավելվածի 20.1 կետի 1-ին ենթակետի «Տույժը հաշվարկվում է աշխատանքային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ», մինչդեռ պայմանագրի 6.5-րդ կետի համաձայն «...հաշվեկրկությունների ներկայացման համար սահմանված



ժամկետները չպահպանելու դեպքում...ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար...» և այլն:

**Ընթացիկ եզրակացության «6. Խեղաթյուրումներ» բաժին կարելի է վերադառնալ հետևյալ հղմամբ՝ [6.4.4](#):**

### **6.5. «Կենսաթոշակներ» տնտեսագիտական հոդվածի (474100) գումարի խեղաթյուրումները**

**6.5.1. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Կենսաթոշակային ապահովություն» ծրագրի (1102) «Աշխատանքային կենսաթոշակներ» միջոցառում (1102-12003)**

**Կատարող՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Միասնական սոցիալական ծառայություն**

*6.5.1.1. Տնտեսագիտական դասակարգման «Կենսաթոշակներ» հոդվածի (474100) փաստացի ծախսերի և դեբիտորական պարտքերի գումարի խեղաթյուրումները.*

#### **Գնահատման կիրառելի հիմքերը.**

✓ ՀՀ ֆինանսների նախարարի 13.03.2019թ. № 254-Ն հրամանի Հավելված 2-ի «Օրինակելի ձև Հ-2-ի լրացման պահանջների» 9-րդ կետ՝ Հ-2 հաշվետվության փաստացի ծախս սյունակում լրացվում են «...հաշվետու ժամանակահատվածում հիմնարկի՝ համապատասխան փաստաթղթերով ձևակերպված իրական ծախսերը, ներառյալ կրեդիտորների չվճարված հաշիվները...»:

✓ ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի № 670-Ն<sup>47</sup> որոշման Հավելված 1-ի 1-ին կետի 4-րդ ենթակետ՝ «...վճարման ցուցակը կենսաթոշակ (այդ թվում՝ չվճարված կենսաթոշակի գումար) կամ միանվագ դրամական վճար ստացող անձանց տվյալների և նրանց վճարման ենթակա գումարներին վերաբերող տվյալների ամբողջություն է, որի հիման վրա վճարվում են կենսաթոշակները (կենսաթոշակների վճարման ցուցակ ներառվում են այն կենսաթոշակառուների տվյալները, ում կենսաթոշակ վճարելն օրենքով սահմանված կարգով դադարեցված չէ) կամ միանվագ դրամական վճարները...»:

<sup>47</sup> «Կենսաթոշակ վճարելու կարգը հաստատելու մասին»



**Խեղաթյուրումը.** Ձև Հ-2 հաշվետվությամբ ներկայացված «Փաստացի ծախս» ցուցանիշը խեղաթյուրված է 113,875.70 հազ. դրամով: Ձև Հ-4 հաշվետվությունում ներկայացված «Հաշվետու ժամանակահատվածի վերջի դրությամբ դեբիտորական պարտքեր» ցուցանիշները խեղաթյուրված են համապատասխանաբար 13,807.70 հազ. դրամով և 8,191.50 հազ. դրամով:

**Փաստերը, որոնց հիման վրա արձանագրվել է խեղաթյուրումը.**

Ըստ վճարման ցուցակների շահառուներին վճարված գումարի չափը 2025 թվականի ինն ամիսների համար կազմել է 216,001,715.20 հազ. դրամ, այնինչ հաշվետու ժամանակահատվածի Ձև Հ-2 հաշվետվությունում փաստացի ծախսը ցույց է տրվել 216,115,590.90 հազ. դրամ, կամ 113,875.70 հազ. դրամով խեղաթյուրված (ավել):

Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ դեբիտորական պարտքերի գնահատման նպատակով կատարված վերահաշվարկներից պարզվել է, որ Ձև Հ-4 հաշվետվությունում «Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ դեբիտորական պարտքեր» ցուցանիշը խեղաթյուրված է 8,191.50 հազ. դրամով:

**ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության մեկնաբանությունը.**

«...2025 թվականի ինն ամիսների դրամարկղային ծախսը կազմել է 215,869,864.60 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 216,115,590.85 հազ. դրամ: Դեբիտորական պարտքը տարեսկզբին կազմել է 165,499.75 հազ. դրամ, հաշվետու ժամանակաշրջանի վերջում՝ 39,265.40 հազ. դրամ:

Արձանագրությունում նշվել է, որ 2024 թվականի տարեվերջի դրությամբ դեբիտորական պարտքի ցուցանիշը պակաս է ձևակերպվել 13,807.7 հազ. դրամի չափով: Նշված 13,807.7 հազ. դրամը որպես դեբիտորական պարտք հաշվառվել է 2025 թ. առաջին կիսամյակում՝ ընդհանուր 119,491.9 հազ. դրամի կազմում, որից 105,684.2 հազ. դրամը «Հայփոստ» ՓԲԸ մնացորդն է, իսկ 13,807.7 հազ. դրամը՝ բանկերի մնացորդը:

119,491.9 հազ. դրամը որպես շեղման գումար արտացոլված է կիսամյակային և ինն ամիսների ֆինանսական հաշվետվություններում (LS Finance հաշվետվության համակարգի «Շեղում» պատուհան):

Նշված ծրագրի գծով փաստացի ծախսը կազմում է  $215869864.60 + 165499.75 - 39265.40 + 119491.9 = 216115590.85$  հազ. դրամ:...»:

**Հաշվեքննողների արձագանքը.**



«Փաստացի ծախս» ցուցանիշը մեկնաբանությունում նշված կամ այլ ցուցանիշների օգտագործմամբ հաշվարկվող մեծություն չէ: Այն, ինչպես նշված է գնահատման կիրառելի հիմքում, հաշվետու ժամանակահատվածում հիմնարկի՝ համապատասխան փաստաթղթերով (տվյալ դեպքում վճարման ցուցակներով) ձևակերպված իրական՝ 216,001,715.20 հազ. դրամ ծախսերն են:

**Ընթացիկ եզրակացության «6. Խեղաթյուրումներ» բաժին կարելի է վերադառնալ հետևյալ հղմամբ՝ [6.5.1](#):**

**6.5.2. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Կենսաթոշակային ապահովություն» ծրագրի (1102) «Սպայական անձնակազմի և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակներ» միջոցառում (1102-12001)**

**Կատարող՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Միասնական սոցիալական ծառայություն**

*6.5.2.1. Տնտեսագիտական դասակարգման «Կենսաթոշակներ» հոդվածի (474100) փաստացի ծախսերի և դեբիտորական պարտքերի գումարի խեղաթյուրումները.*

**Գնահատման կիրառելի հիմքերը.**

✓ ՀՀ ֆինանսների նախարարի 13.03.2019թ. № 254-Ն հրամանի Հավելված 2-ի «Օրինակելի ձև Հ-2-ի լրացման պահանջների» 9-րդ կետ՝ Հ-2 հաշվետվության փաստացի ծախս սյունակում «...լրացվում են հաշվետու ժամանակահատվածում հիմնարկի՝ համապատասխան փաստաթղթերով ձևակերպված իրական ծախսերը, ներառյալ կրեդիտորների չվճարված հաշիվները...»:

✓ ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի № 670-Ն<sup>48</sup> որոշման Հավելված 1-ի 1-ին կետի 4-րդ ենթակետ՝ «...վճարման ցուցակը կենսաթոշակ (այդ թվում՝ չվճարված կենսաթոշակի գումար) կամ միանվագ դրամական վճար ստացող անձանց տվյալների և նրանց վճարման ենթակա գումարներին վերաբերող տվյալների ամբողջություն է, որի հիման վրա վճարվում են կենսաթոշակները (կենսաթոշակների վճարման ցուցակ ներառվում են այն կենսաթոշակառուների տվյալները, ում կենսաթոշակ վճարելն օրենքով սահմանված կարգով դադարեցված չէ) կամ միանվագ դրամական վճարները...»:

<sup>48</sup> «Կենսաթոշակ վճարելու կարգը հաստատվելու մասին»



**խեղաթյուրումը.** Ձև Հ-2 հաշվետվությունում ներկայացված «Փաստացի ծախս» ցուցանիշը խեղաթյուրված է 1,795.50 հազ. դրամով: Ձև Հ-4 հաշվետվությունում ներկայացված «Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ դեբիտորական պարտքեր» և «Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կրեդիտորական պարտքեր» ցուցանիշները խեղաթյուրված են համապատասխանաբար 433.79 հազ. դրամով և 7,529.27 հազ. դրամով:

**Փաստերը, որոնց հիման վրա արձանագրվել է խեղաթյուրումը.**

Ըստ վճարման ցուցակների շահառուներին վճարման ենթակա գումարի չափը 2025 թվականի ինն ամիսներին կազմել է 33,131,324.80 հազ. դրամ, այնինչ հաշվետու ժամանակահատվածի Ձև Հ-2 հաշվետվությունում «Փաստացի ծախս»-ը ցույց է տրվել 33,133,120.30 հազ. դրամ, կամ 1,795.50 հազ. դրամով խեղաթյուրված (ավել):

Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կրեդիտորական և դեբիտորական պարտքերի գնահատման նպատակով կատարված վերահաշվարկներից պարզվել է, որ Ձև Հ-4 հաշվետվությունում «Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ դեբիտորական պարտքեր» և «Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կրեդիտորական պարտքեր» ցուցանիշները խեղաթյուրված են համապատասխանաբար 433.79 հազ. դրամով և 7,529.29 հազ. դրամով:

**ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության մեկնաբանությունը.**

«...2025 թվականի ինն ամիսների դրամարկղային ծախսը կազմել է 33,117,582.23 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 33,133,120.32 հազ. դրամ: Դեբիտորական պարտքը փարեսկզբին կազմել է 3,564.6 հազ. դրամ, հաշվետու ժամանակաշրջանի վերջում՝ 433.79 հազ. դրամ:

2024 թվականի փարեվերջի դրությամբ դեբիտորական պարտքի ցուցանիշը պակաս է ձևակերպվել 2,648.7 հազ. դրամի չափով: Նշված գումարը հաշվառվել է 2025 թվականի առաջին կիսամյակում՝ ընդհանուր 12,407.3 հազ. դրամի կազմում, որից բանկերինը՝ 4,274.10 հազ. դրամ (2648.7 + 1625.4), իսկ «Հայփոստ» ՓԲԸ-ինը՝ 8,133.2 հազ. դրամ:

Վերը նշված գումարները որպես շեղում արտացոլված են կիսամյակային և ինն ամիսների ֆինանսական հաշվետվություններում (LS Finance հաշվետվության համակարգի «Շեղում» պատուհան):

Նշված ծրագրի գծով փաստացի ծախսը կազմում է 33117582.23 + 3564.6 - 433.79 + 12407.3 = 33133120.32 հազ. դրամ:...»:

### **Հաշվեքննողների արձագանքը.**

«Փաստացի ծախս» ցուցանիշը մեկնաբանությունում նշված կամ այլ ցուցանիշների օգտագործմամբ հաշվարկվող մեծությունն է: Այն, ինչպես նշված է գնահատման կիրառելի հիմքում, հաշվետու ժամանակահատվածում հիմնարկի՝ համապատասխան փաստաթղթերով (տվյալ դեպքում վճարման ցուցակներով) ձևակերպված իրական՝ 33,131,324.80 հազ. դրամ ծախսերն են:

Ընթացիկ եզրակացության «6. Խեղաթյուրումներ» բաժին կարելի է վերադառնալ հետևյալ հղմամբ՝ [6.5.2:](#)

## **6.6. «Այլ ընթացիկ դրամաշնորհներ» տնտեսագիտական հոդվածի (463900) դասակարգման և գումարի խեղաթյուրումները**


**6.6.1. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Կրթության որակի ապահովում» ծրագրի (1192) «Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող «Կրթության բարելավման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում» վարկային ծրագիր» միջոցառում՝ (1192-11023)**

*6.6.1.1. Տնտեսագիտական դասակարգման «Այլ ընթացիկ դրամաշնորհներ» (463900) և «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» (463700) հոդվածների դասակարգման խեղաթյուրումները.*

### **Գնահատման կիրառելի հիմքը.**

ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007 թվականի հունվարի 9-ի № 5-Ն հրամանը, մասնավորապես.

- 463000 խումբը (Ընթացիկ դրամաշնորհներ պետական հատվածի այլ մակարդակներին) ներառում է հետևյալ սինթետիկ հաշիվները՝ «Ընթացիկ դրամաշնորհներ պետական կառավարման հատվածին» (463100), «Ընթացիկ դրամաշնորհներ համայնքներին» (463200), «Պետական բյուջեից համայնքների բյուջեներին համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիաներ» (463300), «Օրենքների կիրարկման արդյունքում համայնքների բյուջեների կորուստների փոխհատուցում» (463400), «Այլ ընթացիկ դրամաշնորհներ համայնքներին» (463500), «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» (463700), «Ընթացիկ դրամաշնորհներ



պետական և համայնքների առևտրային կազմակերպություններին» (463800) և «Այլ ընթացիկ դրամաշնորհներ» (463900), Հավելված N°16:

**Խեղաթյուրումը.** ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի ինն ամիսների կատարման Ձև Հ-2 հաշվետվությունում դասակարգման խեղաթյուրմամբ են ներկայացված «Այլ ընթացիկ դրամաշնորհներ» տնտեսագիտական դասակարգման (463900) տնտեսագիտական հոդվածի (ավել է ներկայացված) և «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» (463700) տնտեսագիտական հոդվածի (պակաս է ներկայացված) դրամարկղային ծախսի ցուցանիշները 119,045.61 հազարական դրամով:

Բյուջետային ծախսը, դրա համար չնախատեսված տնտեսագիտական դասակարգման հոդվածով նախատեսելու և կատարելու արդյունքում, նույն հաշվետվությունում խեղաթյուրվել են նաև «Փաստացի ծախս» ցուցանիշները 119,045.61 հազարական դրամով (համապատասխանաբար՝ ավել և պակաս է ներկայացվել) «Այլ ընթացիկ դրամաշնորհներ» (463900) և «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» (463700) տնտեսագիտական դասակարգման հոդվածներով:

**Փաստերը, որոնց հիման վրա արձանագրվել է խեղաթյուրումը.**

Հաշվեքննությամբ պարզվել է, որ 2025 թվականի ինն ամիսների ընթացքում վերոնշյալ միջոցառման համար սույն հոդվածով ծախսած 197,919.38 հազ. դրամ գումարից՝ 119,045.61 հազ. դրամը թվով 24 ՊՈԱԿ-ների հետ կնքված դրամաշնորհային պայմանագրերով կատարված ծախսերն են, որոնք պետք է դասակարգվեին «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» (463700) հոդվածով, այնինչ դասակարգվել են «Այլ ընթացիկ դրամաշնորհներ» (463900) հոդվածով:

**ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության մեկնաբանությունը.**

«...Ընդունվել է ի գիտություն...»:

Ընթացիկ եզրակացության «6. Խեղաթյուրումներ» բաժին կարելի է վերադառնալ հետևյալ հղմամբ՝ [6.6.1](#):



**6.6.2. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Մեծ նվաճումների սպորտ» ծրագրի (1041) «ՀՀ առաջնություններին և միջազգային միջոցառումներին մասնակցության ապահովման համար մարզիկների նախապատրաստում և առաջնությունների անցկացում» միջոցառում՝ (1041-11001)**

*6.6.2.1. Տնտեսագիտական դասակարգման «Այլ ընթացիկ դրամաշնորհներ» (463900) և «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների առևտրային կազմակերպություններին» (463800) հոդվածների դասակարգման խեղաթյուրումները.*


**Գնահատման կիրառելի հիմքը.**

ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007 թվականի հունվարի 9-ի № 5-Ն հրամանը, մասնավորապես.

- 463000 խումբը (Ընթացիկ դրամաշնորհներ պետական հատվածի այլ մակարդակներին) ներառում է հետևյալ սինթետիկ հաշիվները՝ «Ընթացիկ դրամաշնորհներ պետական կառավարման հատվածին» (463100), «Ընթացիկ դրամաշնորհներ համայնքներին» (463200), «Պետական բյուջեից համայնքների բյուջեներին համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիաներ» (463300), «Օրենքների կիրարկման արդյունքում համայնքների բյուջեների կորուստների փոխհատուցում» (463400), «Այլ ընթացիկ դրամաշնորհներ համայնքներին» (463500), «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» (463700), «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների առևտրային կազմակերպություններին» (463800) և «Այլ ընթացիկ դրամաշնորհներ» (463900), Հավելված №16:

**Խեղաթյուրումը.** ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի ինն ամիսների կատարման Ձև Հ-2 հաշվետվությունում դասակարգման խեղաթյուրմամբ են ներկայացված «Այլ ընթացիկ դրամաշնորհներ» տնտեսագնտական դասակարգման (463900) տնտեսագիտական հոդվածի (ավել է ներկայացված) և «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների առևտրային կազմակերպություններին» (463800) տնտեսագիտական հոդվածի (պակաս է ներկայացված) դրամարկղային ծախսի ցուցանիշները 135,368.20 հազարական դրամով:

Բյուջետային ծախսը, դրա համար չնախատեսված տնտեսագիտական դասակարգման հոդվածով նախատեսելու և կատարելու արդյունքում, նույն հաշվետվությունում խեղաթյուրվել են նաև «Փաստացի ծախս» ցուցանիշները



135,368.20 հազարական դրամով (համապատասխանաբար՝ ավել և պակաս է ներկայացվել) «Այլ ընթացիկ դրամաշնորհներ» (463900) և «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների առևտրային կազմակերպություններին» (463800) տնտեսագիտական դասակարգման հոդվածներով:

***Փաստերը, որոնց հիման վրա արձանագրվել է խեղաթյուրումը.***

Միջոցառման շրջանակում 2025 թվականի 9 ամիսների ընթացքում վերոնշյալ միջոցառման համար ծախսված 1,241,393.2 հազ. դրամ գումարից՝ 135,368.20 հազ. դրամ դրամարկղային ծախսը «Սպորտի կառավարման կենտրոն» ՓԲԸ-ի հետ կնքված դրամաշնորհային պայմանագրով կատարված ծախսն է, որը պետք է դասակարգվեր (463800) «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների առևտրային կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածով, այնինչ դասակարգվել է (463900) «Այլ ընթացիկ դրամաշնորհներ» տնտեսագիտական դասակարգման հոդվածով: Արդյունքում ՀՀ պետական բյուջեի ինն ամիսների կատարման Ձև Հ-2 հաշվետվությունում նշված տնտեսագիտական հոդվածներով «Դրամարկղային ծախս» և «Փաստացի ծախս» ցուցանիշները խեղաթյուրված են 135,368.20 հազարական դրամով:

***ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության մեկնաբանությունը.***

*«...Ընդունվել է ի գիտություն...»:*

Ընթացիկ եզրակացության «6. Խեղաթյուրումներ» բաժին կարելի է վերադառնալ հետևյալ հղմամբ՝ [6.6.2](#):

**6.6.3. ՀՀ առողջապահության նախարարության «Առողջապահության ոլորտում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգ» ծրագրի (1126) «Առողջապահական համակարգի պետական առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններին ֆինանսական աջակցության հատկացում» միջոցառում (1126-12006)**

*6.6.3.1. Տնտեսագիտական դասակարգման «Այլ ընթացիկ դրամաշնորհներ» (463900), «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների առևտրային կազմակերպություններին» (463800) և «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» (463700) հոդվածների դասակարգման խեղաթյուրումները.*

***Գնահատման կիրառելի հիմքը.***



ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007 թվականի հունվարի 9-ի № 5-Ն հրամանը, մասնավորապես.

- 463000 խումբը (Ընթացիկ դրամաշնորհներ պետական հատվածի այլ մակարդակներին) ներառում է հետևյալ սինթետիկ հաշիվները՝ «Ընթացիկ դրամաշնորհներ պետական կառավարման հատվածին» (463100), «Ընթացիկ դրամաշնորհներ համայնքներին» (463200), «Պետական բյուջեից համայնքների բյուջեներին համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիաներ» (463300), «Օրենքների կիրարկման արդյունքում համայնքների բյուջեների կորուստների փոխհատուցում» (463400), «Այլ ընթացիկ դրամաշնորհներ համայնքներին» (463500), «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» (463700), «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների առևտրային կազմակերպություններին» (463800) և «Այլ ընթացիկ դրամաշնորհներ» (463900), Հավելված №16:

**Խեղաթյուրումը.** ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի ինն ամիսների կատարման Ձև Հ-2 հաշվետվությունում դասակարգման խեղաթյուրմամբ են ներկայացված դրամարկղային ծախսի ցուցանիշները «Այլ ընթացիկ դրամաշնորհներ» տնտեսագիտական դասակարգման (463900) տնտեսագիտական հոդվածով (ավել է ներկայացված) 288,839.70 հազ. դրամով, «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների առևտրային կազմակերպություններին» (463800) տնտեսագիտական հոդվածով (պակաս է ներկայացված) 144,677.00 հազ. դրամով և «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» (463700) տնտեսագիտական հոդվածով (պակաս է ներկայացված) :

Բյուջետային ծախսը, դրա համար չնախատեսված տնտեսագիտական դասակարգման հոդվածով նախատեսելու և կատարելու արդյունքում, նույն հաշվետվությունում խեղաթյուրվել են նաև «Փաստացի ծախս» և «Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ դեբիտորական պարտք» ցուցանիշները «Այլ ընթացիկ դրամաշնորհներ» տնտեսագիտական դասակարգման (463900) հոդվածով համապատասխանաբար 253,352.81 հազ. դրամով և 35,486.89 հազ. դրամով (ավել է ներկայացված), «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների առևտրային կազմակերպություններին» (463800) հոդվածով համապատասխանաբար 126,878.24 հազ. դրամով և 17,771.72 հազ. դրամով (պակաս է ներկայացված) և «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ



առևտրային կազմակերպություններին» (463700) հոդվածով համապատասխանաբար 126,474.57 հազ. դրամով և 17,715.17 հազ. դրամով (պակաս է ներկայացված):

***Փաստերը, որոնց հիման վրա արձանագրվել է խեղաթյուրումը.***

Հաշվետու ժամանակաշրջանում վերոնշյալ միջոցառման համար ծախսված 288,839.70 հազ. դրամ դրամարկղային ծախսը 9 ՓԲԸ-ի և 2 ՊՈԱԿ-ի հետ կնքված դրամաշնորհային պայմանագրերով կատարված ծախսերն են, որոնք պետք է դասակարգվեին (463800) «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների առևտրային կազմակերպություններին» տնտեսագիտական հոդվածով և (463700) Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին, այնինչ դասակարգվել են (463900) «Այլ ընթացիկ դրամաշնորհներ» տնտեսագիտական հոդվածով, ինչը հանգեցրել է ՀՀ պետական բյուջեի ինն ամիսների կատարման Ձև Հ-2 հաշվետվությունում «Դրամարկղային ծախս» ցուցանիշի խեղաթյուրման՝ «Այլ ընթացիկ դրամաշնորհներ» տնտեսագիտական դասակարգման հոդվածով 288,893.70 հազ. դրամով (ավել է արտացոլվել), (463800) «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների առևտրային կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածով 144,677.0 հազ.դրամով (պակաս է արտացոլվել) և (463700) «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածով 144,162.70 հազ. դրամով (պակաս է արտացոլվել):

Բյուջետային դասակարգման կիրառման կարգը չպահպանելու պատճառով Ձև Հ-2 և Ձև Հ-4 հաշվետվություններում խեղաթյուրվել են նաև նույն գործարքի հետ կապված «Փաստացի ծախս» և «Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ դեբիտորական պարտք» ցուցանիշները (463900) «Այլ ընթացիկ դրամաշնորհներ» տնտեսագիտական հոդվածով համապատասխանաբար 253,352.81 հազ. դրամով և 35,486.89 հազ. դրամով (ավել է արտացոլվել), (463800) «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների առևտրային կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածով համապատասխանաբար 126,878.24 հազ.դրամով և 17,771.72 հազ. դրամով (պակաս է արտացոլվել) և (463700) «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» տնտեսագիտական հոդվածով համապատասխանաբար 126,474.57 հազ. դրամով և 17,715.17 հազ. դրամով (պակաս է արտացոլվել):

***ՀՀ առողջապահության նախարարության մեկնաբանությունը.***



«...Նշված խեղաթյուրումը հաշվի առնելով հետագա որոշումների նախագծերը կշռջանառվեն ըստ ճիշտ հողվածային դասակարգումների...»:

**Ընթացիկ եզրակացության «6. Խեղաթյուրումներ» բաժին կարելի է վերադառնալ հետևյալ հղմամբ՝ [6.6.3](#):**

**6.6.4. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Գիտական և գիտատեխնիկական հետազոտություններ» ծրագրի (1162) «Գիտական և գիտատեխնիկական նպատակային-ծրագրային հետազոտություններ» միջոցառում (1162-11006)**

**Կատարող՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտե**

*6.6.4.1. Տնտեսագիտական դասակարգման «Այլ ընթացիկ դրամաշնորհներ» (463900) և «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» (463700) հողվածների դասակարգման խեղաթյուրումներ.*

**Գնահատման կիրառելի հիմքը.**

ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007 թվականի հունվարի 9-ի N° 5-Ն հրամանը, մասնավորապես.

- 463000 խումբը (Ընթացիկ դրամաշնորհներ պետական հատվածի այլ մակարդակներին) ներառում է հետևյալ սինթետիկ հաշիվները՝ «Ընթացիկ դրամաշնորհներ պետական կառավարման հատվածին» (463100), «Ընթացիկ դրամաշնորհներ համայնքներին» (463200), «Պետական բյուջեից համայնքների բյուջեներին համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիաներ» (463300), «Օրենքների կիրարկման արդյունքում համայնքների բյուջեների կորուստների փոխհատուցում» (463400), «Այլ ընթացիկ դրամաշնորհներ համայնքներին» (463500), «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» (463700), «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների առևտրային կազմակերպություններին» (463800) և «Այլ ընթացիկ դրամաշնորհներ» (463900), **Հավելված N°16**

**Խեղաթյուրումը.** ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի ինն ամիսների կատարման Ձև Հ-2 հաշվետվությունում դասակարգման խեղաթյուրմամբ են ներկայացված «Այլ ընթացիկ դրամաշնորհներ» տնտեսագնտական դասակարգման (463900) տնտեսագիտական հողվածի (ավել է ներկայացված) և «Ընթացիկ



դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» (463700) տնտեսագիտական հոդվածի (պակաս է ներկայացված) դրամարկղային ծախսի ցուցանիշները 79,580.90 հազարական դրամով:

***Փաստերը, որոնց հիման վրա արձանագրվել է խեղաթյուրումը.***

Հաշվետու ժամանակաշրջանում վերոնշյալ միջոցառման համար ծախսված 214,036.20 հազ.դրամ գումարից՝ 79,580.90 հազ. դրամ դրամարկղային ծախսը 5 ՊՈԱԿ-ների հետ կնքված դրամաշնորհային պայմանագրերով կատարված ծախսերն են, որոնք պետք է դասակարգվեին (463700) «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» տնտեսագիտական հոդվածով, այնինչ դասակարգվել են (463900) «Այլ ընթացիկ դրամաշնորհներ» տնտեսագիտական հոդվածով: Արդյունքում ՀՀ պետական բյուջեի ինն ամիսների կատարման Ձև Հ-2 հաշվետվությունում նշված տնտեսագիտական հոդվածներով «Դրամարկղային ծախս» ցուցանիշները խեղաթյուրված են 79,580.90 հազարական դրամով:

***ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի մեկնաբանությունը.***

*«...Ընդունվել է ի գիտություն...»:*

*6.6.4.2. Տնտեսագիտական դասակարգման «Այլ ընթացիկ դրամաշնորհներ» (463900) հոդվածի փաստացի ծախսերի և դեբիտորական պարտքերի գումարի խեղաթյուրումները.*

***Գնահատման կիրառելի հիմքերը.***

✓ ՀՀ ֆինանսների նախարարի 2019 թվականի մարտի 13-ի № 254-Ն հրամանի Հավելված 2-ի Օրինակելի ձև Հ-2-ի լրացման պահանջների 9-րդ կետ՝ «... հիմնարկի կատարած բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին Հ-2 հաշվետվության «Փաստացի ծախս» սյունակում լրացվում են հաշվետու ժամանակահատվածում հիմնարկի՝ համապատասխան փաստաթղթերով ձևակերպված իրական ծախսերը, ներառյալ կրեդիտորների չվճարված հաշիվները...:»

✓ «...Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի՝ «...հաշվապահական հաշվառման գրանցումները կատարվում են սկզբնական հաշվապահական հաշվառման փաստաթղթերի (այսուհետ՝ սկզբնական հաշվառման փաստաթղթեր)



հիման վրա, որոնք արձանագրում են գործառնությունների կատարումը, այլ դեպքերի և իրադարձությունների տեղի ունենալը...»:

- ✓ Կազմակերպությունների հետ կնքված պայմանագրերի<sup>49</sup>
  - 2.3.2 կետ՝ Կոմիտեն պարտավոր է «...ընդունել ծրագրի արդյունքը՝ համաձայն պայմանագրի օրացուցային պլանի...»:
  - 2.3.3 կետ՝ Կոմիտեն պարտավոր է «...ծրագրերի մասին ներկայացված տարեկան ընթացիկ և ամփոփիչ հաշվետվությունը (շարունակվող ծրագրերի դեպքում՝ ընթացիկ, ավարտվողների դեպքում՝ ամփոփիչ) ընդունել՝ հաշվի առնելով դրանց քննարկման համար ձևավորված մասնագիտական խորհրդի եզրակացությունները...»:
  - 5.1 կետ՝ «...Կոմիտեն պայմանագրային գինը վճարում է պայմանագրում նշված կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. Բյուջետային տարվա 1-ին եռամսյակում 20%, 2-րդ եռամսյակում 25 %, 3-րդ եռամսյակում 25 % և 4-րդ եռամսյակում 30 %...»:
  - 2.4.7. կետ՝ կազմակերպությանը պարտավոր է «...ծրագրի ավարտից հետո 20 օրյա ժամկետում Կոմիտե ներկայացնել ծրագրի իրականացման մասին տարեկան հաշվետվություն (շարունակվող ծրագրերի դեպքում՝ ընթացիկ, ավարտվողների դեպքում՝ ամփոփիչ) դրան կցելով ծրագրի հաշվետվության հանձման-ընդունման արձանագրություն...»:
  - 7-րդ կետ՝ «...պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է 1 (մեկ) տարի ժամկետով: Պայմանագրի գործողության ժամկետը դադարում է պայմանագրի 2.4.7-րդ ենթակետով նախատեսված հաշվետվության ընդունման մասին ակտը ստորագելու պահից...»:

**Խեղաթյուրումը.** Ձև Հ-2 հաշվետվությունում ներկայացված «Փաստացի ծախս» և Ձև Հ-4 հաշվետվությունում ներկայացված «Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ դեբիտորական պարտքեր» ցուցանիշները խեղաթյուրված են 210,567.60 հազարական դրամով:

---

<sup>49</sup> «Գիտական և գիտատեխնիկական գործունեության նպատակային-ծրագրային ֆինանսավորման պետական ծրագրի իրականացման համար պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին»



**Փաստերը, որոնց հիման վրա արձանագրվել է խեղաթյուրումը.**

Հաշվեքննությամբ պարզվել է, որ պայմանագրերի օրացուցային պլաններով աշխատանքների ավարտ է սահմանվել 2025 թվականի 4-րդ եռամսյակը: Հաշվետու ժամանակաշրջանում ծրագրերը ավարտված չեն: Կոմիտեում պայմանագրերով նախատեսված ընթացիկ և/կամ ամփոփիչ հաշվետվությունների, մասնագիտական խորհրդի եզրակացությունների և հաշվետվությունների ընդունման մասին ակտերի բացակայության պարագայում Ձև Հ-2 հաշվետվությունում ցույց է տրվել 210,567.60 հազ. դրամի փաստացի ծախս: Արդյունքում Ձև Հ-2 հաշվետվությունում «Փաստացի ծախս» ցուցանիշը խեղաթյուրված է 210,567.60 հազ. դրամով:

Նշված խեղաթյուրման արդյունքում Ձև Հ-4 հաշվետվությունում «Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ դեբիտորական պարտքեր» ցուցանիշները խեղաթյուրված է 210,567.60 հազ. դրամով:

**ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի մեկնաբանությունը.**

«...Ընդունվել է ի գիտություն...»:

Ընթացիկ եզրակացության «6. Խեղաթյուրումներ» բաժին կարելի է վերադառնալ հետևյալ հղմամբ՝ [6.6.4](#):

**6.6.5. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Գիտական և գիտատեխնիկական հետազոտություններ» ծրագրի՝ (1162) «Գիտաաշխատողներին գիտական աստիճանների համար տրվող հավելավճարներ» միջոցառում՝ (1162-12001)**

**Կատարող՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտե**

*6.6.5.1. Տնտեսագիտական դասակարգման «Այլ ընթացիկ դրամաշնորհներ» (463900), «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների առևտրային կազմակերպություններին» (463800) և «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» (463700) հոդվածների դասակարգման խեղաթյուրումը.*

**Գնահատման կիրառելի հիմքը.**



ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007 թվականի հունվարի 9-ի № 5-Ն հրամանը, մասնավորապես.

- 463000 խումբը Ընթացիկ դրամաշնորհներ պետական հատվածի այլ մակարդակներին) ներառում է հետևյալ սինթետիկ հաշիվները՝ «Ընթացիկ դրամաշնորհներ պետական կառավարման հատվածին» (463100), «Ընթացիկ դրամաշնորհներ համայնքներին» (463200), «Պետական բյուջեից համայնքների բյուջեներին համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիաներ» (463300), «Օրենքների կիրարկման արդյունքում համայնքների բյուջեների կորուստների փոխհատուցում» (463400), «Այլ ընթացիկ դրամաշնորհներ համայնքներին» (463500), «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» (463700), «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների առևտրային կազմակերպություններին» (463800) և «Այլ ընթացիկ դրամաշնորհներ», Հավելված №16:

**Խեղաթյուրումը.** ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի ինն ամիսների կատարման Ձև Հ-2 հաշվետվությունում դասակարգման խեղաթյուրմամբ են ներկայացված դրամարկղային ծախսի ցուցանիշները «Այլ ընթացիկ դրամաշնորհներ» տնտեսագիտական դասակարգման (463900) տնտեսագիտական հոդվածով (ավել է ներկայացված) 206,482.00 հազ. դրամով, «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների առևտրային կազմակերպություններին» (463800) տնտեսագիտական հոդվածով (պակաս է ներկայացված) 6,095.40 հազ. դրամով և «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» (463700) տնտեսագիտական հոդվածով (պակաս է ներկայացված) 200,386.60 հազ. դրամով

**Փաստերը, որոնց հիման վրա արձանագրվել է խեղաթյուրումը.**

Հաշվետու ժամանակաշրջանում վերոնշյալ միջոցառման համար ծախսված 301,719.21 հազ. դրամից՝ 6,095.40 հազ. դրամը թվով 4 ՓԲԸ-երի հետ կնքված դրամաշնորհի պայմանագրով կատարված ծախսերն են և 200,386.60 հազ. դրամը թվով 33 ՊՈԱԿ-ների հետ կնքված դրամաշնորհային պայմանագրերով կատարված ծախսերն են, որոնք պետք է դասակարգվեին համապատասխանաբար (463800) «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների առևտրային կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածով և (463700) «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածով, այնինչ դասակարգվել են (463900) «Այլ ընթացիկ դրամաշնորհներ» տնտեսագիտական



դասակարգման հոդվածով: Արդյունքում ՀՀ պետական բյուջեի ինն ամիսների կատարման Ձև Հ-2 հաշվետվությունում «Դրամարկղային ծախս» ցուցանիշները խեղաթյուրված են (463900) «Այլ ընթացիկ դրամաշնորհներ» տնտեսագիտական դասակարգման հոդվածով 206,482.00 հազ. դրամով (ավել է ներկայացվել), (463800) «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների առևտրային կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածով 6,095.40 հազ. դրամով (պակաս է ներկայացվել) և (463700) «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածով 200,386.60 հազ. դրամով (պակաս է ներկայացվել):

**ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի մեկնաբանությունը.**

«...Ընդունվել է ի գիտություն...»:

*6.6.5.2. Տնտեսագիտական դասակարգման «Այլ ընթացիկ դրամաշնորհներ» (463900) հոդվածի փաստացի ծախսերի և դեբիտորական պարտքերի գումարի խեղաթյուրումները.*

**Գնահատման կիրառելի հիմքերը.**

✓ ՀՀ ֆինանսների նախարարի 2019 թվականի մարտի 13-ի № 254-Ն հրամանի Հավելված 2-ի Օրինակելի ձև Հ-2-ի լրացման պահանջների 9-րդ կետ՝ «... հիմնարկի կատարած բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին Հ-2 հաշվետվության «Փաստացի ծախս» սյունակում լրացվում են հաշվետու ժամանակահատվածում հիմնարկի՝ համապատասխան փաստաթղթերով ձևակերպված իրական ծախսերը, ներառյալ կրեդիտորների չվճարված հաշիվները...»:

✓ «...Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մաս՝ «...հաշվապահական հաշվառման գրանցումները կատարվում են սկզբնական հաշվապահական հաշվառման փաստաթղթերի (այսուհետ՝ սկզբնական հաշվառման փաստաթղթեր) հիման վրա, որոնք արձանագրում են գործառնությունների կատարումը, այլ դեպքերի և իրադարձությունների տեղի ունենալը...»:



✓ Պայմանագրի<sup>50</sup>

- 3.3 կետ՝ «...Հանձնարարողը՝ Կոմիտեն, ֆինանսական միջոցները փոխանցում է Հանձնակատարի բանկային հաշվեհամարին յուրաքանչյուր ամսվա մինչև 15-ը՝ ըստ Կազմակերպությունների կողմից ներկայացված հավելավճար ստացող գիտական աշխատողների ճշգրտված թվաքանակի...»:
- 4.5.2. կետ՝ «...Հանձնակատարը պարտավոր է գիտական աշխատողներին գիտական աստիճանի համար ամենամսյա հավելավճարի տրամադրմանն առնչվող փաստաթղթերը և այլ անհրաժեշտ տեղեկատվությունը ներկայացնել սահմանված ժամկետում...»:

**Խեղաթյուրումը.** Ձև Հ-2 հաշվետվություններում ներկայացված «Փաստացի ծախս» և Ձև Հ-4 հաշվետվությունում ներկայացված «Հաշվետու ժամանակահատվածի վերջի դրությամբ դեբիտորական պարտքեր» ցուցանիշները խեղաթյուրված են 111,046.91 հազարական դրամով:

**Փաստերը, որոնց հիման վրա արձանագրվել է խեղաթյուրումը:**

Հաշվետու ժամանակաշրջանում 48 Կազմակերպությունների կողմից Նախարարություն են ներկայացվել միայն 2025 թվականի 1-ին կիսամյակի համար գիտաշխատողների թվաքանակներով հաշվարկված գիտաշխատողներին հավելավճարների տրամադրման 188,374.60 հազ. դրամի ընդհանրական հայտեր, այնինչ Ձև Հ-2 հաշվետվությունում ցույց է տրվել 299,421.51 հազ. դրամի փաստացի ծախս: Արդյունքում Ձև Հ-2 հաշվետվությունում «Փաստացի ծախս»-ը խեղաթյուրված (ավել) է ներկայացվել 111,046.91 հազ. դրամով:

Նշված խեղաթյուրումը հանգեցրել է Ձև Հ-4 հաշվետվությունում «Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ դեբիտորական պարտքեր» ցուցանիշի խեղաթյուրված (պակաս) ներկայացման 111,046.91 հազ. դրամով:

**ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի մեկնաբանությունը.**

«...Ընդունվել է ի գիտություն...»:

Ընթացիկ եզրակացության «6. Խեղաթյուրումներ» բաժին կարելի է վերադառնալ հետևյալ հղմամբ՝ [6.6.5:](#)

<sup>50</sup> 2025 թվականի հունվարի 17-ին թվով 48 կազմակերպությունների հետ կնքված«Գիտական աշխատողներին հավելավճարի վճարման նպատակով ֆինանսական միջոցների տրամադրման հանձնարարության մասին» պայմանագրեր:



**6.6.6. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Գիտական և գիտատեխնիկական հետազոտություններ» ծրագրի (1162) «Գիտական աստիճանաշնորհման և գիտամանկավարժական կոչումների շնորհում» միջոցառում (1162-11019)**

**Կատարող՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտե**

*6.6.6.1. Տնտեսագիտական դասակարգման «Այլ ընթացիկ դրամաշնորհներ» (463900) և «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» (463700) հոդվածներով դասակարգման խեղաթյուրումը.*

**Գնահատման կիրառելի հիմքը.**

ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007 թվականի հունվարի 9-ի № 5-Ն հրամանը, մասնավորապես.

- 463000 խումբը (Ընթացիկ դրամաշնորհներ պետական հատվածի այլ մակարդակներին) ներառում է հետևյալ սինթետիկ հաշիվները՝ «Ընթացիկ դրամաշնորհներ պետական կառավարման հատվածին» (463100), «Ընթացիկ դրամաշնորհներ համայնքներին» (463200), «Պետական բյուջեից համայնքների բյուջեներին համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիաներ» (463300), «Օրենքների կիրարկման արդյունքում համայնքների բյուջեների կորուստների փոխհատուցում» (463400), «Այլ ընթացիկ դրամաշնորհներ համայնքներին» (463500), «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» (463700), «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների առևտրային կազմակերպություններին» (463800) և «Այլ ընթացիկ դրամաշնորհներ» (463900), Հավելված №16:

**Խեղաթյուրումը.** ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի ինն ամիսների կատարման Ձև Հ-2 հաշվետվությունում դասակարգման խեղաթյուրմամբ են ներկայացված «Այլ ընթացիկ դրամաշնորհներ» տնտեսագնտական դասակարգման (463900) հոդվածի (ավել է ներկայացված) և «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» (463700) տնտեսագիտական հոդվածի (պակաս է ներկայացված) դրամարկղային ծախսի ցուցանիշները 1,612.00 հազարական դրամով:



Բյուջետային ծախսը, դրա համար չնախատեսված տնտեսագիտական դասակարգման հոդվածով նախատեսելու և կատարելու արդյունքում, նույն հաշվետվությունում խեղաթյուրվել է նաև «Փաստացի ծախս» ցուցանիշները 1,612.00 հազարական դրամով (համապատասխանաբար՝ ավել և պակաս է ներկայացվել) «Այլ ընթացիկ դրամաշնորհներ» (463900) և «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» (463700) տնտեսագիտական դասակարգման հոդվածներով:

***Փաստերը, որոնց հիման վրա արձանագրվել է խեղաթյուրումը.***

Հաշվետու ժամանակաշրջանում վերոնշյալ միջոցառման համար ծախսված 6,623.45 հազ. դրամ գումարից՝ 1,612.00 հազ. դրամը 9 ՊՈԱԿ-ների հետ կնքված դրամաշնորհային պայմանագրերով կատարված ծախսերն են, որոնք պետք է դասակարգվեին (463700) «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» տնտեսագիտական հոդվածով այնինչ դասակարգվել են (463900) «Այլ ընթացիկ դրամաշնորհներ» տնտեսագիտական հոդվածով, ինչը հանգեցրել է ՀՀ պետական բյուջեի ինն ամիսների կատարման Ձև Հ-2 հաշվետվությունում ներկայացված ցուցանիշների խեղաթյուրման 1,612.00 հազարական դրամով:

***ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի մեկնաբանությունը.***

*«...Ընդունվել է ի գիտություն...»:*

Ընթացիկ եզրակացության «6. Խեղաթյուրումներ» բաժին կարելի է վերադառնալ հետևյալ հղմամբ՝ [6.6.6](#):

**6.6.7. ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության «Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության էկոհամակարգի և շուկայի զարգացման ծրագիր» ծրագրի (1043) «Ձեռներեցության տեխնոլոգիական էկոհամակարգ» միջոցառում (1043-11009)**

*6.6.7.1. Տնտեսագիտական դասակարգման «Այլ ընթացիկ դրամաշնորհներ» (463900) և «Սուբսիդիաներ ոչ պետական ֆինանսական կազմակերպություններին» (452100) հոդվածներով դասակարգման խեղաթյուրումները.*

***Գնահատման կիրառելի հիմքը.***



«Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007 թվականի հունվարի 9-ի N° 5-Ն հրամանը, մասնավորապես

- դրամաշնորհները դրանք պետական մեկ միավորից մեկ այլ միավորին կամ օտարերկրյա պետությանը, կամ էլ միջազգային կազմակերպություններին տրամադրվող ոչ պարտադիր ընթացիկ կամ կապիտալ տրանսֆերտներ են...», Հավելված N° 16:
- Սուբսիդիաները (Կատեգորիա 450000)՝ դրանք պետական միավորների կողմից կազմակերպություններին տրամադրված ընթացիկ անհատույց վճարներն են, որոնք տրամադրվում են՝ հիմք ընդունելով վերջիններիս արտադրական գործունեության մակարդակը, արտադրվող, վաճառվող, արտահանվող և ներկրվող ապրանքների և ծառայությունների արժեքն ու քանակը: Սուբսիդիաները կարող են տրվել արտադրության մակարդակի, վաճառքի գնի վրա ազդելու համար կամ էլ կազմակերպությունների ծախսերը փոխհատուցելու նպատակով: Այս կատեգորիան ներառում է 452000 խումբը՝ «Սուբսիդիաներ ոչ պետական կազմակերպություններին»: Այս խումբը ներառում է ոչ պետական կազմակերպություններին տրամադրվող բոլոր սուբսիդիաները: Այս խմբի համար կիրառվում են հետևյալ ենթաանալիտիկ հաշիվները՝ (452111) «Սուբսիդիաներ ոչ պետական ոչ ֆինանսական կազմակերպություններին» և (452211) «Սուբսիդիաներ ոչ պետական ֆինանսական կազմակերպություններին», Հավելված N° 16 :

**Խեղաթյուրումը.** «Վ 2025 թվականի պետական բյուջեի ինն ամիսների կատարման Ձև Հ-2 հաշվետվությունում դասակարգման խեղաթյուրմամբ են ներկայացված «Այլ ընթացիկ դրամաշնորհներ» տնտեսագնտական դասակարգման (463900) տնտեսագիտական հոդվածի (ավել է ներկայացված) և «Սուբսիդիաներ ոչ պետական ոչ ֆինանսական կազմակերպություններին» (452100) տնտեսագիտական հոդվածի (պակաս է ներկայացված) դրամարկղային ծախսի ցուցանիշները 185,404.81 հազարական դրամով:

Բյուջետային ծախսը, դրա համար չնախատեսված տնտեսագիտական դասակարգման հոդվածով նախատեսելու և կատարելու արդյունքում, պետական բյուջեի ինն ամիսների կատարման Ձև Հ-2 և Ձև Հ-4 հաշվետվություններում խեղաթյուրվել են նաև «Փաստացի ծախս», «Տարեսկզբի դեբիտորական պարտքեր» և «Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ դեբիտորական պարտքեր» ցուցանիշները «Այլ ընթացիկ դրամաշնորհներ» (463900) և «Սուբսիդիաներ ոչ պետական ոչ ֆինանսական կազմակերպություններին» (463700) տնտեսագիտական դասակարգման հոդվածներով (ավել և պակաս են ներկայացված)



համապատասխանաբար 289,639.43 հազ. դրամով, 388,114.62 հազ. դրամով և 283,880.00 հազ. դրամով:

**Փաստերը, որոնց հիման վրա արձանագրվել է խեղաթյուրումը.**

Հաշվեքննությանը պարզվել է, որ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը 2024-2025 թվականներին ոչ պետական ոչ ֆինանսական կազմակերպությունների (ՓԲԸ-եր և ՍՊԸ-եր) հետ կնքված «Պետության կողմից դրամաշնորհի տրամադրման ֆինանսական աջակցության մասին» թվով 21 պայմանագրերով (համաձայնագրերով) կատարված 185,404.81 հազ. դրամ ծախսը ՀՀ պետական բյուջեի ինն ամիսների կատարման Ձև Հ-2 հաշվետվությունում (452100) «Սուբսիդիաներ ոչ պետական ֆինանսական կազմակերպություններին» տնտեսագիտական հովածով արտացոլելու փոխարեն արտացոլվել է (463900) «Այլ ընթացիկ դրամաշնորհներ» տնտեսագիտական հոդվածով, ինչը հանգեցրել է նշված տնտեսագիտական դասակարգման հոդվածներով ՀՀ պետական բյուջեի ինն ամիսների կատարման Ձև Հ-2 հաշվետվությունում նշված տնտեսագիտական հոդվածներով «Դրամարկղային ծախս» և «Փաստացի ծախս» ցուցանիշների դասակարգման խեղաթյուրման համապատասխանաբար 185,404.81 հազ. դրամով, 289,639.43 հազ. դրամով և Ձև Հ-4 հաշվետվությունում տարեսկզբի և հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ դեբիտորական պարտքերի ցուցանիշների դասակարգման խեղաթյուրման համապատասխանաբար 388,114.62 հազ. դրամով և 283,880.00 հազ. դրամով:

**Ընթացիկ եզրակացության «6. Խեղաթյուրումներ» բաժին կարելի է վերադառնալ հետևյալ հղմամբ՝ [6.6.7](#):**

**6.6.8. ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության «Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության էկոհամակարգի և շուկայի զարգացման ծրագիր» ծրագրի (1043) «Պետական աջակցություն տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում գործունեություն իրականացնող առևտրային կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին» միջոցառում (1043-11018)**

*6.6.8.1. Տնտեսագիտական դասակարգման «Այլ ընթացիկ դրամաշնորհներ» (463900) և «Սուբսիդիաներ ոչ պետական ֆինանսական կազմակերպություններին» (452100) հոդվածներով դասակարգման խեղաթյուրումները.*



### **Գնահատման կիրառելի հիմքերը.**


✓ ՀՀ կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 8-ի № 2328-Լ որոշման<sup>51</sup> Հավելվածի 8-րդ կետ՝ «...Շահառուին պետական աջակցությունը տրամադրվում է սույն կարգի 4-րդ կետով սահմանված պայմանները բավարարող ամսվա (ամիսների) համար, սույն կարգի 4-րդ կետի 2-րդ ենթակետին համապատասխան նոր ընդունված աշխատողներին հաշվեգրված աշխատավարձից և դրան հավասարեցված այլ վճարումներից, ինչպես նաև քաղաքացիաիրավական պայմանագրերով աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման դիմաց վճարված եկամուտներից պետական բյուջե վճարված եկամտային հարկի 50 տոկոսի չափով: Պետական աջակցությունը շահառուներին կարող է հաշվարկվել և տրամադրվել 2024 թվականի հունվար ամսվա և դրան հաջորդող տասնմեկ ամիսների համար...»:

✓ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007 թվականի հունվարի 9-ի № 5-Ն հրամանի Հավելված № 16՝

- «...Դրամաշնորհներ - դրանք պետական մեկ միավորից մեկ այլ միավորին կամ օտարերկրյա պետությանը, կամ էլ միջազգային կազմակերպություններին տրամադրվող ոչ պարտադիր ընթացիկ կամ կապիտալ տրանսֆերտներ են...»:
- «...Սուբսիդիաներ - (Կատեգորիա 450000)՝ դրանք պետական միավորների կողմից կազմակերպություններին տրամադրված ընթացիկ անհատույց վճարներն են, որոնք տրամադրվում են՝ հիմք ընդունելով վերջիններիս արտադրական գործունեության մակարդակը, արտադրվող, վաճառվող, արտահանվող և ներկրվող ապրանքների և ծառայությունների արժեքն ու քանակը: Սուբսիդիաները կարող են տրվել արտադրության մակարդակի, վաճառքի գնի վրա ազդելու համար կամ էլ կազմակերպությունների ծախսերը փոխհատուցելու նպատակով: Այս կատեգորիան ներառում է 452000 խումբը՝ «Սուբսիդիաներ ոչ պետական կազմակերպություններին»: Այս խումբը ներառում է ոչ պետական կազմակերպություններին տրամադրվող բոլոր սուբսիդիաները: Այս խմբի համար կիրառվում են հետևյալ ենթաանալիտիկ հաշիվները՝ (452111) «Սուբսիդիաներ ոչ պետական ոչ

---

<sup>51</sup> «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում գործունեություն իրականացնող առեվտրային կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին պետական աջակցության տրամադրման կարգը հաստատելու մասին»



Ֆինանսական կազմակերպություններին» և (452211) «Սուբսիդիաներ ոչ պետական ֆինանսական կազմակերպություններին»...»:

**Խեղաթյուրումը.** ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի ինն ամիսների կատարման Ձև Հ-2 հաշվետվությունում դասակարգման խեղաթյուրումը են ներկայացված «Այլ ընթացիկ դրամաշնորհներ» (463900) տնտեսագիտական հոդվածի (ավել է ներկայացված) և «Սուբսիդիաներ ոչ պետական ոչ ֆինանսական կազմակերպություններին» (452100) տնտեսագիտական հոդվածի (պակաս է ներկայացված) դրամարկղային ծախսի ցուցանիշները 5,157,816.16 հազարական դրամով:

Բյուջետային ծախսը, դրա համար չնախատեսված տնտեսագիտական դասակարգման հոդվածով նախատեսելու և կատարելու արդյունքում, նույն հաշվետվությունում խեղաթյուրվել են նաև «Փաստացի ծախս» ցուցանիշները 5,157,816.16 հազարական դրամով (համապատասխանաբար՝ ավել և պակաս է ներկայացվել) «Այլ ընթացիկ դրամաշնորհներ» (463900) և «Սուբսիդիաներ ոչ պետական ոչ ֆինանսական կազմակերպություններին» (452100) տնտեսագիտական դասակարգման հոդվածներով:

**Փաստերը, որոնց հիման վրա արձանագրվել է խեղաթյուրումը.**

ՀՀ կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 8-ի № 2328-Լ որշման հիման վրա ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը 2024-2025 թվականներին առևտրային կազմակերպությունների (ՓԲԸ-եր և ՍՊԸ-եր) հետ կնքված «Պետության կողմից դրամաշնորհի տրամադրման ֆինանսական աջակցության մասին» թվով 21 պայմանագրերով (համաձայնագրերով), հաշվետու ժամանակաշրջանում կատարված 5,157,816.16 հազ. դրամ ծախսը ՀՀ պետական բյուջեի ինն ամիսների կատարման հաշվետվությունում (452100) «Սուբսիդիաներ ոչ պետական ոչ ֆինանսական կազմակերպություններին» տնտեսագիտական հոդվածով արտացոլելու փոխարեն արտացոլել է (463900) «Այլ ընթացիկ դրամաշնորհներ» տնտեսագիտական հոդվածով, ինչը հանգեցրել է ՀՀ պետական բյուջեի ինն ամիսների կատարման Ձև Հ-2 հաշվետվությունում «Դրամարկղային ծախս» և «Փաստացի ծախս» ցուցանիշների խեղաթյուրման 5,157,816.16 հազարական դրամով:

**Ընթացիկ եզրակացության «6. Խեղաթյուրումներ» բաժին կարելի է վերադառնալ հետևյալ հղմամբ՝ [6.6.8](#):**



**6.6.9. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Կրթության, մշակույթի և սպորտի ոլորտներում միջազգային և սփյուռքի հետ համագործակցության զարգացում» ծրագրի (1215) «Օտարերկրյա պետություններում հայերենի և հայագիտական առարկաների դասավանդում» միջոցառում (1215-12001)**

*6.6.9.1. Տնփեսագիտական դասակարգման «Այլ ընթացիկ դրամաշնորհներ» (463900) հոդվածի փաստացի ծախսերի և դեբիտորական պարտքերի գումարի խեղաթյուրումները.*

**Գնահատման կիրառելի հիմքերը.**

✓ ՀՀ ֆինանսների նախարարի 2019 թվականի մարտի 13-ի № 254-Ն հրամանի Հավելված 2-ի Օրինակելի ձև Հ-2-ի լրացման պահանջների 9-րդ կետ՝ «... հիմնարկի կատարած բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին Հ-2 հաշվետվության «Փաստացի ծախս» սյունակում լրացվում են հաշվետու ժամանակահատվածում հիմնարկի՝ համապատասխան փաստաթղթերով ձևակերպված իրական ծախսերը, ներառյալ կրեդիտորների չվճարված հաշիվները...»:

✓ «...Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մաս՝ «...հաշվապահական հաշվառման գրանցումները կատարվում են սկզբնական հաշվապահական հաշվառման փաստաթղթերի (այսուհետ՝ սկզբնական հաշվառման փաստաթղթեր) հիման վրա, որոնք արձանագրում են գործառնությունների կատարումը, այլ դեպքերի և իրադարձությունների տեղի ունենալը...»:

✓ Հանձնարարության պայմանագրի<sup>52</sup>

- Հավելվածի «Իրականացվելիք միջոցառման համառոտ բովանդակություն» մաս՝ թվով 11 երկրների 15 կրթագիտական կառույցներում թվով 19 դասավանդողների կողմից 27 դասընթացների իրականացում, ինչպես նաև թվով մեկ խորհրդատուների, 4 հետազոտությունների և տագրությունների իրականացում:
- 5.2 կետ և Հավելված՝ Հանձնակատարը պայմանագրով սահմանված միջոցառման կատարման մասին հաշվետվությունը պետք է ներկայացնի 2025 թվականի դեկտեմբերի 30-ին:
- 3.1 կետ՝ պայմանագրում նշված գումարը հանձնակատարին կտրամադրվի համաձայն ՀՀ կառավարության 2024 թվականի

<sup>52</sup> 2025 թվականի մարտի 31-ի «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հետ կնքված Հանձնարարության պայմանագիր № 09.06.01.29



դեկտեմբերի 27-ի № 2060-Ն որշմամբ<sup>53</sup> նախատեսված եռամսյակային համամասնություններին համապատասխան:

**խեղաթյուրումը.** Ձև Հ-2 հաշվետվությունում ներկայացրած «Փաստացի ծախս» և Ձև Հ-4 հաշվետվությունում ներկայացրած «Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ դեբիտորական պարտքեր» ցուցանիշները խեղաթյուրված են 121,550.00 հազարական դրամով:

**Փաստերը, որոնց հիման վրա արձանագրվել է խեղաթյուրումը.**

Հաշվետում ժամանակաշրջանում Նախարարությունում փաստացի ծախսը հիմնավորող սկզբնական հաշվառման փաստաթղթերի և ձևակերպված իրական ծախսերի բացակայության պայմաններում (հաշվետվությունների ներկայացման ժամկետը 30.12.2025թ-ն է) Ձև Հ-2 հաշվետվությունում ցույց է տրվել 121,550.00 հազ. դրամի փաստացի ծախս: Արդյունքում Ձև Հ-2 հաշվետվությունում «Փաստացի ծախս» և Ձև Հ-4 հաշվետվությունում «Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ դեբիտորական պարտք» ցուցանիշները խեղաթյուրված են 121,550.0 հազարական դրամով:

**ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության մեկնաբանությունը.**

«...Կից ներկայացվում է «1215.12001. «Օտարերկրյա պետություններում հայերենի և հայագիտական առարկաների դասավանդում» բյուջեային միջոցառման շրջանակում Երևանի պետական համալսարանի հետ կնքված № 09.06.01.29 հանձնարարության պայմանագրի կատարման վերաբերյալ հաշվետվությունը՝ վճարման հանձնարարագրերը, որոնք ներկայացվել են կնքված պայամանագրով սահմանված կարգով:...»:

**Հաշվեքննողների արձագանքը.**

Վճարման հանձնարարագրերը փաստացի (իրական) ծախսը հիմնավորող փաստաթղթեր չեն: Փաստացի (իրական) ծախսի ճանաչման և ձևակերպման հաշվապահական հաշվառման փաստաթուղթ, տվյալ դեպքում, կարող է հանդիսանալ պայմանագրով նախատեսված աշխատանքների, միջոցառումների (...դասընթացների, խորհրդատվությունների, հետազոտությունների, տպագրությունների...) կատարման փաստն արձանագրող հաշվետվությունները, սկզբերը, արձանագրությունները և այլն:

<sup>53</sup> «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին»



Ընթացիկ եզրակացության «6. Խեղաթյուրումներ» բաժին կարելի է վերադառնալ հետևյալ հղմամբ՝ [6.6.9](#):

### **6.7. «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական հոդվածի (472900) գումարի խեղաթյուրումները**

**6.7.1. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Սոցիալական ապահովություն» ծրագրի (1205) «Ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստներ» միջոցառում (1205-12001)**

***Կատարող՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Միասնական սոցիալական ծառայություն***

*6.7.1.1. «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական հոդվածի (472900) փաստացի ծախսերի և դեբիտորական պարտքերի գումարի խեղաթյուրումները.*

#### **Գնահատման կիրառելի հիմքերը.**

✓ ՀՀ կառավարության 2014 թվականի հունիսի 6-ի № 635-Ն որոշման<sup>54</sup> Հավելված № 1-ի 39-րդ կետ՝ «...Նպաստն անկանխիկ կամ կանխիկ եղանակով վճարվում է նպաստառուի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի № 670-Ն որոշմամբ հաստատված կարգով...»

✓ ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի № 670-Ն որոշման Հավելված 1-ի 1-ին կետի 4-րդ ենթակետ՝ «...վճարման ցուցակը կենսաթոշակ (այդ թվում՝ չվճարված կենսաթոշակի գումար) կամ միանվագ դրամական վճար ստացող անձանց տվյալների և նրանց վճարման ենթակա գումարներին վերաբերող տվյալների ամբողջություն է, որի հիման վրա վճարվում են կենսաթոշակները (կենսաթոշակների վճարման ցուցակ ներառվում են այն կենսաթոշակառուների տվյալները, ում կենսաթոշակ վճարելն օրենքով սահմանված կարգով դադարեցված չէ) կամ միանվագ դրամական վճարները...»:

<sup>54</sup> «Ծերության նպաստը, հաշմանդամության նպաստը, կերակրողին կորցնելու դեպքում նպաստը, ինչպես նաև ծերության նպաստը, հաշմանդամության նպաստը կամ կերակրողին կորցնելու դեպքում նպաստը ստացող անձի մահվան դեպքում թաղման նպաստը նշանակելու և վճարելու կարգը և անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը հաստատելու մասին»



✓ ՀՀ ֆինանսների նախարարի 13.03.2019թ. № 254-Ն հրամանի Հավելված 2-ի «Օրինակելի ձև Հ-2-ի լրացման պահանջների» 9-րդ կետ՝ Հ-2 հաշվետվության «...փաստացի ծախս սյունակում լրացվում են հաշվետու ժամանակահատվածում հիմնարկի՝ համապատասխան փաստաթղթերով ձևակերպված իրական ծախսերը, ներառյալ կրեդիտորների չվճարված հաշիվները...»

**Խեղաթյուրումը.** Ձև Հ-2 հաշվետվությամբ ներկայացված «Փաստացի ծախս» ցուցանիշը խեղաթյուրված է 14,646.70 հազ. դրամով: Ձև Հ-4 հաշվետվությունում ներկայացված «Հաշվետու ժամանակահատվածի վերջի դրությամբ դեբիտորական պարտքեր» և «Հաշվետու ժամանակահատվածի վերջի դրությամբ կրեդիտորական պարտքեր» ցուցանիշները խեղաթյուրված են համապատասխանաբար 17,607.30 հազ. դրամով և 14,646.70 հազ. դրամով:

**Փաստերը, որոնց հիման վրա արձանագրվել է խեղաթյուրումը:**

Ըստ վճարման ցուցակների, շահառուներին վճարված գումարի չափը 2025 թվականի ինն ամիսների համար կազմել է 38,162,125.10 հազ. դրամ, այնինչ հաշվետու ժամանակահատվածի Ձև Հ-2 հաշվետվությունում փաստացի ծախսը ցույց է տրվել 38,176,772.80 հազ. դրամ, ինչը հանգեցրել է Ձև Հ-2 հաշվետվությունում «Փաստացի ծախս» ցուցանիշի խեղաթյուրման 14,646.70 հազ. դրամով:

Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կրեդիտորական և դեբիտորական պարտքերի գնահատման նպատակով կատարված վերահաշվարկներից պարզվել է, որ Ձև Հ-4 հաշվետվությունում «Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ դեբիտորական պարտքեր» և «Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կրեդիտորական պարտքեր» ցուցանիշները խեղաթյուրված են համապատասխանաբար 17,607.30 հազ. դրամով և 14,646.70 հազ. դրամով:

**ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության մեկնաբանությունը.**

«...2025 թվականի ինն ամիսների դրամարկղային ծախսը կազմել է 38,162,126.11 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 38,176,772.77 հազ. դրամ: Դեբիտորական պարտքը տարեսկզբին կազմել է 16,092.28 հազ. դրամ, հաշվետու ժամանակաշրջանի վերջում՝ 6,474.22 հազ. դրամ:

2024 թվականի տարեվերջի դրությամբ դեբիտորական պարտքի ցուցանիշը պակաս է ձևակերպվել 2,960.60 հազ. դրամի չափով: Նշված գումարը հաշվառվել է 2025 թվականի առաջին կիսամյակում՝ ընդհանուր 5,028.60 հազ. դրամի չափով (2960.60 + 2068.0), և որպես շեղում արտացոլված է կիսամյակային և ինն ամիսների

ֆինանսական հաշվետվություններում (LS Finance հաշվետվության համակարգի «Շեղում» պատուհան):

Նշված ծրագրի գծով փաստացի ծախսը կազմում է  $38162126.11 + 16092.28 - 6474.22 + 5028.60 = 38176772.77$  հազ. դրամ:...»:

#### **Հաշվեքննողների արձագանքը.**

Փաստացի ծախս» ցուցանիշը մեկնաբանությունում նշված կամ այլ ցուցանիշների օգտագործմամբ հաշվարկվող մեծությունն է: Այն, ինչպես նշված է գնահատման կիրառելի հիմքում, հաշվետու ժամանակահատվածում հիմնարկի՝ համապատասխան փաստաթղթերով (տվյալ դեպքում վճարման ցուցակներով) ձևակերպված իրական՝ 38,162,125.10 հազ. դրամ ծախսերն են:

Ընթացիկ եզրակացության «6. Խեղաթյուրումներ» բաժին կարելի է վերադառնալ հետևյալ հղմամբ՝ [6.7.1:](#)

#### **6.7.2. ՀՀ առողջապահության նախարարության բյուջետային 4 ծրագրերի 6 միջոցառումներ**

##### **Ծրագիր՝**

##### **5. «Մոր և մանկան առողջության պահպանում» ծրագրի (1200)՝**

5.1. «Երեխաների բժշկական օգնության ծառայություններ» միջոցառում (1200-11003),

5.2. «Մանկաբարձական բժշկական օգնության ծառայություններ» միջոցառում (1200-11001):

6. «Սոցիալապես անապահով և առանձին խմբերի անձանց բժշկական օգնություն» ծրագրի (1207)՝ «Սոցիալապես անապահով և առանձին խմբերի անձանց բժշկական օգնություն» միջոցառում (1207-11001):

7. «Առողջության առաջնային պահպանում» ծրագրի (1099)՝ «Առողջության առաջնային պահպանման բժշկական օգնության ծառայություններ» միջոցառում (1099-11001):

8. «Ոչ վարակիչ հիվանդությունների բժշկական օգնության ապահովում» ծրագրի (1202)՝

8.1. «Անհետաձգելի բժշկական օգնություն՝ այդ թվում սրտի վիրահատություններ» միջոցառում (1202-11002),

8.2. «Ուռուցքաբանական և արյունաբանական հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ» միջոցառում (1202-11004):



6.7.2.1. *Տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» (472900) հոդվածի դեբիտորական պարտքերի գումարի խեղաթյուրումը.*

**Գնահատման կիրառելի հիմքերը.**

✓ «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» օրենքի

➤ 10-րդ հոդվածի 3-րդ մաս՝ «...Կազմակերպությունը պետք է պատրաստի իր ֆինանսական հաշվետվությունները (բացառությամբ դրամական հոսքերի մասին տեղեկատվության)՝ կիրառելով հաշվապահական հաշվառման հաշվեգրման հիմունքը, որի համաձայն գործառնությունները, այլ դեպքերը և իրադարձությունները ճանաչվում են, երբ դրանք տեղի են ունենում և ներկայացվում են այն ժամանակահատվածների ֆինանսական հաշվետվություններում, որոնց դրանք վերաբերում են...»:

➤ 11-րդ հոդվածի 1-ին մաս՝ «...հաշվապահական հաշվառման գրանցումները կատարվում են սկզբնական հաշվապահական հաշվառման փաստաթղթերի (այսուհետ՝ սկզբնական հաշվառման փաստաթղթեր) հիման վրա, որոնք արձանագրում են գործառնությունների կատարումը, այլ դեպքերի և իրադարձությունների տեղի ունենալը...»:

✓ ՀՀՀՀՀՍ պարագրաֆ 2.22՝ «...Հաշվապահական հաշվառման հաշվեգրման հիմունքի համաձայն՝ գործառնությունները, այլ դեպքերը և իրադարձությունները ճանաչվում են, երբ դրանք տեղի են ունենում (և ոչ թե, երբ դրամական միջոցները կամ դրանց համարժեքները ստացվում կամ վճարվում են) և գրանցվում են հաշվապահական հաշվառման գրանցամատյաններում և ներկայացվում այն ժամանակաշրջանների ֆինանսական հաշվետվություններում, որոնց դրանք վերաբերում են...»:

✓ Օֆերտայի պայմանագրի<sup>55</sup>

➤ 3.2.2 կետ՝ Կատարողը պարտավոր է «...Յուրաքանչյուր ամսվա համար մինչև այդ ամսվան հաջորդող ամսվա 2-րդ աշխատանքային օրվա ավարտը Բուժօգնության շրջանակներում մատուցված ծառայությունների վերաբերյալ փոխհատուցման համար հիմք

<sup>55</sup> Պայմանագիրը համարվում է կնքված՝ կազմակերպությանը Պայմանագրի 1.1 կետով սահմանված ծրագրերի շրջանակներում շահառուներին ծառայություններ մատուցող ցանկում (այսուհետ՝ Ցանկ) ներառելու օրվանից: Ցանկը հաստատվել է ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի հունվարի 15-ի «Հրապարակային օֆերտայի որակավորման պայմանների գնահատման ձևերը և ձևաչափերը և դրանց լրացման ու գնահատման կարգը հաստատվելու մասին» թիվ 179-Լ հրամանով:



հանդիսացող էլեկտրոնային առողջապահության համակարգում ձևավորված HP-011 հաշվետվությունները և Պամանագրի 1.1 կետով սահմանված ծրագրերի միջոցառումներին համապատասխան առանձին հանձնման-ընդունման արձանագրությունները հաստատել էլեկտրոնային ստորագրությամբ և ներկայացնել հաշվարկային փաստաթղթեր, ինչպես նաև... »:

- 5.1 կետ՝ «...Պամանագրով Կատարողի ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար սահմանվում են տույժեր և տուգանքներ: Տուգանքի չափը կազմում է տվյալ ֆինանսական տարում փաստացի մատուցած դեպքերի մասով փոխհատուցման ներկայացված գումարի 0.5 տոկոսը, իսկ տույժերի չափը՝ 0.05 տոկոսը...»:
- 5.3 կետ՝ «...սույն պայմանագրով հաշվետվությունների ներկայացման ժամկետները խախտելու և առնվազն մեկ անգամ գրավոր նախազգուշացվելուց հետո նույն խախտումը կրկնվելու դեպքում Կատարողի նկատմամբ կիրառվում է տուգանք, իսկ ուշացման յուրաքանչյուր օրվա համար գանձվում է տույժ՝ հաշվետու ժամանակահատվածում ներկայացման ենթակա հաշվետվությունների ընդհանուր գումարի հաշվարկով...»:
- 5.9 կետ՝ «...Պայմանագրի շրջանակում նախատեսված տուգանքները և տույժերը հաշվարկվում և վճարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով...»:

**Խեղաթյուրումը.** Ձև Հ-4 հաշվետվությունում ներկայացված «Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ դեբիտորական պատքեր» ցուցանիշները խեղաթյուրված են 68,563.39 հազ. դրամով:

**Փաստերը, որոնց հիման վրա արձանագրվել է խեղաթյուրումը.**

Հաշվեքննության ընթացքում վերը նշված ծրագրային միջոցառումների շրջանակներում ուսումնասիրվել են 10-ական Կազմակերպությունների կողմից HP-011 հաշվետվությունների և համապատասխան հանձնման-ընդունման արձանագրությունների համակարգ մուտագրման ժամկետները: Պարզվել է, որ որոշ դեպքերում հաշվետվություններն ու հանձնման-ընդունման արձանագրությունները կազմակերպությունները համակարգ են մուտքագրել պայմանագրերով սահմանված ժամկետներից ուշ<sup>56</sup>, սակայն Նախարարության կողմից որևէ դեպքով գրավոր

<sup>56</sup> Ուշացումների դեպքերը միևնույն կազմակերպությունների կողմից տեղի են ունեցել մեկից ավելի անգամներ,



Նախագուշացում չի արվել: Նախարարության կողմից Պայմանագրերով սահմանված դրույթերի կիրառման դեպքում տուգանքների ընդհանուր գումարը կկազմեր 60,463.54 հազ. դրամ, տույժերի գումարը՝ 8,099.85 հազ. դրամ (բացառությամբ փետրվար ամսին ներկայացված հաշվետվությունների):

Խեղաթյուրումներն ըստ միջոցառումների ներկայացվում են ստորև.

հազար դրամ

Միջոցառում		Տույժ	Տուգանք	Ընդամենը
1200-11003	Երեխաների բժշկական օգնության ծառայություններ	2,160.10	14,206.08	16,366.18
1200-11001	Մանկաբարձական բժշկական օգնության ծառայություններ	790.27	5,957.28	6,747.55
1207-11001	Սոցիալապես անապահով և առանձին խմբերի անձանց բժշկական օգնություն	1,682.16	14,544.06	16,226.22
1099-11001	Առողջության առաջնային պահպանման բժշկական օգնության ծառայություններ	1,247.69	7,831.19	9,078.88
1202-11002	Անհետաձգելի բժշկական օգնություն՝ այդ թվում սրտի վիրահատություններ	1,082.72	7,490.49	8,573.21
1202-11004	Ուռուցքաբանական և արյունաբանական հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ	1,136.90	10,434.44	11,571.34
	Ընդամենը	8,099.85	60,463.54	68,563.39

Ընթացիկ եզրակացության «6. Խեղաթյուրումներ» բաժին կարելի է վերադառնալ հետևյալ հղմամբ՝ [6.7.2](#):

**6.8. «Առողջապահական և լաբորատոր նյութեր» տնտեսագիտական հոդվածի (426600) գումարի խեղաթյուրումը**



**6.8.1. ՀՀ առողջապահության նախարարության «Դեղապահովում» ծրագրի (1188) «Դեղորայքի տրամադրում ամբուլատոր-պոլիկլինիկական, հիվանդանոցային բուժօգնություն ստացողներին և հատուկ խմբերում ընդգրկված ֆիզիկական անձանց» միջոցառում (1188-12001)**

*6.8.1.1. Տնտեսագիտական դասակարգման «Առողջապահական և լաբորատոր նյութեր» հոդվածի (426600) դրամարկղային ծախսի գումարի խեղաթյուրումը.*

**Գնահատման կիրառելի հիմքերը.**

ՀՀ առողջապահության նախարարության և ոչ ռեզիդենտ կազմակերպության հետ կնքված թվով 4 պայմանագրերի<sup>57</sup>

- 3.1-րդ կետ՝ «... ԱԱՀ-ն պետք է վճարվի ապրանքի ՀՀ ներմուծման ժամանակ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից<sup>58</sup> կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը: Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը»:
- 1.1-րդ կետ՝ «... Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի № 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված և տվյալ ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրությամբ՝ նույն ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող գնահատված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար...»:
- Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցեր՝ մատակարարման հասցեն սահմանված է ք. Երևան, Տիտոգրադյան 14/10:

<sup>57</sup> Պեղծության կարիքների համար ապրանքների (դեղերի) մատակարարման ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/13/1-2, ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/13-3, ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2023/2/1-1-2025 և ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2024/14-1 պայմանագրեր՝ 10,253,183.00 ԱՄՆ դոլար ընդհանուր գումարով՝ ներառյալ ԱԱՀ-ն:

<sup>58</sup> պայմանագրերի անգլերեն տարբերակում ներառված է «...The price of the contract includes all the fees (expenses) made by Seller for the insurance of the performance of the contract, including taxes, duties... »:



**Խեղաթյուրումը.** ՀՀ պետական բյուջեի ինն ամիսների կատարման Ձև Հ-2 հաշվետվությունում ներկայացված «Դրամարկղային ծախս» ցուցանիշը խեղաթյուրված է 29,595.56 հազ. դրամով:

**Փաստերը, որոնց հիման վրա արձանագրվել է խեղաթյուրումը.**

2025 թվականին կնքվել են ոչ ռեզիդենտ կազմակերպության հետ կնքված թվով 4 պայմանագրերում փոփոխություններ և լրացումներ կատարելու 4 համաձայնագրեր, որոնցով սահմանվել են 2025 թվականի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցերը և վճարման ժամանակացույցերը: Գնման ժամանակացույցերով սահմանվել են 2025 թվականին մատակարարվող ապրանքների առավելագույն քանակները, ժամկետները, գինը ԱԱՀ-ով՝ 2,791,121.00 ԱՄՆ դոլար, գինը առանց ԱԱՀ-ի՝ 2,325,943.13 ԱՄՆ դոլար, և մատակարարման հասցեն՝ ք. Երևան, Տիտոգրադյան 14/10: Վճարման ժամանակացույցերով տարանջատված ցույց են տրվել վաճառողին վճարվող գումարը՝ 2,325,943.13 ԱՄՆ դոլար և ՀՀ պետական բյուջե վճարվող գումարը՝ 465,177.87 ԱՄՆ դոլար: Վերջինս համապատասխանում է ԱԱՀ-ի չափին:

Հաշվեքննությամբ պարզվել է, որ

- ✓ Գնման առարկաները (ապրանքի ծածկագիր՝ 3002....) ներառված են «Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող՝ ակցիզային հարկով հարկման ոչ ենթակա այն ապրանքների ցանկը հաստատելու մասին, որոնց ներմուծումն ազատված է ավելացված արժեքի հարկից» 29.06.2001թ. № ՀՕ-195 ՀՀ օրենքով սահմանված ավելացված արժեքի հարկից ազատված ապրանքների ցանկում:
- ✓ Վաճառողը պայմանագրով նախատեսված ապրանքները մատակարարել է ոչ թե ք. Երևան, Տիտոգրադյան 14/10 հասցեով, այլ մինչև ՀՀ մաքսային սահման:
- ✓ Վճարման ենթակա 29,595.56 հազ. դրամ մաքսատուրքը և մաքսավճարը վճարվել են Նախարարության կողմից, սակայն այն չի նվազեցվել Վաճառողին վճարված գումարից, ինչը հանգեցրել է ՀՀ պետական բյուջեի ինն ամիսների կատարման Ձև Հ-2 հաշվետվությունում 426600 Հոդվածի՝ «Առողջապահական և լաբորատոր նյութեր» գծով «Դրամարկղային ծախս» ցուցանիշի խեղաթյուրման 29,595.56 հազ. դրամով:

**ՀՀ առողջապահության նախարարության մեկնաբանությունը.**



«...Հաշվեքննողի կողմից ներկայացվածը ոչ թե խեղաթյուրում է, այլ ոչ ռեզիդենտ մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկի ներկայացման ձևը՝ վերջինս գնային առաջարկը ներկայացրել է ԱԱՀ-ով, իսկ առանց ԱԱՀ գումարը (վաճառողին վճարվողը) հենց մինչև ՀՀ մաքսային սահման հաշվարկված գումարն է, իսկ ԱԱՀ-ի փակ ենթադրվել են հենց մաքսային վճարները, մաքսատուրքը և այլն: Քանի որ պայմանագրի կողմ է հանդիսացել ոչ ռեզիդենտ կազմակերպություն, անհրաժեշտություն է առաջացել պայմանագիրը կնքելուց խմբագրել և էլեկտրոնային աճուրդ համակարգում վերջնական ներբեռնել խմբագրված երկլեզու պայմանագիրը, որում խմբագրվել է նաև վճարման ժամանակացույցը, ինչի վերաբերյալ սույն թվականի հունիսի 26-ին Առողջապահության նախարարությունը դիմել է Ֆինանսների նախարարություն պարզաբանում ստանալու համար՝ արդյոք թույլատրելի է նման փոփոխություններ կատարել ոչ ռեզիդենտ մասնակցի հետ պայմանագիր կնքելուց, որին ի պատասխան ստացվել է պարզաբանում, որ գրությամբ ներկայացված փոփոխությունները չեն հանդիսանում ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգով սահմանված՝ պայմանագրերի հիմնական պայմանների փոփոխություններ, ուստի էլեկտրոնային աճուրդով գնման ընթացակարգերի արդյունքում կնքվող պայմանագրերի դեպքում այդ պայմանները կարող են խմբագրվել՝ կնքված պայմանագրում փոփոխություններ կատարելու ձևով: Միաժամանակ այն հարցին որը վերաբերում է պայմանագրի գինը արտարժույթով սահմանելու վերաբերյալ դիտարկմանը վերջիններս հայտնել են, որ եթե քննարկվող դեպքում ընտրված մասնակիցը ՀՀ օրենսդրության իմաստով համարվում է ոչ ռեզիդենտ, ապա վերջինի հետ գրավոր ձևով կնքվող պայմանագրով գնանշումը կարող է կատարվել արտարժույթով: Հաշվեքննողի կողմից դիտարկված պայմանագրերից երկուսը երեք փարվա ժամկետով պայմանագրեր են, իսկ մյուս երկուսը 2025 թվականի կարիքների համար հայտարարված գնման ընթացակարգերի արդյունքում կնքված պայմանագրեր, ուստի հաշվեքննության արդյունքում արձանագրված վրիպակներից խուսափելու համար ոչ ռեզիդենտ մասնակիցների հետ քննարկումներին մեթոդական ցուցումներ են տրվել 2026 թվականից հետո հայտարարված գնման ընթացակարգերին գնային առաջարկների ներկայացման վերաբերյալ:...»:

**Հաշվեքննողների արձագանքը.**

Մեկնաբանությամբ նշված «...առանց ԱԱՀ գումարը (վաճառողին վճարվողը) հենց մինչև ՀՀ մաքսային սահման հաշվարկված գումարն է, իսկ ԱԱՀ-ի փակ ենթադրվել են հենց մաքսային վճարները, մաքսատուրքը...» չեն բխում պայմանագրերով սահմանված պայմաններից: Այսպես.



Հաշվեքննությամբ արձանագրվել է, որ Գնման ժամանակացույցերով սահմանվել է 2025 թվականին մատակարարվող ապրանքների առավելագույն քանակները, ժամկետները, գինը՝ ԱԱՀ-ով՝ 2,791,121.00 ԱՄՆ դոլար, առանց ԱԱՀ-ի՝ 2,325,943.13 ԱՄՆ դոլար և մատակարարման հասցեն՝ ք. Երևան, Տիգրադրադյան 14/10, որը ՀՀ մաքսային սահմանը չէ: Վճարման ժամանակացույցերով փարանջարվել են վաճառողին վճարվող 2,325,943.13 ԱՄՆ դոլար և ՀՀ պետական բյուջե վճարման ենթակա, ԱԱՀ-ի չափով հաշվարկված՝ 465,177.87 ԱՄՆ դոլար գումարները, որոնք փոխանցվել են համապատասխանաբար վաճառողին և պետական բյուջե: Վաճառողին վճարված 2,325,943.13 ԱՄՆ դոլար գումարը, պայմանագրերի 3.1 կետի համաձայն ներառել է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, փոփոխությունները և այլ ծախսերը, մինչդեռ մաքսատուրքի և մաքսավճարի՝ 29,595.56 հազ. դրամ գումարը վճարվել է Նախարարության կողմից, առանց Վաճառողին վճարման ենթակա գումարից նվազեցնելու, ինչը հանգեցրել է դրամարկղային ծախսի (ավել է հատկացվել) այդ գումարի չափով խեղաթյուրման:

**Ընթացիկ եզրակացության «6. Խեղաթյուրումներ» բաժին կարելի է վերադառնալ հետևյալ հղմամբ՝ [6.8.1](#):**

**6.9. «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» տնտեսագիտական հոդվածի (511300) դասակարգման և գումարի խեղաթյուրումները**

**6.9.1. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության «Ճանապարհային ցանցի բարելավում» ծրագրի (1049) «Տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգում» միջոցառում (1049-21002)**

*6.9.1.1. Տնտեսագիտական դասակարգման «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» տնտեսագիտական հոդվածի (511300) դեբիտորական պարտքերի գումարի խեղաթյուրումը.*

**Գնահատման կիրառելի հիմքերը.**

- ✓ «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» օրենքի
  - 10-րդ հոդվածի 3-րդ մաս՝ «...Կազմակերպությունը պետք է պատրաստի իր ֆինանսական հաշվետվությունները (բացառությամբ դրամական



հոսքերի մասին տեղեկատվության՝ կիրառելով հաշվապահական հաշվառման հաշվեգրման հիմունքը, որի համաձայն գործառնությունները, այլ դեպքերը և իրադարձությունները ճանաչվում են, երբ դրանք տեղի են ունենում և ներկայացվում են այն ժամանակահատվածների ֆինանսական հաշվետվություններում, որոնց դրանք վերաբերում են...»:

- 11-րդ հոդվածի 1-ին մաս՝ «...հաշվապահական հաշվառման գրանցումները կատարվում են սկզբնական հաշվապահական հաշվառման փաստաթղթերի (այսուհետ՝ սկզբնական հաշվառման փաստաթղթեր) հիման վրա, որոնք արձանագրում են գործառնությունների կատարումը, այլ դեպքերի և իրադարձությունների տեղի ունենալը...»:

✓ ՀՀՀՀՍ պարագրաֆ 2.22՝ «...Հաշվապահական հաշվառման հաշվեգրման հիմունքի համաձայն՝ գործառնությունները, այլ դեպքերը և իրադարձությունները ճանաչվում են, երբ դրանք տեղի են ունենում (և ոչ թե, երբ դրամական միջոցները կամ դրանց համարժեքները ստացվում կամ վճարվում են) և գրանցվում են հաշվապահական հաշվառման գրանցամատյաններում և ներկայացվում այն ժամանակաշրջանների ֆինանսական հաշվետվություններում, որոնց դրանք վերաբերում են...»:

✓ Պետության կարիքների համար կապալային աշխատանքների կատարման պետական գնման պայմանագրի<sup>59</sup>

- 3.4.5 կետ՝ պայմանագրում սահմանված ժամկետը խախտելու և պատվիրատուի կողմից աշխատանքների կատարման նոր ժամկետ սահմանելու դեպքում Կապալառուն պարտավոր է ապահովել աշխատանքների կատարումը սահմանված ժամկետում և ուշացրած յուրաքանչյուր օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:
- 6.2 կետ՝ աշխատանքների կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ կատարման ենթակա սակայն չկատարված աշխատանքի գնի 0.1 %-ի չափով:

<sup>59</sup> Պետության կարիքների համար կապալային աշխատանքների կատարման պետական գնման ՏԿԵՆ-ՀՐՄԱՇՁԲ-2023/31Ը պայմանագիր



**Խեղաթյուրումը.** Ձև Հ-4 հաշվետվությունում ներկայացված «Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ դեբիտորական պատքեր» ցուցանիշը խեղաթյուրված է 18,858.63 հազ. դրամով:

**Փաստերը, որոնց հիման վրա արձանագրվել է խեղաթյուրումը.**

Պայմանագրի համաձայնագրերով աշխատանքների ավարտի ժամկետ է սահմանվել 2024 թվականի օգոստոսը: Սահմանված ժամկետում Կապալառուն աշխատանքները չի ավարտել: Չկատարված 100,848.27 հազ. դրամի աշխատանքների համար Պատվիրատուի կողմից սահմանվել է աշխատանքների կատարման նոր ժամկետ՝ 2025 թվականի սեպտեմբերի 10-ը: Նշված ժամկետում աշխատանքները չեն ավարտվել, սակայն չի հաշվարկել և ձևակերպել պայմանագրով սահմանված տույժը, ինչը հաշվետու ժամանակաշրջանի համար կազմում է 18,858.63 հազ. դրամ:

**Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության մեկնաբանությունը.**

«...«Ծովագյուղի ՃՇՇ» ՍՊԸ-ի հետ կնքված թիվ ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2023/31Շ պայմանագրով իրականացվող Սևանի տրանսպորտային հանգույցի հիմնանորոգման աշխատանքների ժամանակին չկատարումը պայմանավորված է եղել հուլիս-օգոստոս ամիսներին տրանսպորտային սեզոնի ընթացքում տվյալ տեղամասում առաջացող խցանումներից զերծ մնալու նպատակով Պատվիրատուի առաջարկով աշխատանքների ժամանակավոր դադարեցմամբ, որի հետևանքով աշխատանքների կատարումը ձգձգվել է և արդեն նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին այդ տարածաշրջանում հնարավոր չի եղել իրականացնել ասֆալտապատման աշխատանքներ՝ ոչ բարենպաստ եղանակային պայմաններից ելնելով: Արդյունքում, հիմք ընդունելով ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2022 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 28-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 32-01-2022 «Ավտոմոբիլային ճանապարհներ» Հայաստանի Հանրապետության շինարարական նորմերի 462-րդ կետի պահանջները, համաձայն որի՝ օրգանական կապակցանյութերով ամրացված գրունտներից հիմքերն ու ծածկերը թույլատրվում է տեղադրել չոր եղանակին, օդի 10°C-ից բարձր ջերմաստիճանի պայմաններում, թիվ ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2023/31Շ պայմանագրով նախատեսված աշխատանքների 2024 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ չկատարված մասը տեղափոխվել է 2025 թվական, և ՀՀ կառավարության 12.12.2024թ. թիվ 1978-Ն որոշմամբ N ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2023/31Շ պայմանագրի շրջանակներում 2024 թվականի աշխատանքների համար սահմանված, սակայն չօգտագործված գումարը նվազեցվել է:



Միաժամանակ, հաշվի առնելով, որ N ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2023/31Շ պայմանագրի ժամկետը լրացել է 23.08.2024թ.-ին, իսկ 2024 թվականին չկատարված աշխատանքները 2025 թվականին իրականացնելու համար ՀՀ կառավարության 05.06.2025թ. թիվ 727-Ն որոշմամբ հատկացված ֆինանսական միջոցների շրջանակներում «Ծովագյուղի ՃՇՇ» ՍՊԸ-ի հետ 2025 թվականի օգոստոսի 19-ին կնքվել է թիվ 8 համաձայնագիրը, ինչպես նաև այն, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ պարզվիրատուն պայմանագրով ֆինանսական պարտավորություններ ստանձնում է այդ գնումն իրականացնելու համար պահանջվող ֆինանսական հատկացումներ նախատեսված լինելու դեպքում և այդ հատկացումների շրջանակներում, հետևաբար նկատի ունենալով վերը նշվածը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 421 և 422 հոդվածների պահանջներով՝ 2023 թվականի օգոստոսի 30-ին կնքված N ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2023/31Շ պայմանագրի 6.2-րդ կետով նախատեսված պայմանները հաշվարկվել են 2024 թվականի օգոստոսի 24-ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 1-ը և 2025 թվականի օգոստոսի 19-ին կնքված թիվ 8 համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև աշխատանքների արդյունքներն ամբողջությամբ պարզվիրատուին հանձնելու օրը՝ 09.09.2025թ: Քանի որ կատարողականը պարտասխանաբար ստորաբաժանման կողմից Նախարարություն ներկայացվել է 16.10.2025թ, ուստի պայմանագրով սահմանված պայմանները 2025 թվականի պետական բյուջեի ինն ամիսների կատարման հաշվեքննության ժամանակ չի արտացոլվել: Հաշվետու ժամանակաշրջանի համար 22.11.24թ.- 30.11.24թ. և 19.08.25թ-09.09.25թ. (22 աշխատանքային օրվա համար) պայմանագրով կազմվել է 2,218.662 հազար դրամ, որն էլ փոխանցվել է ՀՀ պետական բյուջե:...»:

**Հաշվեքննողների արձագանքը.**

➤ Աշխատանքները հույս-օգոստոս ամիսներին ժամանակավոր դադարեցնելու Պարզվիրատուի առաջարկի որևէ ապացույց հաշվեքննությանը և մեկնաբանություններում չի ներկայացվել: Չեն ներկայացվել նաև աշխատանքների դադարեցման որևէ ապացույցներ (օրինակ՝ բացակայում են շինարարության վարման մատյանում դադարեցման և վերսկսման մասին նշումներ, հեղինակային հսկողություն և որակի տեխնիկական հսկողություն իրականացնող ընկերություններին ուղղված ծանուցումներ, շինարարական կազմակերպությունից դադարեցված շինարարական օբյեկտի հանձնման-ընդունման ակտեր՝ օբյեկտի



տեխնիկական վիճակի մասին նշումով<sup>60</sup> և այլն), հետևաբար ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 421 և 422 հոդվածները տվյալ դեպքում կիրառելի չեն:

➤ Պայմանագրի 29.07.2024 թվականին կնքված Համաձայնագիր N° 4-ով սահմանված աշխատանքների օրացուցային գրաֆիկը որևէ համաձայնագրով չի չեղարկվել և չի փոփոխվել: Մինչև 2025 թվականի օգոստոսի 19-ին կնքված N° 8 Համաձայնագիրը, 2025 թվականի փետրվարի 6-ին կնքված N° 6 համաձայնագրով 2024 թվականին չկատարված 107,125.24 հազ. դրամի աշխատանքները տեղափոխվել են 2025 թվական:

➤ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2022 թվականի դեկտեմբերի 12-ի N° 28-Ն հրամանի հավելվածի 462-րդ կետը ընդգրկված է հիշյալ հրամանի 14-րդ բաժնում, որն այդ հրամանում լրացվել է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 03.02.2025թ. N° 04-Ն հրամանով և ուժի մեջ է մտել 20.02.2025թ.-ին: Այդ հրամանի 4-րդ կետով սահմանվել է, որ՝ սույն հրամանի պահանջները չեն տարածվում մինչև սույն հրամանն ուժի մեջ մտնելն սկսված և դեռևս չավարտված քաղաքաշինական ծրագրերի գնման գործընթացների, ինչպես նաև կնքված և գործող պայմանագրերի վրա, հետևաբար այդ պահանջները չեն տարածվում 2023 թվականին կնքված և գործող ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2023/31Շ պայմանագրի վրա:

➤ Համաձայն «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի՝ «...Կազմակերպությունը պետք է պատրաստի իր ֆինանսական հաշվետվությունները (բացառությամբ դրամական հոսքերի մասին տեղեկատվության)՝ կիրառելով հաշվապահական հաշվառման հաշվեգրման հիմունքը, որի համաձայն գործառնությունները, այլ դեպքերը և իրադարձությունները ճանաչվում են, երբ դրանք տեղի են ունենում և ներկայացվում են այն ժամանակահատվածների ֆինանսական հաշվետվություններում, որոնց դրանք վերաբերում են...»:

➤ Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N° 526-Ն որոշման Հավելված N° 1-ի

✓ 57-րդ կետի՝ «...Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը...», ինչը տվյալ դեպքում բացակայում է:

<sup>60</sup> ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2025 թվականի փետրվարի 10-ի N° 05-Ն հրամանի Հավելվածի 70-րդ կետի 11-րդ կետի պահանջ:



- ✓ 56-րդ կետի 4-րդ ենթակետի՝ «...արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր փարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ... աշխատանքների ... ծավալների ... արհեստական փոփոխման: Արհեստական են համարվում հետևյալ փոփոխությունները՝ ...պայմանագրով, ... աշխատանքների կատարման ... համար սահմանված ժամկետը մեկ անգամ՝ մինչև երեսուն օրացուցային օրվանից ավելի ժամկետով երկարաձգելը ...»:
- ✓ 57.1 կետի՝ «...Յուրաքանչյուր առանձին դեպքում, հիմնավորելով պայմանագրի կատարման և (կամ) կառավարման առանձնահատկությունը, պարզվիրատուն կարող է պայմանագրով նախատեսված ... աշխատանքների կատարման .... ընթացքում դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանը (սահմանված կարգով ներկայացնելով համապատասխան Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ)՝ հայցելով վերջինիս թույլտվությունը պայմանագրում սույն կարգի 56-րդ կետով նախատեսված պայմաններից փարբերվող պայմաններ սահմանելու կամ սահմանված պայմանները չկիրառելու համար: Այս դեպքում, Հայաստանի Հանրապետության կառավարությունը, հաշվի առնելով պայմանագրի կատարման և (կամ) կառավարման առանձնահատկությունը, կարող է իր որոշմամբ թույլատրել սահմանել պայմանագրում սույն կարգի 56-րդ կետով նախատեսված պայմաններից փարբերվող պայմաններ կամ չկիրառել սահմանված պայմանները...»:

Այսպիսով, Պարզվիրատուն ՀՀ կառավարությունից չի հայցել ՀՀ կառավարության 04.05.2017թ N° 526-Ն որոշման Հավելվածի 56-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված պայմանից փարբերվող պայման սահմանելու կամ սահմանված պայմանները չկիրառելու թույլտվություն հետևաբար պայմանագրով սահմանված պարասխանավորության միջոցները ենթակա են կիրառման:

**Ընթացիկ եզրակացության «6. Խեղաթյուրումներ» բաժին կարելի է վերադառնալ հետևյալ հղմամբ՝ [6.9.1:](#)**



**6.9.2. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության «Ճանապարհային ցանցի բարելավում» ծրագրի (1049) «Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների միջին նորոգում» միջոցառում՝ (1049-21020)**

*6.9.2.1. Տնտեսագիտական դասակարգման «Շենքեր և շինությունների կապիտալ վերանորոգում» (511300) և «Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում» (425100) հողվածներով դասակարգման խեղաթյուրումը.*

**Գնահատման կիրառելի հիմքերը.**

✓ ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N<sup>o</sup> 596-Ն<sup>61</sup> որոշման Հավելված N<sup>o</sup> 1-ի 4-րդ կետի 24-րդ ենթակետ՝ «...ավտոմոբիլային ճանապարհների միջին նորոգումը ավտոմոբիլային ճանապարհի պատվածքի մաշված վերին շերտը վերականգնելու, ավտոմոբիլային ճանապարհի, արհեստական կառույցների, ինչպես նաև ճանապարհային կահավորանքի շինարարական նորմերով նախատեսված սկզբնական որակական ցուցանիշների ապահովման նպատակով իրականացվող նորոգման աշխատանքներն են...»:

✓ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2022 թվականի դեկտեմբերի 12-ի N<sup>o</sup> 28-Ն հրամանի<sup>62</sup> Հավելվածի 267-րդ կետի՝ «...Ըստ նշանակության ճանապարհային պատվածքի շերտերը դասակարգվում են՝

- 1) մաշման շերտ,
- 2) ծածկի շերտեր (մեկ կամ մի քանի),
- 3) հիմքի շերտեր (մեկ կամ մի քանի),
- 4) հիմքի լրացուցիչ շերտ (սառնակայունության, դրենիացման (ծծանցման) կամ հարթեցման):

✓ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007 թվականի հունվարի 9-ի N<sup>o</sup> 5 հրամանի Հավելված N<sup>o</sup> 16՝

- «...Հիմնական միջոցների պահպանման և ընթացիկ վերանորոգման համար ապրանքների և ծառայությունների ձեռքբերումն արտացոլվում է «Ապրանքների և ծառայությունների ձեռքբերում» (420000) կատեգորիայում: Հիմնական միջոցների հիմնանորոգումը,

<sup>61</sup> «Հայ ստանի չանրապետություն և նույնի կառուցապատման նպատակով թույլ տվող ստանի և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի չանրապետության կառավարության միջոցով շարք ուղղորդող մեքեր ու ժը կորցրած ճանաչելու մասին»

<sup>62</sup> «ՀՆ 32-01-2022 «Ավտոմոբիլային ճանապարհներ» Հայաստանի Հանրապետության շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2022 թվականի հունիսի 14-ի N 11-Ն հրամանում փոփոխություն կատարելու մասին»



վերակառուցումը, կամ ընդլայնումը դիտարկվում է որպես «Ոչ-ֆինանսական ակտիվների գծով ծախսեր» (500000): Հիմնական միջոցների պահպանումը և ընթացիկ վերանորոգումը տարբերակվում են հետևյալ երկու հատկանիշներով.

(ա) դրանք գործողություններ են, որոնք հիմնական միջոցների սեփականատերերը կամ օգտագործողները պարտավոր են պարբերաբար իրականացնել, որպեսզի կարողանան նախատեսված ծառայության ժամկետում օգտագործել այդ ակտիվները՝

(բ) դրանք չեն փոխում հիմնական միջոցները, այլ պահպանում են դրանց պիտանիությունը կամ էլ շարքից դուրս գալու դեպքում վերադարձնում են դրանք աշխատանքային վիճակի:

Հիմնական միջոցների պահպանման և ընթացիկ վերանորոգման ծախսերն արտացոլվում են հետևյալ հաշիվներում. «Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում» (425100), .....: Այս խմբի համար կիրառվում են հետևյալ ենթաանալիտիկ հաշիվները՝.... 425111 «Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում»:

### ***Խեղեթյությունները.***

ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի ինն ամիսների կատարման Ձև Հ-2 հաշվետվությունում դասակարգման խեղաթյուրմամբ են ներկայացված «Շենքեր և շինությունների կապիտալ վերանորոգում» (511300) տնտեսագիտական հոդվածի (ավել է ներկայացված) և «Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում» (425100) տնտեսագիտական հոդվածի (պակաս է ներկայացված) դրամարկղային ծախսի ցուցանիշները 3,473,317.03 հազարական դրամով:

Բյուջետային ծախսը, դրա համար չնախատեսված տնտեսագիտական դասակարգման հոդվածով նախատեսելու և կատարելու արդյունքում, ՀՀ պետական բյուջեի ինն ամիսների կատարման Ձև Հ-2 և Ձև Հ-4 հաշվետվություններում խեղաթյուրվել են նաև «Փաստացի ծախս», «Տարեսկզբի կրեդիտորական պարտքեր» և «Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կրեդիտորական պարտքեր» ցուցանիշները «Շենքեր և շինությունների կապիտալ վերանորոգում» (511300) և «Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում» (425100) տնտեսագիտական դասակարգման հոդվածներով (ավել և պակաս են ներկայացված) համապատասխանաբար 4,183,805.90 հազարական դրամով, 59,502.35 հազարական դրամով և 769,991.22 հազարական դրամով:

**Փաստերը, որոնց հիման վրա արձանագրվել է խեղաթյուրումը:**



Հաշվետու ժամանակաշրջանում վերոնշյալ միջոցառման շրջանակում կնքված թվով 17 պայմանագրերով նախատեսվել և իրականացվել են ճանապարհի պատվածքի մաշվող վերին շերտի փոխման աշխատանքներ, որը չի երկարացնում ճանապարհի օգտակար ծառայության ժամկետը և պարբերաբար պետք է իրականացվի, որպեսզի կարողանան նախատեսված ծառայության ժամկետում օգտագործել ճանապարհը:

2025 թվականի ինն ամիսների ընթացքում վերոնշյալ միջոցառման համար ծախսված 3,473,317.03 հազ. դրամը (425100) «Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում» տնտեսագիտական դասակարգման հոդվածով դասակարգելու փոխարեն դասակարգվել է (511300) «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» տնտեսագիտական դասակարգման հոդվածով ինչը հանգեցրել է ՀՀ պետական բյուջեի ինն ամիսների կատարման Ձև Հ-2 հաշվետվությունում նշված հոդվածներով «Դրամարկղային ծախս» ցուցանիշի խելաթյուրման 3,473,317.03 հազարական դրամով:

Բյուջետային դասակարգման կիրառման կարգը չպահպանելու պատճառով Ձև Հ-2 և Ձև Հ-4 հաշվետվություններում խելաթյուրվել են նաև նույն գործարքների հետ կապված փաստացի ծախսերի, կրեդիտորական պարտքերի տարեսկզբի և հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ցուցանիշները համապատասխանաբար 4,183,805.90 հազարական դրամով, 59,502.35 հազարական դրամով և 769,991.22 հազարական դրամով:

**ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության մեկնաբանությունը.**

*«...Ավտոճանապարհների միջին նորոգման աշխատանքները մինչև 2022 թվականը ներառյալ ընդգրկվել են ՀՀ պետական բյուջեի 1049 ծրագրի 11001 միջոցառման «1.2 Պարբերական պահպանում (միջին նորոգում)» ենթակետում, իսկ ֆինանսական միջոցները նախատեսվել են (425100) «Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում» տնտեսագիտական դասակարգման հոդվածով: ՀՀ վարչապետի 2022թ. հուլիսի 29-ի թիվ 02/16.10/24057-2022 հանձնարարականի հիման վրա քննարկվել է միջին նորոգման աշխատանքների գծով կատարվող ծախսերը որպես կապիտալ ծախս ճանաչելու հնարավորությունը (Հանձնարարականը և դրան կից ներկայացված ՀՀ ֆինանսների նախարարության գրությունը կցվում է):*

*ՀՀ վարչապետի հանձնարարականի կատարումն ապահովելու նպատակով՝ հիմք ընդունելով իրավասու մարմինների հետ տեղի ունեցած բազմաթիվ քննարկումների արդյունքները, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության*



հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտների 11-րդ՝ «Հիմնական միջոցներ» բաժնի կարգավորումները՝ միջին նորոգման աշխատանքները դիտարկվել են որպես կապիտալ ծախս և «Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի մասին» օրենքով, որպես նոր միջոցառում ներառվել են տվյալ տարվա՝ ՀՀ պետական բյուջեի 1049 ծրագրում 21020 դասիչով, իսկ ֆինանսական միջոցները նախատեսվել են (511300) «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» տնտեսագիտական դասակարգման հոդվածով, հետևաբար հաջորդող տարիներին և այդ թվում «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում ավտոմատապարհների միջին նորոգման աշխատանքների համար նախատեսված ֆինանսական միջոցները (511300) «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» տնտեսագիտական դասակարգման հոդվածով ներառվել են ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի 1049 ծրագրի 21020 դասիչով միջոցառման ներքո:

Ի կատարումն «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի պահանջների՝ 2025 թվականի ինն ամիսների ընթացքում վերոնշյալ միջոցառման համար ծախսերը կատարվել են (511300) «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» տնտեսագիտական դասակարգման հոդվածով:...»:

#### **Հաշվեքննողների արձագանքը.**

Ճանապարհների միջին նորոգման աշխատանքները չեն երկարացնում ճանապարհի օգտակար ծառայության ժամկետը և չեն ավելացնում նրա հզորությունը, քանի որ համաձայն՝

- ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2022 թվականի դեկտեմբերի 12-ի N° 28-Ն հրամանի Հավելվածի 267-րդ կետի՝ «...Ըստ նշանակության ճանապարհային պատվածքի շերտերը դասակարգվում են՝
  - 1) մաշման շերտ,
  - 2) ծածկի շերտեր (մեկ կամ մի քանի),
  - 3) հիմքի շերտեր (մեկ կամ մի քանի),
  - 4) հիմքի լրացուցիչ շերտ (սառնակայունության, դրենիրացման (ծծանցման) կամ հարթեցման):...»
- ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N° 596-Ն որոշման Հավելված N° 1-ի 4-րդ կետի 24-րդ ենթակետի՝ «...ավտոմոբիլային ճանապարհների միջին նորոգումը ավտոմոբիլային ճանապարհի պատվածքի մաշված վերին շերտը վերականգնելու, ավտոմոբիլային ճանապարհի շինարարական նորմերով նախատեսված սկզբնական որակական



ցուցանիշների ապահովման նպատակով իրականացվող նորոգման աշխատանքներն են...»:

Նույնը հիմնավորվում է նաև մասնագիտական ձեռնարկով<sup>63</sup>, համաձայն որի «...միջին նորոգումը կատարվում է մի քանի տարին մեկ անգամ, երբ անհրաժեշտ է լինում վերականգնել գլխավորապես ճանապարհի երթևեկամասի մաշվածությունը: ...Միջին նորոգումը սովորաբար կատարվում է առանձին հատվածներում, որտեղ պատվածքը գտնվում է ավելի մաշված վիճակում: Ընդհանրապես միջին նորոգումը նախատեսվում է այն ժամանակ և այն հատվածներում, որտեղ պատվածքի մաշվածությունը լինում է հավասար կամ ավելի՝ ասֆալտբետոնյա պատվածքներում 10-20մմ:....

Հիմնական նորոգման աշխատանքները կատարվում են մի քանի տարին մեկ անգամ, նպատակ ունենալով վերականգնել ինչպես պատվածքի ամրությունը, այնպես և վերացնել արհեստական կառուցվածքներում ու հողային պաստառում եղած բոլոր ձևափոխումներն ու վնասվածքները:

Միջին նորոգման և հիմնական նորոգման մոտավոր ժամկետները բերվում են աղյուսակ IV.5-ում:

Աղյուսակ IV.5

Պատվածքի տեսակը	Միջին նորոգում (տարի)	Հիմնական նորոգում (տարի)
Ցեմենտբետոնային	10	30
Ասֆալտբետոնային	6	18
Սև պատվածքներ	4	12
Ոչ մշակված խճից	3	9
Սալարկումներ	8	16
Կոպճային	3	9

**Ընթացիկ եզրակացության «6. Խեղաթյուրումներ» բաժին կարելի է վերադառնալ հետևյալ հղմամբ՝ [6.9.2](#):**

<sup>63</sup> «Ավտոմոբիլային ճանապարհների նախագծումը, շինարարությունը և շահագործումը», հեղինակ Ա. Մ. Արարալյան, թույլատրված է ՀՍՍՀ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության մինիստրության կողմից որպես ուսումնական ձեռնարկ ավտոճանապարհային մասնագիտություն սովորողների համար, «Լույս» հրատարակչություն, Երևան 1985: Գրուխ XXII, §§ 107- 108, էջ 391-392:



**6.9.3. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Հանրակրթական և նախադպրոցական հաստատությունների հիմնում, կառուցում, բարելավում» ծրագրի (1236) «Մանկապարտեզների շենքերի վերակառուցում, հիմնանորոգում» միջոցառում (1236-32002)**

**Կատարողներ՝**

- ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն (Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ)
- ՀՀ տարածքային զարգացման և ենթակառուցվածքների նախարարություն
- ՀՀ գեղարքունիքի մարզպետի աշխատակազմ

*6.9.3.1. Տնտեսագիտական դասակարգման «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» (513200) և «Այլ կապիտալ դրամաշնորհներ համայնքներին» (465300) հողվածերով դասակարգման խեղաթյուրումը.*

**Գնահատման կիրառելի հիմքերը.**

✓ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007 թվականի հունվարի 9-ի № 5 հրամանի Հավելված № 16՝ 460000 «Դրամաշնորհներ» կախեզորիան դասակարգվում է նաև «Կապիտալ դրամաշնորհներ պետական հատվածի այլ մակարդակներին» (465000) խմբի: Կապիտալ դրամաշնորհները ֆինանսավորում են ոչ ֆինանսական ակտիվների (000000) ձեռքբերումը: Կապիտալ դրամաշնորհները կարող են բաղկացած լինել նաև դրամական փոխանցումներից, որոնց արդյունքում ստացողը կարող է ձեռք բերել ակտիվը կամ ակտիվները: Կառավարման այլ մակարդակներին կապիտալ դրամաշնորհները ներառում են հետևյալ սինթետիկ հաշիվները՝ «Կապիտալ դրամաշնորհներ պետական կառավարման հատվածին» (465100), «Կապիտալ սուբվենցիաներ համայնքներին» (465200), «Այլ կապիտալ դրամաշնորհներ համայնքներին» (465300), «Կապիտալ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» (465500), «Կապիտալ դրամաշնորհներ պետական և համայնքների առևտրային կազմակերպություններին» (465600) և «Այլ կապիտալ դրամաշնորհներ» (465700):

Ոչ ֆինանսական ակտիվների (հիմնական միջոցի) ձեռքբերման գծով ծախսերը պետք է արտացոլվեն 5-րդ դասում՝ «Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր» եթե բավարարում են ակտիվի (հիմնական միջոցի) սահմանմանը:

✓ ՀՀ ֆինանսների նախարարի 2014 թվականի հոկտեմբերի 24-ի № 725-Ն հրամանի Հավելվածի (Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի հաշվապահական հառվառման ստանդարտի)

- 11.10 պարագրաֆ՝ «...Հիմնական միջոցները նյութական ակտիվներ են որոնք առկա են ապրանքների կամ ծառայությունների արտադրության



(մատուցման) կամ մատակարարման, այլ կողմերին վարձակալության տալու կամ վարչական նպատակներով շարունակական կամ պարբերաբար օգտագործելու համար...»:

- 2.28 պարագրաֆ՝ «...Որպեսզի միջոցը բավարարի ակտիվի սահմանմանը, այն պետք է վերահսկվի կազմակերպության կողմից, այսինքն՝ կազմակերպությունը պետք է իրականացնի ակտիվի սեփականության հետ կապված իր իրավունքը: Կազմակերպությունը վերահսկում է ակտիվը (իրականացնում է ակտիվի սեփականության հետ կապված իր իրավունքը), եթե նա հնարավորություն ունի ստանալու տվյալ միջոցից ստացվող ապագա տնտեսական օգուտները կամ օգտակար պոտենցիալը և միաժամանակ կարող է այլոց համար սահմանափակել այդ միջոցից տնտեսական օգուտներ կամ օգտակար պոտենցիալ ստանալու հնարավորությունը: Սովորաբար միջոցից ակնկալվող ապագա տնտեսական օգուտները կամ օգտակար պոտենցիալը վերահսկելու կարողությունը բխում է իրավաբանորեն ամրագրված իրավունքներից, այսինքն՝ վերահսկումը առկա է, եթե միջոցը սեփականության իրավունքով պատկանում է կազմակերպությանը...»:

✓ «Քաղաքաշինության մասին» օրենքի 6-րդ հոդված՝ «...անշարժ գույքի սեփականատեր հանդիսացող կամ այն փոփոխելու իրավունքով օժտված օգտագործողը քաղաքաշինական գործունեություն իրականացնելիս հանդես է գալիս որպես կառուցապատող...Կառուցապատողներն իրավունք ունեն ...ընտրել քաղաքաշինական գործունեության օբյեկտները,.... որոշել ներդրումների չափերը, պայմանագրային հիմունքներով ներգրավել օբյեկտի քաղաքաշինական փաստաթղթեր կազմողներին և շինարարություն իրականացնողներին...»:

**Խեղաթյուրումը.** ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի ինն ամիսների կատարման Ձև Հ-2 հաշվետվությունում դասակարգման խեղաթյուրմամբ են ներկայացված «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» (511300) տնտեսագիտական հոդվածի (ավել է ներկայացված) և «Այլ կապիտալ դրամաշնորհներ համայնքներին» (465300) տնտեսագիտական հոդվածի (պակաս է ներկայացված) դրամարկղային ծախսի ցուցանիշները 719,505.30 հազարական դրամով:

Բյուջետային ծախսը, դրա համար չնախատեսված տնտեսագիտական դասակարգման հոդվածով նախատեսելու և կատարելու արդյունքում, նույն հաշվետվությունում խեղաթյուրվել են նաև «Փաստացի ծախս» ցուցանիշները



719,505.30 հազարական դրամով (համապատասխանաբար՝ ավել և պակաս է ներկայացվել) «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» (511300) և «Այլ կապիտալ դրամաշնորհներ համայնքներին» (465300) տնտեսագիտական դասակարգման հոդվածներով:

**Փաստերը, որոնց հիման վրա արձանագրվել է խեղաթյուրումը.**

Հաշվեքննությանը պարզվել է, որ միջոցառման շրջանակում համայնքային սեփականություն հանդիսացող մանկապարտեզների շենքերի հիմնանորոգման և վերակառուցման 719,505.30 հազ. դրամի ծախսերը «Այլ կապիտալ դրամաշնորհներ համայնքներին» (465300) տնտեսագիտական դասակարգման հոդվածով իրականացնելու փոխարեն իրականացվել են (511300) «Շենքերի և շինությունների շինարարություն» տնտեսագիտական հոդվածով:

**Ընթացիկ եզրակացության «6. Խեղաթյուրումներ» բաժին կարելի է վերադառնալ հետևյալ հղմամբ՝ [6.9.3](#):**

**6.10. «Շենքերի և շինությունների շինարարություն» տնտեսագիտական հոդվածի (511200) գումարի խեղաթյուրումները**

**6.10.1. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Հանրակրթական և նախադպրոցական հաստատությունների հիմնում, կառուցում, բարելավում» ծրագրի (1236) «Մանկապարտեզների նոր շենքերի կառուցում» միջոցառում (1236-32001)**

**Կատարող՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե**

*6.10.1.1. Տնտեսագիտական դասակարգման «Շենքերի և շինությունների շինարարություն» (511200) հոդվածի դրամարկղային ծախսի գումարի խեղաթյուրումները.*

**Գնահատման կիրառելի հիմքերը.**

1) Պետության կարիքների համար կապալային աշխատանքների կատարման պետական գնման թվով 3 պայմանագրերի<sup>64</sup> 5.1.1 կետ՝ «...Կանխավճար կտրամադրվի միայն այն պարագայում, երբ կապալառուի կողմից իրականացված

<sup>64</sup> ՀՀ Արարարի մարզի Արտաշատ համայնքի Բերքանուշ բնակավայրում 75 տեղանոց հզորությամբ մանկապարտեզի կառուցման ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-25/3, ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Մելիքայուղ բնակավայրում մանկապարտեզի կառուցման ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-25/2 և ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Ծիլքար բնակավայրի մանկապարտեզի կառուցման ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-25/1 պայմանագրեր:



կլինեն շինարարության կազմակերպման նախագծով աշխատանքների մեկնարկման փուլում նախատեսված միջոցառումներն ամբողջությամբ, իսկ նշված միջոցառումների իրականացված լինելու փաստը կարձանագրվի և պատվիրատուին գրավոր կտեղեկացվի տվյալ օբյեկտի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություններն իրականացնող կազմակերպության կողմից...»:

«Կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 11-ի<sup>65</sup> № 128-Ն հրամանի Հավելվածի 6-րդ կետի բ, գ և է ենթակետեր՝ շինարարության կազմակերպման նախագիծի կազմում ընդգրկվում են

- շինարարության նախապատրաստական փուլի իրականացման գլխավոր հատակագիծը՝ հիմնական և ժամանակավոր կառույցների, պահեստների և պահեստավորման հարթակների,
- շինարարական հրապարակի կազմակերպման պայմաններն ու պահանջները (այդ թվում՝ ժամանակավոր սահմանազատող ցանկապատ, ճանապարհային երթևեկության կանոնների լրացուցիչ նշաններ, վերամբարձ կռունկի տեղակայման դիրք և դրա շահագործման անվտանգության գոտու սահմանում, շինարարական աշխատանքների ու քաղաքաշինական փաստաթղթերի մասին իրազեկող ցուցանակ, հետիոտնի անվտանգ շարժման համար անհրաժեշտ ժամանակավոր անցուղի, բեռնատար մեքենաների անվադողերի լվացման կետ և այլն),
- օրենքով սահմանված դեպքերում օբյեկտների շինարարական հրապարակը համալրվում է նաև տեսախցիկներով՝ շինարարական աշխատանքների իրականացման ամբողջ ժամանակահատվածում:

«Կառավարությանն առընթեր քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2025 թվականի մարտի 5-ի № 07-Ն հրամանի Հավելվածի 3-րդ կետի 2-րդ և 9-րդ ենթակետեր՝ գործատուն պարտավոր է ապահովել շինարարական հրապարակի անհրաժեշտ ցանկապատումը (պահպանական, պաշտպանական, ազդանշանային), լուսավորում, տեսանկարահանման սարքով համալրումը, երկրաբաշխական նշահարման հիմքի ստեղծումը, մոտեցման ճանապարհների կառուցումը, պահեստային տնտեսության

---

<sup>65</sup> «Բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և շինությունների նախագծային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը սահմանող կանոնները հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2006 թվականի նոյեմբերի 29-ի N 273-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին»



ստեղծումը և շինարտադրության կազմակերպման, աշխատողների կենսապահովման համար անհրաժեշտ ժամանակավոր շենքերի ու շինությունների՝ հանդերձարանների, հագուստի և կոշիկների չորանոցների, սանհանգույցների, ցնցուղարանների, սննդի կազմակերպման, հանգստի սենքերի և բուժկետերի նախապատրաստումը, տարածքում հողային մակերեսների քողարկումը, առավել տեսանելի և մատչելի տեղամասում ընթեռնելի տառաշարով (հայերեն, անգլերեն, ռուսերեն) և բովանդակությամբ հատուկ վահանակի տեղադրումը՝ Գործատու կազմակերպությունների տվյալների (անվանումով, էլեկտրոնային հասցեով, հեռախոսահամարով), ծրագրի անվանման ու նպատակային նշանակության, շինարարական աշխատանքների մեկնարկի և ավարտի ժամկետների, կառուցապատման թույլտվությունների (նախագծման և շինարարության) վերաբերյալ տեղեկատվությամբ:

2) Պետության կարիքների համար կապալային աշխատանքների կատարման պետական գնման պայմանագրի<sup>66</sup> 5.1.1 կետ՝ «...Կանխավճար կարող է հատկացվել յուրաքանչյուր բյուջետային տարվա ընթացքում կատարվելիք աշխատանքների համաձայնագրով նախատեսված արժեքի մինչև 30 տոկոսի չափով...»:

**Խեղաթյուրումները.**

1) ՀՀ պետական բյուջեի ինն ամիսների կատարման Ձև Հ-2 հաշվետվությունում ներկայացված «Դրամարկղային ծախս» ցուցանիշը խեղաթյուրված (ավել) է 133,763.54 հազ. դրամով:

2) ՀՀ պետական բյուջեի ինն ամիսների կատարման Ձև Հ-2 հաշվետվությունում ներկայացրեժ «Դրամարկղային ծախս» ցուցանիշը խեղաթյուրված (ավել) է 29,492.35 հազ. դրամով:

Այսպիսով, Ձև Հ-4 հաշվետվությամբ տնտեսագիտական դասակարգման «Շենքերի և շինությունների շինարարություն» (511200) հոդվածով «Մանկապարտեզների նոր շենքերի կառուցում» միջոցառման (1236-32001) «Դրամարկղային ծախս» ցուցանիշը խեղաթյուրված է 163,255.89 հազ. դրամով:

**Փաստերը, որոնց հիման վրա արձանագրվել են խեղաթյուրումները.**

1) Հաշվեքննությամբ պարզվել է, որ հաշվետու ժամանակահատվածի վերջի դրությամբ նշված օբյեկտները չունեն սահմանված կարգով պետական համալիր փորձաքննություն անցած և հաստատված նախագծանախահաշվային

<sup>66</sup> NՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-25/3



փաստաթղթեր՝ այդ թվում շինարարության կազմակերպման նախագծեր, սակայն տվյալ օբյեկտների տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություններն իրականացնող կազմակերպությունները 2025 թվականի օգոստոսի 22-ի, 25-ի և սեպտեմբերի 17-ի գրություններով<sup>67</sup> պատվիրատուին հավաստիացրել են, որ կապալառու կազմակերպության կողմից ապահովվել է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով պահանջները, այդ թվում՝ շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման, կահավորման, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը:

Նշված հավաստիացումների հիման վրա կապալառու ընկերություններին վճարվել է 133,763.54 դրամի կանխավճար (համապատասխանաբար 29,932.34 հազ. դրամ, 73,730.89 հազ. դրամ և 30,100.32 հազ. դրամ):

Հաշվեքննողների կողմից նշված օբյեկտներում 2025 թվականի հոկտեմբերի 30-ին և 31-ին կատարված զննությամբ՝ հաշվեքննության առարկային վերաբերող փաստացի վիճակի ուսումնասիրությամբ պարզվել է, որ չեն ապահովվել կանխավճարի տրամադրման համար պայմանագրով պահանջվող պայմանները՝ չեն իրականացվել աշխատանքների մեկնարկման փուլում քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերով նախատեսված միջոցառումներն ամբողջությամբ: Մասնավորապես՝

– բոլոր օբյեկտներում բացակայում են տեղեկատվական հատուկ վահանակները, պահեստային տնտեսությունները, բեռնատար մեքենաների անվադողերի լվացման կետերը, հանգստի սենքերը, բուժկետերը, սանիտարակենցաղային շինություններից՝ ցնցուղարանները, ճանապարհային երթևեկության կանոնների լրացուցիչ նշանները, հագուստի և կոշիկների չորանոցները: Աշխատակիցները չունեն համապատասխան պաշտպանության միջոցներ և արտահագուստ: Կուտակված հողային մակերեսները քողարկված չեն:

– Օբյեկտներից երկուսում բացակայում են սանհանգույցները<sup>68</sup>, տեսախցիկները առկա են սակայն դիտարկման հասանելիությունը ապահովված չէ<sup>69</sup>:

<sup>67</sup> «Արմսորոյ» ՍՊԸ-ի 2025 թվականի օգոստոսի 22-ի N 489/25 և սեպտեմբերի 17-ի N 550/25 գրություններ և «Վահրամ Կնյազյան» ԱԶ-ի 2025 թվականի օգոստոսի 25-ի N Լ 16-ՎԿ-25-08/2025 գրություն

<sup>68</sup> Մելիքյուղև Բերքանուշ բնակավայրեր

<sup>69</sup> Ծիլբար և Բերքանուշ բնակավայրեր



Նշված անհամապատասխանությունների արդյունքում ՀՀ պետական բյուջեի ինն ամիսների կատարման Ձև Հ-2 հաշվետվությունում «Դրամարկղային ծախս» ցուցանիշը խեղաթյուրված է (ավել է ներկայացված) 133,763.54 հազ. դրամով:

2) Հաշվեքննությամբ պարզվել է, որ 2025 թվականին կնքված Համաձայնագրի շրջանակում առավելագույնը 44,238.53 հազ. դրամ կանխավճար հաշվարկելու և վճարելու փոխարեն հաշվարկվել և վճարվել է 73,730.88 հազ. դրամ, ինչը հանգեցրել է ՀՀ պետական բյուջեի ինն ամիսների կատարման Ձև Հ-2 հաշվետվությունում «Դրամարկղային ծախս» ցուցանիշների խեղաթյուրման 29,492.35 հազ. դրամով:

### **ՀՀ քաղաքաշինության կոմիտե մեկնաբանությունը.**

1) Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Ծիլքար, Ապարան համայնքի Մելիքզյուղ և Արտաշատ համայնքի Բերքանուշ բնակավայրերի 75 տեղ հզորությամբ մանկապարտեզների կառուցման աշխատանքների կատարման համապատասխանաբար NN ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-25/1, ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-25/2 և ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-25/3 պայմանագրերի մասով օբյեկտների տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպությունների կողմից տրվել են գրավոր հավաստումներ առ այն, որ Կապալառուն ամբողջությամբ՝ ամենօրյա ռեժիմով ապահովվել է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջները, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը:

Խնդիրը լրացուցիչ կուսումնասիրվի Կոմիտեի պատասխանատու ստորաբաժանման կողմից, կձեռնարկվեն համապատասխան միջոցներ՝ կապալառու և տեխնիկական հսկողություն իրականացնող ընկերությունների նկատմամբ պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ կիրառելու և հետագայում նմանատիպ իրավիճակների առաջացումը կանխելու համար:...»:

2) «...2025 թվականի սեպտեմբերի 4-ին կնքված NՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-25/3 ծածկագրով գնման պայմանագրի 5.1.1 կետով սահմանվել է. «...Կանխավճար կարող է հատկացվել յուրաքանչյուր բյուջեդային տարվա ընթացքում կատարվելիք աշխատանքների համաձայնագրով նախատեսված արժեքի մինչև 30 տոկոսի



չափով: ... Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է համաձայնագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ: ... »:

2025 թվականին բյուջեփայլին տարվա ընթացքում կատարվելիք աշխատանքների համաձայնագիր N1-ը կնքվել է 2025 թվականի սեպտեմբերի 4-ին, որի 1.1.1. կետով սահմանվել է 147.461.760 դրամի չափով 2025թ. վճարման ժամանակացույցը (Հավելված N2), իսկ 1.1.3 կետով հաստատվել է Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրվանից մինչև 12 ամսում Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների ծավալը՝ գումարային արտահայտությամբ, որը կազմել է 245.769.600 դրամ:

Հաշվի առնելով, որ պայմանագրով կանխավճարի մարումն իրականացվում է համաձայնագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ, իսկ համաձայնագրի ընդհանուր գին է համարվում 12 ամսում կատարվելիք աշխատանքի գումարը, ուստի, կանխավճարի վճարվող գումարի տոկոսը ենթադրաբար պետք է վերցնել համաձայնագրի ընդհանուր գնի նկատմամբ կատարված հաշվարկով, որը կազմել է 73.730.880 դրամ:

Նշված տարընթերցումից խուսափելու համար կարծում ենք, որ անհրաժեշտ է ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 26-ի N1869-Ն որոշման մեջ կատարել կանխավճարի տրամադրման դրույթի հստակեցում: Որպես կարգավորման տարբերակ առաջարկվում է հետևյալ ձևակերպումը. «Կապալառուին կանխավճար կարող է հատկացվել բանկային երաշխիքի առկայության դեպքում յուրաքանչյուր բյուջեփայլին տարվա համաձայնագրով սահմանված վճարման (ֆինանսական պարտավորությունների կատարման) ժամանակացույցի գումարի մինչև 20 տոկոսի չափով: Կանխավճարի մարումն իրականացվում է արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Մինչև բյուջեփայլին տարվա ավարտը յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է կանխավճար տրամադրելու բյուջեփայլին տարվա համաձայնագրով սահմանված վճարման (ֆինանսական պարտավորությունների կատարման) ժամանակացույցի գումարի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ, իսկ տրված կանխավճարը նույն բյուջեփայլին տարում չմարվելու դեպքում կապալառուին վճարումներ չեն կատարվում՝ մինչև կանխավճարի ամբողջական մարումը»:...»:

**Հաշվեքննողների արձագանքը.**



2) Կանխավճարի տրամադրման թույլատրելի առավելագույն չափը որևէ կերպ չի փոխկապակցվում կանխավճարի մարման մեխանիզմների և ժամկետների հետ, որոնք կարող են լինել բազմազան և բազմաբնույթ և հետևաբար որևէ տարրը չթերցում պայմանագրային կետերի պահանջների միջև առկա չէ:

**6.10.1.2. Տնտեսագիտական դասակարգման «Շենքերի և շինությունների շինարարություն» (511200) հոդվածի դեբիտորական պարտքերի գումարի խեղաթյուրումները.**

**Գնահատման կիրառելի հիմքերը.**

1) Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» օրենքի

- 10-րդ հոդվածի 3-րդ մաս՝ «...Կազմակերպությունը պետք է պատրաստի իր ֆինանսական հաշվետվությունները (բացառությամբ դրամական հոսքերի մասին տեղեկատվության)՝ կիրառելով հաշվապահական հաշվառման հաշվեգրման հիմունքը, որի համաձայն գործառնությունները, այլ դեպքերը և իրադարձությունները ճանաչվում են, երբ դրանք տեղի են ունենում և ներկայացվում են այն ժամանակահատվածների ֆինանսական հաշվետվություններում, որոնց դրանք վերաբերում են...»:
- 11-րդ հոդվածի 1-ին մաս՝ «...հաշվապահական հաշվառման գրանցումները կատարվում են սկզբնական հաշվապահական հաշվառման փաստաթղթերի (այսուհետ՝ սկզբնական հաշվառման փաստաթղթեր) հիման վրա, որոնք արձանագրում են գործառնությունների կատարումը, այլ դեպքերի և իրադարձությունների տեղի ունենալը...»:

ՀՀՀՀՍ պարագրաֆ 2.22՝ «...Հաշվապահական հաշվառման հաշվեգրման հիմունքի համաձայն՝ գործառնությունները, այլ դեպքերը և իրադարձությունները ճանաչվում են, երբ դրանք տեղի են ունենում (և ոչ թե, երբ դրամական միջոցները կամ դրանց համարժեքները ստացվում կամ վճարվում են) և գրանցվում են հաշվապահական հաշվառման գրանցամատյաններում և ներկայացվում այն ժամանակաշրջանների ֆինանսական հաշվետվություններում, որոնց դրանք վերաբերում են...»:



ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 11-ի<sup>70</sup> № 128-Ն հրամանի Հավելվածի 6-րդ կետի զ ենթակետ՝ շինարարության կազմակերպման նախագծի կազմում ընդգրկվում են «...շինարարական հրապարակի կազմակերպման պայմաններն ու պահանջները (այդ թվում՝ ժամանակավոր սահմանազատող ցանկապատ, ճանապարհային երթևեկության կանոնների լրացուցիչ նշաններ,... շինարարական աշխատանքների ու քաղաքաշինական փաստաթղթերի մասին իրազեկող ցուցանակ, .... բեռնատար մեքենաների անվադողերի վացման կետ ...»:

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2025 թվականի մարտի 5-ի № 07-Ն<sup>71</sup> հրամանի Հավելվածի 3-րդ կետի 2-րդ և 9-րդ ենթակետեր՝ գործատուն պարտավոր է ապահովել շինարարական հրապարակի անհրաժեշտ ցանկապատումը (պահպանական, պաշտպանական, ազդանշանային), լուսավորում, տեսանկարահանման սարքով համալրումը, ... պահեստային տնտեսության ստեղծումը և շինարտադրության կազմակերպման, աշխատողների կենսապահովման համար անհրաժեշտ ժամանակավոր շենքերի ու շինությունների՝ հանդերձարանների, հագուստի և կոշիկների չորանոցների, սանհանգույցների, ցնցուղարանների, սննդի կազմակերպման, հանգստի սենքերի և բուժկետերի նախապատրաստումը, տարածքում հողային մակերեսների քողարկումը, առավել տեսանելի և մատչելի տեղամասում ընթեռնելի տառաշարով (հայերեն, անգլերեն, ռուսերեն) և բովանդակությամբ հատուկ վահանակի տեղադրումը՝ Գործատու կազմակերպությունների տվյալների (անվանումով, էլեկտրոնային հասցեով, հեռախոսահամարով), ծրագրի անվանման ու նպատակային նշանակության, շինարարական աշխատանքների մեկնարկի և ավարտի ժամկետների, կառուցապատման թույլտվությունների (նախագծման և շինարարության) վերաբերյալ տեղեկատվությամբ:

Մանկապարտեզների կառուցման պայմանագրերի<sup>72</sup>

- 6.5.1 կետ՝ «...Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ողջ ընթացքում քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային

<sup>70</sup> «Բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և շինությունների նախագծային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը սահմանող կանոնները հաստատվելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2006 թվականի նոյեմբերի 29-ի N 273-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին»

<sup>71</sup> «Շինարարական հրապարակում շինարարական աշխատանքների կազմակերպման և անվտանգության ապահովման ուղեցույցը հաստատվելու մասին»

<sup>72</sup> Պեկության կարիքների համար կապալային աշխատանքների կատարման պայմանագիր N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-25/1, ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-25/3 և ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-25/2



փաստաթղթերով սահմանված պահանջների, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման, կահավորման, տեխնիկական անվտանգության սանիտարահիգիենիկ և բնապահպանական նորմերի չպահպանման յուրաքանչյուր արձանագրված դեպքի համար Կապալառուի նկատմամբ կիրառվում է պատասխանատվության հետևյալ միջոցները: Շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը չկազմակերպելը՝ 350.00 հազ. դրամ: Տեխնիկական անվտանգության նորմերի չպահպանելը՝ 1,000.00 հազ. դրամ: Սանիտարահիգիենիկ և բնապահպանական նորմերի չպահպանելը՝ 700.00 հազ. դրամ...»:

- 6.4 կետ՝ «...պայմանագրի 6.2, 6.3, 6.3.1 և 6.5.1 կետերով նախատեսված տույժը և տաուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ...»:

2) «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» օրենքի

- 10-րդ հոդվածի 3-րդ մաս՝ «...Կազմակերպությունը պետք է պատրաստի իր ֆինանսական հաշվետվությունները (բացառությամբ դրամական հոսքերի մասին տեղեկատվության)՝ կիրառելով հաշվապահական հաշվառման հաշվեգրման հիմունքը, որի համաձայն գործառնությունները, այլ դեպքերը և իրադարձությունները ճանաչվում են, երբ դրանք տեղի են ունենում և ներկայացվում են այն ժամանակահատվածների ֆինանսական հաշվետվություններում, որոնց դրանք վերաբերում են...»:
- 11-րդ հոդվածի 1-ին մաս՝ «...հաշվապահական հաշվառման գրանցումները կատարվում են սկզբնական հաշվապահական հաշվառման փաստաթղթերի (այսուհետ՝ սկզբնական հաշվառման փաստաթղթեր) հիման վրա, որոնք արձանագրում են գործառնությունների կատարումը, այլ դեպքերի և իրադարձությունների տեղի ունենալը...»:

ՀՀՀՀՍ պարագրաֆ 2.22՝ «...Հաշվապահական հաշվառման հաշվեգրման հիմունքի համաձայն՝ գործառնությունները, այլ դեպքերը և իրադարձությունները ճանաչվում են, երբ դրանք տեղի են ունենում (և ոչ թե, երբ դրամական միջոցները կամ դրանց համարժեքները ստացվում կամ վճարվում են) և գրանցվում են հաշվապահական հաշվառման գրանցամատյաններում և ներկայացվում այն



ժամանակաշրջանների ֆինանսական հաշվետվություններում, որոնց դրանք վերաբերում են...»:

«Հ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի № 526-Ն<sup>73</sup> որոշման Հավելված № 1-ի

- 57-րդ կետ՝ Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:
- 57.1.-րդ կետ՝ «...յուրաքանչյուր առանձին դեպքում, հիմնավորելով պայմանագրի կատարման և (կամ) կառավարման առանձնահատկությունը, պատվիրատուն կարող է պայմանագրով նախատեսված ...աշխատանքների կատարման ... ընթացքում դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանը ... հայցելով վերջինիս թույլտվությունը պայմանագրում սույն կարգի 56-րդ կետով նախատեսված պայմաններից տարբերվող պայմաններ սահմանելու կամ սահմանված պայմանները չկիրառելու համար:

Այս դեպքում, Հայաստանի Հանրապետության կառավարությունը, հաշվի առնելով պայմանագրի կատարման և (կամ) կառավարման առանձնահատկությունը, կարող է իր որոշմամբ թույլատրել սահմանել պայմանագրում սույն կարգի 56-րդ կետով նախատեսված պայմաններից տարբերվող պայմաններ կամ չկիրառել սահմանված պայմանները...»:

- 56-րդ կետի 4-րդ ենթակետ՝ «...Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ծավալների կամ ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման: Արհեստական են համարվում հետևյալ փոփոխությունները՝.....պայմանագրով, ներառյալ փուլային ձևով նախատեսված... աշխատանքների կատարման ... համար սահմանված ժամկետը մեկ անգամ՝ մինչև երեսուն օրացուցային օրվանից ավելի ժամկետով երկարաձգելը, բայց ոչ ավելի, քան պայմանագրով սահմանված ժամկետն է...»

<sup>73</sup> «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»



ՀՀ կառավարության 2024 թվականի հոկտեմբերի 3-ի № 1582-Ա<sup>74</sup> որոշման

- 1-ին կետ՝ «...թույլատրել Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեին (այսուհետ՝ կոմիտե) սույն որոշման հավելվածում ներառված շինարարական աշխատանքների կատարման պետական գնման պայմանագրերով (համաձայնագրերով) (այսուհետ՝ պայմանագիր) նախատեսված աշխատանքների կատարման ժամկետը խախտելու դեպքում կապալառուի նկատմամբ հաշվարկված (հաշվարկվող) տույժերի (այսուհետ՝ տույժեր) համար պայմանագրով սահմանել հետևյալ պայմանները՝
  - 1) տույժերը պակասեցվում են կատարողականների դիմաց կապալառուին վճարվող գումարներից՝ պայմանով, որ սույն որոշման հավելվածում նշված վերջնաժամկետի պահպանման դեպքում պահված տույժերը վճարվում են կապալառուին: Կապալառուի կողմից սույն որոշման հավելվածում նշված վերջնաժամկետը չպահպանվելու դեպքում պահված տույժի գումարները վերադարձվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ որպես կատարողականների դիմաց վճարված գումարներից հաշվանցված միջոցներ.
  - 2) տույժերը չեն պակասեցվում կատարողականների դիմաց կապալառուին վճարվող գումարներից, եթե կապալառուն ներկայացնում է այդ գումարի չափով բանկային երաշխիք: Բանկային երաշխիքը պետք է լինի անհետկանչելի և ուժի մեջ լինի սույն որոշման հավելվածում նշված վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված երեսուն աշխատանքային օր...»:
- 2-րդ կետ՝ «...սույն որոշման հավելվածում նշված պայմանագրերի համար պայմանագրով սահմանված աշխատանքների կատարման ամբողջ ծավալի ավարտ է համարվում Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի № 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի կողմից ավարտված շինարարական աշխատանքներն ընդունելու մասին ակտի հաստատումը կամ շինարարական աշխատանքների փաստացի ավարտը հավաստելու վերաբերյալ կոմիտեի պատասխանատու ստորաբաժանման գրավոր եզրակացության տրամադրումը...»:

<sup>74</sup> «Գնման պայմանագրերում փոփոխություններ կատարելու թույլտվություն տրամադրող»



- 4-րդ կետ՝ «...սույն որոշման դրույթները տարածվում են 2024 թվականի հուլիսի 10-ից հետո կոմիտեի կողմից ընդունված կատարողականներից պահված տույժերին...»:

ՀՀ կառավարության 2025 թվականի հունիսի 20-ի № 817-Ա<sup>75</sup> որոշման 1-ին կետի

- 1-ին ենթակետի ա պարբերություն՝ «... եթե «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված ընթացակարգերով կազմակերպված կապիտալ շինարարական ծրագրերի գնման գործընթացների շրջանակում Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կամ Հայաստանի Հանրապետության առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակի (այսուհետ՝ պատվիրատու) հետ կապալառու ընկերությունը (այսուհետ՝ կապալառու) ունի կնքված մեկից ավելի օբյեկտների շինարարական աշխատանքների կատարման պայմանագիր, ապա սույն որոշման գործողության ընթացքում պատվիրատուն կարող է դիմել կապալառուին՝ առաջարկելով փոխադարձ համաձայնությամբ լուծել այն օբյեկտների մասով պայմանագրերը, որոնց շրջանակում առկա է հետևյալ դեպքերից առնվազն մեկը՝

ա. աշխատանքների կատարման ժամկետները խախտված են 30 օրից ավելի, և դրա արդյունքում կապալառուի նկատմամբ կիրառված են (կիրառվում են) տույժեր...»

- 2-րդ ենթակետի գ պարբերություն՝ «...եթե լուծվող պայմանագրերը ներառված են Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի հոկտեմբերի 3-ի № 1582-Ա որոշմամբ հաստատված հավելվածում, ապա նույն որոշման շրջանակում ներկայացված բանկային երաշխիքի հիման վրա կապալառուից չպահված տույժի գումարները կապալառուն վճարում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ սույն որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետով նախատեսված ժամկետում, իսկ բանկային երաշխիքը վերադարձվում է կապալառուին գումարը վճարվելուց հետո՝ երկու աշխատանքային օրվա ընթացքում: Եթե երաշխիք չի ներկայացվել, ապա պահված տույժերի

<sup>75</sup> «Գնման պայմանագրերը փոխադարձ համաձայնությամբ լուծելու և նոր գնման գործընթացների պայմանները սահմանելու մասին»



գումարները փոխանցվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջե...»

- 2-րդ կետի 1-ին ենթակետ՝ «...Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահին, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի գործադիր տնօրենին և Հայաստանի Հանրապետության առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակի տնօրենին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հետո քսան աշխատանքային օրվա ընթացքում գնահատել մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը կնքված պայմանագրերի՝ որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով նախատեսված պայմանները բավարարելու հանգամանքը և կապալառուներին ներկայացնել առաջարկություններ համաձայնագրեր կնքելու վերաբերյալ՝ դրանք ուղարկելով կապալառուների էլեկտրոնային փոստի հասցեներին...»:

Պայմանագրերի<sup>76</sup>

- 6.2 կետ՝ «...աշխատանքների կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ կատարման ենթակա սակայն չկատարված աշխատանքի գնի 0.1 %-ի չափով...»:
- 6.4 կետ՝ «...պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տաուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ...»:

#### **Խեղաթյուրումները.**

1) Ձև Հ-4 հաշվետվությունում ներկայացված «Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ դեբիտորական պարտքեր» ցուցանիշը խեղաթյուրված է 3,150.00 հազ. դրամով:

2) Ձև Հ-4 հաշվետվությունում ներկայացված «Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ դեբիտորական պարտքեր» ցուցանիշը խեղաթյուրված է 322,121.31 հազ. դրամով:

Այսպիսով, Ձև Հ-4 հաշվետվությամբ տնտեսագիտական դասակարգման «Շենքերի և շինությունների շինարարություն» (511200) հոդվածով «Մանկապարտեզների նոր շենքերի կառուցում» միջոցառման (1236-32001)

<sup>76</sup> Պայմանագրեր ՀՀԲԿ-ՀԲՄԱՇՁԲ-22/2, ՀՀԲԿ-ՀԲՄԱՇՁԲ-22/13, ՀՀԲԿ-ՀԲՄԱՇՁԲ-23/8, ՀՀԲԿ-ՀԲՄԱՇՁԲ-23/2 և ՀՀԲԿ-ՀԲՄԱՇՁԲ-23/9:



«Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ դեբիտորական պարտքեր» ցուցանիշը խեղաթյուրված (պակաս) է 325,271.31 հազ. դրամով:

**Փաստերը, որոնց հիման վրա արձանագրվել են խեղաթյուրումները.**

1) Հաշվեքննողների կողմից նշված օբյեկտներում կատարված գննությամբ՝ պարզվել է, որ բացակայում են տեղեկատվական հատուկ վահանակները, պահեստային տնտեսությունները, բեռնատար մեքենաների անվադողերի լվացման կետերը, հանգստի շենքերը, բուժկետերը, սանիտարակենցաղային շինություններից՝ ցնցուղարանները, ճանապարհային երթևեկության կանոնների լրացուցիչ նշանները, հագուստի և կոշիկների չորանոցները: Աշխատակիցները չունեն համապատասխան պաշտպանության միջոցներ և արտահագուստ: Կուտակված հողային մակերեսները քողարկված չեն:

Կապալառուի նկատմամբ պետք է կիրառվեր պայմանագրով սահմանված պատասխանատվության միջոցները՝ հաշվարկվել և կապալառուներին վճարվող գումարներից հաշվանցվել 3,150.00 հազ. դրամի տույժ ինչը չի կատարվել:

Նշվածի արդյունքում Ձև Հ-4 հաշվետվությունում ներկայացված «Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ դեբիտորական պարտքեր» ցուցանիշը խեղաթյուրված է 3,150.00 հազ. դրամով:

**2) Հաշվեքննությամբ պարզվել է, որ**

1. ՀՀ Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքում մսուր-մանկապարտեզի կառուցման պայմանագրով<sup>77</sup> սահմանված աշխատանքների ավարտի ժամկետը ՀՀ կառավարության 2024 թվականի հոկտեմբերի 3-ի N<sup>o</sup> 1582-Ա որոշման հիման վրա երկարացվել<sup>78</sup> և սահմանվել է 2025 թվականի սեպտեմբերի 1-ը, սակայն այդ ժամկետում նույնպես աշխատանքները չեն ավարտվել:

Պատվիրատուն Գնման պայմանագիրը փոխադարձ համաձայնությամբ լուծելու առաջարկ կապալառուին չի կատարել: Պայմանագիրը միակողմանի չի լուծարել: Առանց աշխատանքների ավարտի նոր ժամկետի սահմանման շարունակել է հանձնման-ընդունման արձանագրություններով աշխատանքների ընդունումը:

Սահմանված ժամկետում աշխատանքները չավարտելու համար պատվիրատուի կողմից 2025 թվականի սեպտեմբերի 1-ի դրությամբ հաշվարկել և կատարողականների դիմաց վճարումից նվազեցվել է 23,947.32 հազ. դրամի տույժ, այնինչ հաշվեքննողների կողմից կատարված վերահաշվարկից պարզվել է, որ

<sup>77</sup> ՀՀՔԿ-ՀՐՄԱՇՁԲ-22/2

<sup>78</sup> 15.10.24թ N 3 Համաձայնագիր



սեպտեմբերի 1-ի դրությամբ պետք է հաշվարկվեր 135,291.54 հազ. դրամի տույժ, իսկ հաշվետու ժամանակաշրջանի ավարտի՝ սեպտեմբերի 30-ի դրությամբ պետք է հաշվարկվեր և վճարումից նվազեցվեր 147.411,62 հազ. դրամի տույժ:

2. ՀՀ Արմավիրի մարզի Գետաշեն համայնքի մսուր-մանկապարտեզի կառուցման պայմանագրով<sup>79</sup> սահմանված աշխատանքների ավարտ ժամկետը ՀՀ կառավարության 03.10.2024 թվականի հոկտեմբերի 3-ի N° 1582-Ա որոշման հիման վրա երկարացվել<sup>80</sup> և սահմանվել է 2025 թվականի հունիսի 30-ը:

ՀՀ կառավարության 2025 թվականի հունիսի 20-ի N° 817-Ա որոշման հիման վրա պայմանագիրը փոխադարձ համաձայնությամբ կնքված Համաձայնագրով<sup>81</sup> լուծվել է: Համաձայնագրի 1.5 կետով սահմանվել է, որ Կապալառույն պարտավորվում է ՀՀ կառավարության 2024 թվականի հոկտեմբերի 3-ի N° 1582-Ա որոշման շրջանակում ներկայացված բանկային երաշխիքի հիման վրա Կապալառույն կատարողականից չպահված 90,761.43 հազ. դրամի տույժի գումարը վճարի ՀՀ պետական բյուջե: Ընդ որում Կապալառույն կատարողականից չպահված տույժի գումարը կնվազեցվի կապալառույն կողմից ներկայացված և Պատվիրատուի կողմից ընդունված կատարողականից:

2025 թ-ի հուլիսի 21-ին կապալառույն պետական բյուջե վճարել է 90,761.43 հազ. դրամ տույժ, և ընդունված կատարողականից նվազեցվել է 33,259.35 հազ. դրամ տույժ, ընդամենը 124,020.78 հազ. դրամ:

Հաշվեքննողների կողմից կատարված վերահաշվարկից պարզվել է, որ աշխատանքների կատարման ժամկետը խախտելու համար պետք է հաշվարկվեր 162,721.22 հազ. դրամի տույժ:

3. ՀՀ Արմավիրի մարզի Լենուղի համայնքում մսուր-մանկապարտեզի կառուցման պայմանագրով<sup>82</sup> սահմանված աշխատանքների ավարտի ժամկետը ՀՀ կառավարության 03.10.2024 թվականի հոկտեմբերի 3-ի N° 1582-Ա որոշման հիման վրա՝ համաձայնագրով երկարացվել<sup>83</sup> և սահմանվել է 2025 թվականի ապրիլի 20-ը:

ՀՀ կառավարության 2025 թվականի հունիսի 20-ի N° 817-Ա որոշման հիման վրա 2025 թվականի հուլիսի 15-ին կնքվել է պայմանագիրը փոխադարձ համաձայնությամբ լուծելու Համաձայնագիրը<sup>84</sup> :

---

<sup>79</sup> ՀՀՔԿ-ՀՐՄԱՇՁԲ-22/13  
<sup>80</sup> 15.10.24թ-ի Համաձայնագիր N 3  
<sup>81</sup> 21.07.2025թ Համաձայնագիր N 6  
<sup>82</sup> ՀՀՔԿ-ՀՐՄԱՇՁԲ-23/8  
<sup>83</sup> 15.10.24թ Համաձայնագիր N 3  
<sup>84</sup> 15.07.25թ Համաձայնագիր N 7



Աշխատանքների կատարման ժամկետը խախտելու համար Պատվիրատուն Կապալառուից գանձել է 54,820.59 հազ. դրամի տույժ: Հաշվեքննողների կողմից կատարված վերահաշվարկից պարզվել է, որ աշխատանքների կատարման ժամկետը խախտելու համար պետք է հաշվարկվեր 129,239.00 հազ. դրամի տույժ:

4. ՀՀ Լոռի մարզի Գոգավան համայնքում մսուր-մանկապարտեզի կառուցման պայմանագրով<sup>85</sup> սահմանված աշխատանքների ավարտի ժամկետը ՀՀ կառավարության 03.10.2024 թվականի հոկտեմբերի 3-ի N° 1582-Ա որոշման հիման վրա երկարացվել<sup>86</sup> և սահմանվել է 2025 թվականի սեպտեմբերի 1-ը:

ՀՀ կառավարության 2025 թվականի հունիսի 20-ի N° 817-Ա որոշման հիման վրա 2025 թվականի հուլիսի 25-ին կնքվել է պայմանագիրը փոխադարձ համաձայնությամբ լուծելու մասին Համաձայնագիր N° 5-ը:

Աշխատանքների կատարման ժամկետը խախտելու համար Պատվիրատուն Կապալառուից գանձել է 1,500.00 հազ. դրամի տույժ: Հաշվեքննողների կողմից կատարված վերահաշվարկից պարզվել է, որ աշխատանքների կատարման ժամկետը խախտելու համար պետք է հաշվարկվեր և գանձվեր 50,635.06 հազ. դրամի տույժ, ինչը չի կատարվել:

5. ՀՀ Տավուշի մարզի Այրում համայնքում մսուր-մանկապարտեզի կառուցման պայմանագրով<sup>87</sup> սահմանված աշխատանքների ավարտի ժամկետը ՀՀ կառավարության 03.10.2024 թվականի հոկտեմբերի 3-ի N° 1582-Ա որոշման հիման երկարացվել<sup>88</sup> և սահմանվել է 2025 թվականի փետրվարի 28-ը:

ՀՀ կառավարության 2025 թվականի հունիսի 20-ի N° 817-Ա որոշման հիման վրա 2025 թվականի հուլիսի 14-ին կնքվել է պայմանագիրը փոխադարձ համաձայնությամբ լուծելու մասին Համաձայնագիր N° 7-ը:

Աշխատանքների կատարման ժամկետը խախտելու համար Պատվիրատուի կողմից վճարումներից նվազեցվել է 38,717.86 հազ.դրամի տույժ, այնինչ հաշվեքննողների կողմից կատարված վերահաշվարկից պարզվել է, որ աշխատանքների կատարման ժամկետը խախտելու համար պետք է հաշվարկվեր 75,120.96 հազ. դրամի տույժ:

Վերը նշվածների արդյունքում Ձև Հ-4 հաշվետվությունում «Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ դեբիտորական պարտքեր» ցուցանիշը

<sup>85</sup> ՀՀՔԿ-ՀՐՄԱՇՁԲ-23/2

<sup>86</sup> 15.10.2024 Համաձայնագիր N 2:

<sup>87</sup> ՀՀՔԿ-ՀՐՄԱՇՁԲ-23/9

<sup>88</sup> 15.10.2024թ Համաձայնագիր N 3



խեղաթյուրված (պակաս) է 322,121.31 հազ. դրամով:

**ՀՀ քաղաքաշինության կոմիտեի մեկնաբանությունը.**

1) «...Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Ծիլքար, Ապարան համայնքի Մելիքայուղ և Արտաշատ համայնքի Բերքանուշ բնակավայրերի 75 տեղ հզորությամբ մանկապարտեզների կառուցման աշխատանքների կատարման համապատասխանաբար NN ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-25/1, ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-25/2 և ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-25/3 պայմանագրերի մասով օբյեկտների տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպությունների կողմից տրվել են գրավոր հավաստումներ առ այն, որ Կապալառուն ամբողջությամբ՝ ամենօրյա ռեժիմով ապահովել է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջները, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը:

Խնդիրը լրացուցիչ կուսումնասիրվի Կոմիտեի պատասխանատու ստորաբաժանման կողմից, կձեռնարկվեն համապատասխան միջոցներ՝ կապալառու և տեխնիկական հսկողություն իրականացնող ընկերությունների նկատմամբ պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ կիրառելու և հետագայում նմանատիպ իրավիճակների առաջացումը կանխելու համար:...»:

2) «...Շինարարական աշխատանքների գնման պայմանագրերով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետում (օրացուցային օրերով արտահայտված) չեն ներառվում այն ժամանակահատվածները, երբ պայմանագրի կատարումն ապահովելու համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել (Պայմանագրով սահմանվում է, որ աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով), ինչպես նաև երբ առաջացել են կապալառուի գործողություններից կամ անգործությունից անկախ պարճառներով աշխատանքների դանդաղեցման կամ կատարման անհնարիության դեպքեր (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ և 421-րդ հոդվածներ), որոնց մասնագիտական գնահատականը տալիս է պատվիրատուի անունից պայմանագրի կառավարման գործառույթներով օժտված պատասխանատու ստորաբաժանումը: Միաժամանակ, պայմանագրով սահմանվում է, որ



պայմանագիրը շարունակում է գործել մինչև կողմերի սպանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը և յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0.1 տոկոսի չափով:

Միաժամանակ, պայմանագրերի ժամկետների մասով ՀՀ կառավարության համապատասխան որոշումների նախագծերի վերաբերյալ ՀՀ պետական գնումների ոլորտի լիազոր մարմինը՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը տարբեր ժամանակներում և մասնավորապես՝ 2025 թվականի հոկտեմբերի 16-ի N1453-Ա որոշման նախագծի վերաբերյալ 2025 թվականի սեպտեմբերի 25-ի N01/26/21134-2025 գրությամբ հայտնել է իր դիրքորոշումն առ այն, որ եթե աշխատանքների կատարման ժամկետի երկարաձգումը հետևանք չէ կատարողի գործողությունների կամ անգործության, ապա պարտավորություն առկա հիմնավոր փաստարկների (մասնավորապես՝ նախագծային փոփոխություն, ծավալների ավելացում) հիման վրա ինքնուրույն պետք է սահմանի աշխատանքների կատարման նոր ժամկետները:

Տույժի գումարների հաշվարկներն արտացոլված են Կոմիտեի պատասխանատու ստորաբաժանման կողմից տրված Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ եզրակացություններում, որոնք գնումների էլեկտրոնային «PPCM» համակարգի միջոցով տրամադրվում են կապալառուներին:

1. 2022 թվականի նոյեմբերի 23-ին կնքված ՀՀ Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքում մսուր-մանկապարտեզի կառուցման NՀՀԲԿ-ՀԲՄԱՇՁԲ-22/2 պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետ է սահմանվել 270 օրացուցային օր:

2025թ. ինն ամսվա ընթացքում Կոմիտեի պատասխանատու ստորաբաժանման կողմից 3 կատարողականների մասով ուսումնասիրվել, գնահատվել, հաշվարկվել և վճարումներից նվազեցվել է ընդհանուր 23.947.317 դրամի տույժի գումար, որից՝

- N15 կատարողականի մասով՝ նախորդ N14 կատարողականի ամսաթվից մինչև տվյալ կատարողականի ամսաթիվը կատարման ենթակա, սակայն չկատարված պայմանագրի մնացորդային գումարի նկատմամբ ժամկետանց 25 աշխատանքային օրվա հաշվարկով՝ 9.386.102 դրամի տույժի գումար,

- N16 կատարողականի մասով՝ ժամկետանց 26 աշխատանքային օրվա հաշվարկով՝ 8.183.178 դրամի տույժի գումար,



- N17 կարարողականի մասով՝ ժամկետանց 22 աշխատանքային օրվա հաշվարկով 6.378.037 դրամի փույժի գումար:

2. 2023 թվականի մարտի 13-ին կնքված ՀՀ Արմավիրի մարզի Գեղաշեն համայնքի մտուր-մանկապարտեզի կառուցման NՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-22/13 պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետ է սահմանվել 270 օրացուցային օր:

Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման մեկնարկից սկսած մինչև ՀՀ կառավարության 2025թ թվականի հունիսի 20-ի N° 817-Ա որոշման հիմքով փոխադարձ համաձայնությամբ պայմանագրի լուծումը Կոմիտեի պարասխանատու ստորաբաժանման կողմից ընդունվել է 6 կարարողական՝ ընդհանուր 319.497.228 դրամի չափով, գնահատվել և հաշվարկվել է ընդհանուր 124.020.785 դրամի չափով փույժի գումար (N6 կարարողականի նկատմամբ փույժեր չեն հաշվարկվել՝ N°817-Ա որոշման 3-րդ կետի 1-ին ենթակետի հիմքով), որից՝ 33.259.352 դրամը նվազեցվել է N4 և N5 կարարողականի վճարումներից և 2025 թվականի հուլիսի 26-ին գանձվել է ՀՀ պետական բյուջե, իսկ մնացած 90.761.433 դրամը Պայմանագրի փոխադարձ համաձայնությամբ լուծման շրջանակում 2025 թվականի հուլիսի 21-ին կապալառուն վճարել է ՀՀ պետական բյուջե:

3. 2023 թվականի հուլիսի 12-ին կնքված ՀՀ Արմավիրի մարզի Լենուդի համայնքում մտուր-մանկապարտեզի կառուցման NՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-23/8 պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետ է սահմանվել 270 օրացուցային օր:

Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման մեկնարկից սկսած մինչև ՀՀ կառավարության 2025 թվականի հունիսի 20-ի N° 817-Ա որոշման հիմքով փոխադարձ համաձայնությամբ պայմանագրի լուծումը Կոմիտեի պարասխանատու ստորաբաժանման կողմից ընդունվել է 9 կարարողական՝ ընդհանուր 368.180.387 դրամի չափով, գնահատվել և հաշվարկվել է ընդհանուր 54.820.592 դրամի չափով փույժի գումար (N9 կարարողականի նկատմամբ փույժեր չեն հաշվարկվել՝ N°817-Ա որոշման 3-րդ կետի 1-ին ենթակետի հիմքով), որից՝ N1 կարարողականի մասով հաշվարկված 180.000 դրամի փույժի գումարը կապալառուն 2023 թվականի հոկտեմբերի 30-ին վճարել է ՀՀ պետական բյուջե, 48.148.495 դրամը նվազեցվել է N4, N6, N7 և N8 կարարողականի վճարումներից և գանձվել է ՀՀ պետական բյուջե, իսկ մնացած 6.492.097 դրամի մասով 2024 թվականի հոկտեմբերի 3-ի N1582-Ա որոշման հիմքով ներկայացված բանկային երաշխիքի գումարից պահանջ է ներկայացվել բանկին, և 2025 թվականի մայիսի 5-



ի գումարը գանձվել է ՀՀ պետական բյուջե:

4. 2023 թվականի սեպտեմբերի 18-ին կնքված ՀՀ Լոռու մարզի Գոգարան համայնքում մսուր-մանկապարտեզի կառուցման NՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-23/2 պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետ է սահմանվել 495 օրացուցային օր:

Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման մեկնարկից սկսած մինչև ՀՀ կառավարության 2025 թվականի հունիսի 20-ի N° 817-Ա որոշման հիմքով փոխադարձ համաձայնությամբ պայմանագրի լուծումը Կոմիտեի պատասխանատու ստորաբաժանման կողմից ընդունվել է 4 կատարողական՝ ընդհանուր 113.575.072 դրամի չափով, միայն N1 կատարողականի մասով է հաշվարկվել և ՀՀ պետական բյուջե գանձվել փուլի գումար՝ 1.500.000 դրամի չափով, N2 և N3 կատարողականները ներկայացվել են ժամկետում, իսկ N4 կատարողականի նկատմամբ փուլեր չեն հաշվարկվել՝ N°817-Ա որոշման 3-րդ կետի 1-ին ենթակետի հիմքով:

5. 2023 թվականի սեպտեմբերի 18-ին կնքված ՀՀ Տավուշի մարզի Այրում համայնքի Բագրատաշեն բնակավայրում մսուր-մանկապարտեզի կառուցման NՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-23/2 պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետ է սահմանվել 270 օրացուցային օր:

Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման մեկնարկից սկսած մինչև ՀՀ կառավարության 2025 թվականի հունիսի 20-ի N° 817-Ա որոշման հիմքով փոխադարձ համաձայնությամբ պայմանագրի լուծումը Կոմիտեի պատասխանատու ստորաբաժանման կողմից ընդունվել է 14 կատարողական՝ ընդհանուր 602.239.544 դրամի չափով, 7 կատարողականների մասով հաշվարկվել և ՀՀ պետական բյուջե գանձվել է 38.717.862 դրամի չափով փուլի գումար, իսկ N14 կատարողականի նկատմամբ փուլեր չեն հաշվարկվել՝ N°817-Ա որոշման 3-րդ կետի 1-ին ենթակետի հիմքով:

Կարծում եմ, որ հաշվեքննության եզրակացության սույն կետի ենթակետերով ներկայացված համապատասխանաբար 135,291.54 հազ. դրամի և 141,204.30 հազ. դրամի (1-ին ենթակետ), 162,721.22 հազ. դրամի (2-րդ ենթակետ), 87,986.61 հազ. դրամի (3-րդ ենթակետ), 50,635.06 հազ. դրամի (4-րդ ենթակետ) և 121,324.34 հազ. դրամի (5-րդ ենթակետ) փուլի գումարները հիմնավոր չեն:...»:

**Հաշվեքննողների արձագանքը:**

- 1) Համաձայն պայմանագրերի



- 8.5 կետի՝ «...պայանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է ՀՀ կառավարությունը:...

-8.6 կետի «...Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը...: Ընդ որում սույն կետով նախատեսված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 աշխատանքային օրով...»:

- Համաձայն N°ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-23/8, N°ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-23/2 և N°ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-23/9 պայմանագրերի 6.2.1 կետի «...Ուշացված օրեր չեն հաշվարկվում պատասխանատու ստորաբաժանման եզրակացության հիման վրա: Պատասխանատու ստորաբաժանումը նման եզրակացություն է ընդունում՝ հիմք ընդունելով տեխնիկական հսկողություն իրականացնող ընկերության կողմից տվյալ ժամանակահատվածի համար ներկայացված հաշվետվությամբ արձանագրված համապատասխան օրերի ընթացքում շինարարական աշխատանքների կատարման անհնարինության վերաբերյալ տեղեկատվությանը:...

Վերը նշված պայմանագրերից որևիցե մեկի շրջանակում տեխնիկական հսկողություն իրականացնող ընկերության կողմից տվյալ ժամանակահատվածի համար ներկայացված հաշվետվությամբ շինարարական աշխատանքների կատարման անհնարինության վերաբերյալ տեղեկատվություն և դրա հիման վրա ուշացած օրեր չհաշվարկվելու պատասխանատու ստորաբաժանման եզրակացություն չի տրամադրվել:

Խեղաթյուրումներն արձանագրելիս հիմք են ընդունվել Պայմանագրերով և դրանց անբաժանելի մաս հանդիսացող Համաձայնագրերով սահմանված աշխատանքների ավարտի ժամկետները և այդ ժամկետներում կատարման ենթակա սակայն չկատարված աշխատանքների ծավալները:

Մեկնաբանությունում նշված Պարվիրատուի կողմից հաշվարկված և կատարողականներից նվազեցված տույժերը խեղաթյուրումների հաշվարկներում հաշվի են առնված:

N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-22/13 պայմանագրի N°6 կատարողականի, N ՀՀՔԿ-



ԲՄԱՇՁԲ-23/8 պայմանագրի № 14 կատարողականի, ՆՀՀԲԿ-ՀԲՄԱՇՁԲ-23/9 №14 կատարողականի և Ն ՀՀԲԿ-ՀԲՄԱՇՁԲ-23/2 № 4 կատարողականի գումարները չեն կարող ազդել փուլերի հաշվարկի վրա, քանի որ համաձայն պայմանագրի կամ դրամի մասի կատարման արդյունքների վերաբերյալ եզրակացությունների և հանձնման-ընդունման արձանագրությունների առաջին երեքի դեպքում կատարողականում հաշվարկված աշխատանքները կատարվել են ներառյալ պայմանագրի լուծման օրը, իսկ վերջինի՝ № 4 կատարողականի դեպքում այն մինչ այդ կազմված կատարողականներով փաստացի կատարվածներից ավել հաշվարկված աշխատանքների ծավալների նվազեցման վերաբերյալ կատարողական է:

Հետևաբար ներկայացված մեկնաբանությունները չեն բխում իրավական ակտերով և պայմանագրերով սահմանված պահանջներից:

**Ընթացիկ եզրակացության «6. Խեղաթյուրումներ» բաժին կարելի է վերադառնալ հետևյալ հղմամբ՝ [6.10.1](#):**

**6.10.2. ՀՀ առողջապահության նախարարության «Առողջապահության ոլորտում պետական քաղաքականության մշակում ծրագրերի համակարգում և մոնիթորինգ» ծրագրի (1126) «Առողջապահական կազմակերպությունների կառուցում, վերակառուցում» միջոցառում (1126-31003)**

**Կատարող՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ**

*6.10.2.1. Տնտեսագիտական դասակարգման «Շենքերի և շինությունների շինարարություն» (511200) հոդվածի փաստացի ծախսերի և դեբիտորական պարտքերի գումարի խեղաթյուրումները.*

**Գնահատման կիրառելի հիմքերը.**

✓ ՀՀ ֆինանսների նախարարի 2019 թվականի մարտի 13-ի № 254-Ն հրամանի Հավելված 2-ի «Օրինակելի ձև Հ-2-ի լրացման պահանջների» 9-րդ կետ՝ Հ-2 հաշվետվության փաստացի ծախս սյունակում լրացվում է «...հաշվետու ժամանակահատվածում հիմնարկի՝ համապատասխան փաստաթղթերով ձևակերպված իրական ծախսերը»:

✓ «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի՝ «...հաշվապահական հաշվառման գրանցումները կատարվում են սկզբնական հաշվապահական հաշվառման փաստաթղթերի (այսուհետ՝ սկզբնական հաշվառման փաստաթղթեր) հիման վրա, որոնք արձանագրում են գործառնությունների կատարումը, այլ դեպքերի և իրադարձությունների տեղի ունենալը...»:



**խեղաթյուրումը.** Ձև Հ-2 հաշվետվությամբ ներկայացված «Փաստացի ծախս» և Ձև Հ-4 հաշվետվությունում ներկայացված «Հաշվետու ժամանակահատվածի վերջի դրությամբ դեբիտորական պարտքեր» ցուցանիշները խեղաթյուրված են 299,242.63 հազարական դրամով:

**Փաստերը, որոնց հիման վրա արձանագրվել է խեղաթյուրումը.**

Հաշվետու ժամանակաշրջանում միջոցառման շրջանակում իրական ծախսերը հիմնավորող 135,653.36 հազ. դրամի սկզբնական հաշվապահական հաշվառման փաստաթղթերի առկայության պայմաններում (աշխատանքների հանձնման-ընդունման արձանագրություններ) Ձև Հ-2 հաշվետվությունում արտացոլվել է 434,895.99 հազ. դրամ «Փաստացի ծախս», կամ նշված ցուցանիշը խեղաթյուրված է (ավել է ցույց տրված) 299,242.63 հազ. դրամով:

Վերը նշված փաստացի ծախսի խեղաթյուրումը, հանգեցրել է Ձև Հ-4 հաշվետվությունում «Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ դեբիտորական պարտքեր» ցուցանիշի խեղաթյուրման (պակաս է ցույց տրվել) 299,242.63 հազ. դրամով:

**ՀՀ առողջապահության նախարարության մեկնաբանությունը.**

*«...կարգավորվել է 2025 թվականի տարեկան հաշվետվություններում...»:*

Ընթացիկ եզրակացության «6. Խեղաթյուրումներ» բաժին կարելի է վերադառնալ հետևյալ հղմամբ՝ [6.10.2](#):

**6.10.3. ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Հանրակրթական և նախադպրոցական հաստատությունների հիմնում կառուցում, բարելավում» ծրագրի (1236) «Հանրակրթական դպրոցների նոր շենքերի կառուցում» միջոցառում (1236-32003)**

**Կատարող՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե**

*6.10.3.1. Տնտեսագիտական դասակարգման «Շենքերի և շինությունների շինարարություն» (511200) հողվածի դեբիտորական պարտքերի գումարի խեղաթյուրումները.*

**Գնահատման կիրառելի հիմքը.**



Գնման պայմանագիրը փոխադարձ համաձայնությամբ լուծելու մասին Համաձայնագրի<sup>89</sup> 1.3 կետ՝ «...Կապալառուն պարտավորվում է Պայմանագրի լուծման շրջանակներում անավարտ աշխատանքների ուսումնասիրության և հաշվարկման արդյունքում ի հայտ եկած թերի կամ անորակ կամ ընդունման ոչ ենթակա աշխատանքների մասով՝ անկախ նախկինում ընդունված և/կամ դրանց դիմաց վճարված լինելու հանգամանքի, Պատվիրատուին հատուցել հասցված վնասը մինչև Համաձայնագրի 1.1 կետում նշված ժամկետը...»:

**Խեղաթյուրումը.**

Ձև Հ-4 հաշվետվությունում ներկայացված «Տարեսկզբի դեբիտորական պարտքեր» և «Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ դեբիտորական պարտք» ցուցանիշները խեղաթյուրված են համապատասխանաբար 41,765.97 հազ. դրամով և 44,012.02 հազ. դրամով:

**Փաստերը, որոնց հիման վրա արձանագրվել է խեղաթյուրումը.**

Միջոցառման շրջանակում տարեսկզբի դեբիտորական պարտքի գնահատման նպատակով վերահաշվարկվել են ցուցանիշի հիմքերը (գործարքները), որոնց արդյունքում այն կազմել է 321,036.04 հազ. դրամ, մինչդեռ՝ Ձև Հ-4 հաշվետվությամբ որպես տարեսկզբի դեբիտորական պարտք ներկայացված է 279,270.07 հազ. դրամ, ինչը հանգեցրել է «Տարեսկզբի դեբիտորական պարտքեր» ցուցանիշի խեղաթյուրման (պակաս է ցույց տրվել) 41,765.97 հազ. դրամով:

Համաձայն 2025 թվականի օգոստոսի 14-ի Արձանագրության<sup>90</sup> անավարտ աշխատանքների ուսումնասիրության արդյունքում Պատվիրատուին վերադարձի ենթակա գումարը հաշվարկվել է 25,766,94 հազ. դրամ: Հաշվետու ժամանակահատվածի վերջի դրությամբ Կապալառուի կողմից վերադարձվել է ընդամենը 23,520.86 հազ. դրամ: Չվերադարձրած 2,246.08 հազ. դրամը չի արտացոլվել Ձև Հ-4 հաշվետվության «Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ դեբիտորական պարտքեր» ցուցանիշում:

Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ դեբիտորական պարտքերի գնահատման նպատակով կատարված վերահաշվարկից պարզվել է, որ Ձև Հ-4 հաշվետվությունում «Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ դեբիտորական պարտքեր» ցուցանիշը խեղաթյուրված է 44,012.02 հազ. դրամով:

<sup>89</sup> 2025 թվականի հուլիսի 11-ի «07.08.2020թ. կնքված N ՀՀԲԿ-ԲՄԱՇՁԲ-20/2 գնման պայմանագիրը փոխադարձ համաձայնությամբ լուծելու մասին» Համաձայնագիր N 16

<sup>90</sup> Կոմիտեի գլխավոր քարտուղարի 18.06.2025թ. N Հ/27.2/1075-2025 հրամանով սրեղծված հանձնաժողովը պատվիրատուի անդամների կողմից ստորագրված անավարտ շինարարական օբյեկտի գործող պայմանագրի և մնացորդային աշխատանքների գնահատման ֆինանսական վերլուծության 14.08.2025թ Արձանագրություն:



**ՀՀ քաղաքաշինության կոմիտեի մեկնաբանությունը.**

«...2020 թվականի օգոստոսի 7-ին կնքված NՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/2 ծածկագրով գնման պայմանագիրը ՀՀ կառավարության 2025թվականի հունիսի 20-ի N817-Ա որոշման հիմքով 2025 թվականի հուլիսի 11-ի փոխադարձ համաձայնությամբ լուծելու մասին N16 համաձայնագրով նախատեսվել է նաև Կապալառու ընկերության հետ կատարել վերջնահաշվարկ: Կոմիտեի գլխավոր քարտուղարի 2025թ. հունիսի 18-ի N207-Ա հրամանով սրեղծվել է օբյեկտի անավարտ (մնացորդային) շինարարական աշխատանքների փաստագրման հանձնաժողով, որի ուսումնասիրության արդյունքում կազմված արձանագրությամբ՝

- անորակ աշխատանքների կամ ավել ծավալների դիմաց նախկինում ընդունված (վճարված) աշխատանքների ընդհանուր գումարը կազմել է 30.775.835 դրամ:

- կապալառուի կողմից իրականացված և հանձնաժողովի կողմից փաստագրված ընդունման ենթակա դեռևս չվճարված աշխատանքների ծավալների գումարը կազմել է 5.008.895 դրամ,

Արդյունքում, ՀՀ պետական բյուջե վերադարձման ենթակա պարտքի գումարը կազմել է 25.766.940 դրամ, որը վճարվել է ՀՀ պետական բյուջե 2025 թվականի օգոստոսի 1-ին՝ 13.871.472 դրամ, 2025 թվականի օգոստոսի 8-ին՝ 9.649.384 դրամ և 2025 թվականի նոյեմբերի 27-ին՝ 2.246.084 դրամ:

Հարկ է նշել, որ հաշվետվությունների էլեկտրոնային «LS-Finance» համակարգում «Հ-4» ձևի փարեսկզբի դեբիտորական և կրեդիտորական պարտքի գումարներն ինքնաշխատ ձևով գեներացվում են նախորդ ժամանակաշրջանի փարեվերջի պարտքերի ցուցանիշներից և բյուջետային փարին ավարտվելուց հետո այն մնում է անփոփոխ:

Հաշվի առնելով, որ Պայմանագիրը լուծվելուց հետո Կապալառուի հետ կատարվել է վերջնահաշվարկ և փոխադարձ պարտավորություններն ամբողջությամբ մարվել են, որոնք արտացոլվել են նաև հաշվետվության «Հ-4» ձևի փարեվերջի դեբիտորական և կրեդիտորական պարտքերում, ուստի կարծում եմ, որ հաշվետվությունը չի կարող համարվել խեղաթյուրված:...»

**Հաշվեքննողների արձագանքը.**

Սույն հաշվեքննությամբ գնահատվել են ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի ինն ամսիների կատարման հաշվետվությունները, այդ թվում Ձև Հ-4 հաշվետվությունները և 44,012.02 հազ. դրամով դեբիտորական պարտքի ցուցանիշի խեղաթյուրումն



արձանագրված է հաշվետու ժամանակաշրանի վերջի՝ 2025 թվականի սեպտեմբերի 30-ի դրությամբ: Ինչ վերաբերվում է «Հ-4» ձևի տարեվերջի դեբիտորական և կրեդիտորական պարտքերին, դրանց անդրադարձ կկատարվի առաջիկա հաշվեքննության ընթացքում:

Նախորդ ժամանակաշրջանի սխալների ուղղումներ կատարվում են ՀՀ ֆինանսների նախարարի 2014 թվականի հոկտեմբերի 24-ի թիվ 725-Ն հրամանով հաստատված «ՀՀ հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտ»-ի §10.2-ով, §10.24-ով և §10.26-ով սահմանված կարգով:

**Ընթացիկ եզրակացության «6. Խեղաթյուրումներ» բաժին կարելի է վերադառնալ հետևյալ հղմամբ՝ [6.10.3](#):**

**6.10.4. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Հանրակրթական և նախադպրոցական հաստատությունների հիմնում կառուցում, բարելավում» ծրագրի (1236) «Հանրակրթական դպրոցների նոր շենքերի կառուցում» միջոցառում (1236-32003)**

**Կատարող՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ**

**6.10.4.1. *Տնտեսագիտական դասակարգման «Շենքերի և շինությունների շինարարություն» (511200) հոդվածի դեբիտորական պարտքերի գումարի խեղաթյուրումները.***

**Գնահատման կիրառելի հիմքերը.**

1) «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» օրենքի

- 10-րդ հոդվածի 3-րդ մաս՝ «...Կազմակերպությունը պետք է պատրաստի իր ֆինանսական հաշվետվությունները (բացառությամբ դրամական հոսքերի մասին տեղեկատվության)՝ կիրառելով հաշվապահական հաշվառման հաշվեգրման հիմունքը, որի համաձայն գործառնությունները, այլ դեպքերը և իրադարձությունները ճանաչվում են, երբ դրանք տեղի են ունենում և ներկայացվում են այն ժամանակահատվածների ֆինանսական հաշվետվություններում, որոնց դրանք վերաբերում են...»:
- 11-րդ հոդվածի 1-ին մաս՝ «...հաշվապահական հաշվառման գրանցումները կատարվում են սկզբնական հաշվապահական հաշվառման փաստաթղթերի (այսուհետ՝ սկզբնական հաշվառման փաստաթղթեր) հիման վրա, որոնք արձանագրում են



գործառնությունների կատարումը, այլ դեպքերի և իրադարձությունների տեղի ունենալը...»:

ՀՀՀՀՍ պարագրաֆ 2.22՝ «...Հաշվապահական հաշվառման հաշվեգրման հիմունքի համաձայն՝ գործառնությունները, այլ դեպքերը և իրադարձությունները ճանաչվում են, երբ դրանք տեղի են ունենում (և ոչ թե, երբ դրամական միջոցները կամ դրանց համարժեքները ստացվում կամ վճարվում են) և գրանցվում են հաշվապահական հաշվառման գրանցամատյաններում և ներկայացվում այն ժամանակաշրջանների ֆինանսական հաշվետվություններում, որոնց դրանք վերաբերում են...»:

Պետության կարիքների համար կապալային աշխատանքների կատարման պետական գնման պայմանագրերի

- 6.4 կետ՝ կապալառուի կողմից համաձայնագրով սահմանված աշխատանքների կատարման ժամկետի խախտման դեպքում հաշվարկվող տույժերը պակասեցվում են կատարողականի դիմաց վճարվող գումարից՝ պայմանով, որ համաձայնագրով սահմանված աշխատանքների վերջնաժամկետի պահպանման դեպքում պահված տույժի գումարը վճարվում է:
- Հավելված թիվ 2.1-ի «Տեխնիկական բնութագրի» «Պայմանագրի կատարման փուլերը» բաժին՝ փուլ 1-ով նախատեսված նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման, քաղաքաշինական պարզ փորձաքննության եզրակացության ստացման, պատվիրատուի հետ համաձայնեցման, այդ թվում հրավերով նախատեսված համաձայնեցումների և այլ փորձաքննությունների ձեռք բերման համար ժամկետ է սահմանվել պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրվանից 90 օրացուցային օր: Ուշացնելու համար նախատեսվել է տույժ յուրաքանչյուր ուշացած աշխատանքային օրվա համար այդ պահին կնքված պայմանագրի ընդհանուր արժեքի 0.01 տոկոսի չափով:

2) «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» օրենքի

- 10-րդ հոդվածի 3-րդ մաս՝ «...Կազմակերպությունը պետք է պատրաստի իր ֆինանսական հաշվետվությունները (բացառությամբ դրամական հոսքերի մասին տեղեկատվության)՝ կիրառելով հաշվապահական հաշվառման հաշվեգրման հիմունքը, որի համաձայն գործառնությունները, այլ դեպքերը և իրադարձությունները ճանաչվում



են, երբ դրանք տեղի են ունենում և ներկայացվում են այն ժամանակահատվածների ֆինանսական հաշվետվություններում, որոնց դրանք վերաբերում են...»:

- 11-րդ հոդվածի 1-ին մաս՝ «...հաշվապահական հաշվառման գրանցումները կատարվում են սկզբնական հաշվապահական հաշվառման փաստաթղթերի (այսուհետ՝ սկզբնական հաշվառման փաստաթղթեր) հիման վրա, որոնք արձանագրում են գործառնությունների կատարումը, այլ դեպքերի և իրադարձությունների տեղի ունենալը...»:

ՀՀՀՀՍ պարագրաֆ 2.22՝ «...Հաշվապահական հաշվառման հաշվեգրման հիմունքի համաձայն՝ գործառնությունները, այլ դեպքերը և իրադարձությունները ճանաչվում են, երբ դրանք տեղի են ունենում (և ոչ թե, երբ դրամական միջոցները կամ դրանց համարժեքները ստացվում կամ վճարվում են) և գրանցվում են հաշվապահական հաշվառման գրանցամատյաններում և ներկայացվում այն ժամանակաշրջանների ֆինանսական հաշվետվություններում, որոնց դրանք վերաբերում են...»:

ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 11-ի<sup>91</sup> N<sup>o</sup> 128-Ն հրամանի Հավելվածի 6-րդ կետի գ ենթակետ՝ շինարարության կազմակերպման նախագիծը կազմում ընդգրկվում են «...շինարարական հրապարակի կազմակերպման պայմաններն ու պահանջները (այդ թվում՝ ժամանակավոր սահմանազատող ցանկապատ, ճանապարհային երթևեկության կանոնների լրացուցիչ նշաններ,... շինարարական աշխատանքների ու քաղաքաշինական փաստաթղթերի մասին իրազեկող ցուցանակ, ... բեռնատար մեքենաների անվադողերի վրացման կետ ...»:

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2025 թվականի մարտի 5-ի N<sup>o</sup> 07-Ն<sup>92</sup> հրամանի Հավելվածի 3-րդ կետի 2-րդ և 9-րդ ենթակետեր՝ գործատուն պարտավոր է ապահովել շինարարական հրապարակի անհրաժեշտ ցանկապատումը (պահպանական, պաշտպանական, ազդանշանային), լուսավորում, տեսանկարահանման սարքով համալրումը, ... պահեստային տնտեսության ստեղծումը և շինարտադրության կազմակերպման, աշխատողների կենսապահովման համար անհրաժեշտ ժամանակավոր շենքերի ու շինությունների՝

<sup>91</sup> «Բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և շինությունների նախագծային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը սահմանող կանոնները հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2006 թվականի նոյեմբերի 29-ի N 273-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին»

<sup>92</sup> «Շինարարական հրապարակում շինարարական աշխատանքների կազմակերպման և անվտանգության ապահովման ուղեցույցը հաստատելու մասին»



հանդերձարանների, հագուստի և կոշիկների չորանոցների, սանհանգույցների, ցնցուղարանների, սննդի կազմակերպման, հանգստի սենքերի և բուժկետերի նախապատրաստումը, տարածքում հողային մակերեսների քողարկումը, առավել տեսանելի և մատչելի տեղամասում ընթեռնելի տառաշարով (հայերեն, անգլերեն, ռուսերեն) և բովանդակությամբ հատուկ վահանակի տեղադրումը՝ Գործատու կազմակերպությունների տվյալների (անվանումով, էլեկտրոնային հասցեով, հեռախոսահամարով), ծրագրի անվանման ու նպատակային նշանակության, շինարարական աշխատանքների մեկնարկի և ավարտի ժամկետների, կառուցապատման թույլտվությունների (նախագծման և շինարարության) վերաբերյալ տեղեկատվությամբ:

Մանկապարտեզների կառուցման պայմանագրերի<sup>93</sup>

- 6.5.1 կետ՝ «...Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ողջ ընթացքում քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջների, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման, կահավորման, տեխնիկական անվտանգության սանիտարահիգիենիկ և բնապահպանական նորմերի չպահպանման յուրաքանչյուր արձանագրված դեպքի համար Կապալառուի նկատմամբ կիրառվում է պատասխանատվության հետևյալ միջոցները: Շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը չկազմակերպելը՝ 350.00 հազ. դրամ: Տեխնիկական անվտանգության նորմերի չպահպանելը՝ 1,000.00 հազ. դրամ: Սանիտարահիգիենիկ և բնապահպանական նորմերի չպահպանելը՝ 700.00 հազ. դրամ...»:
- 6.4 կետ՝ «...պայմանագրի 6.2, 6.3, 6.3.1 և 6.5.1 կետերով նախատեսված տույժը և տաուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ...»:

### **Խեղաթյուրումները.**

1) Ձև Հ-4 հաշվետվությունում ներկայացված «Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ դեբիտորական պատքեր» ցուցանիշը խեղաթյուրված է 96,481.09 հազ. դրամով:

<sup>93</sup> Պեդրության կարիքների համար կապալային աշխատանքների կատարման պայմանագիր N ՀՏՁՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/105



2) Ձև Հ-4 հաշվետվությունում ներկայացված «Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ դեբիտորական պատքեր» ցուցանիշը խեղաթյուրված է 1,050.00 հազ. դրամով:

Այսպիսով, Ձև Հ-4 հաշվետվությամբ տնտեսագիտական դասակարգման «Շենքերի և շինությունների շինարարություն» (511200) հոդվածով «Հանրակրթական դպրոցների նոր շենքերի կառուցում» միջոցառման (1236-32003) «Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ դեբիտորական պատքեր» ցուցանիշը խեղաթյուրված է 97,531.09 հազ. դրամով:

**Փաստերը, որոնց հիման վրա արձանագրվել է խեղաթյուրումները.**

1) Պետության կարիքների համար կապալային աշխատանքների կատարման պետական գնման թվով 16 պամանագրերի փուլ 1-ով նախատեսված աշխատանքները սահմանված ժամկետում չեն կատարվել (պայմանագրի ուժի մեջ մտնելու օրը ընդունել ենք նախագծման թույլտվությանը օրը) սակայն ուշացած օրերի համար պայմանագրով նախատեսված 96,481,09 հազ. դրամի տույժերը չեն հաշվարկել և կատարողականների դիմաց վճարումներից չեն պակասեցվել, ինչը հանգեցրել է Ձև Հ-4 հաշվետվությունում «Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ դեբիտորական պատքեր» ցուցանիշի խեղաթյուրման 96,481.09 հազ. դրամով:

2) Հաշվեքննողների կողմից նշված օբյեկտում կատարված գննությամբ՝ պարզվել է, որ բացակայում են տեղեկատվական հատուկ վահանակը, պահեստային տնտեսությունները, բեռնատար մեքենաների անվադողերի լվացման կետը, հանգստի սենքը, բուժկետը, սանիտարակենցաղային շինություններից՝ ցնցուղարանը, ճանապարհային երթևեկության կանոնների լրացուցիչ նշանները, հագուստի և կոշիկների չորանոցները: Աշխատակիցները չունեն համապատասխան պաշտպանության միջոցներ և արտահագուստ: Կուտակված հողային մակերեսները քողարկված չեն:

Կապալառուի նկատմամբ պետք է կիրառվեր պայմանագրով սահմանված պատասխանատվության միջոցները՝ հաշվարկվել և վճարվող գումարներից հաշվանցվել 1,050.00 հազ. դրամի տույժ ինչը չի կատարվել:

Նշվածի արդյունքում Ձև Հ-4 հաշվետվությունում «Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ դեբիտորական պատքեր» ցուցանիշը խեղաթյուրված (պակաս) է 1,050.00 հազ. դրամով:

**Ընթացիկ եզրակացության «6. Խեղաթյուրումներ» բաժին կարելի է վերադառնալ հետևյալ հղմամբ՝ [6.10.4](#):**



**6.10.5. ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Առողջապահության ոլորտում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգ» ծրագրի (1126) «Առողջապահական կազմակերպությունների կառուցում, վերակառուցում» միջոցառում (1126- 31003)**

**Կատարող՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե**

*6.10.5.1. Տնփեսագիտական դասակարգման «Շենքերի և շինությունների շինարարություն» հոդվածի (511200) դերփորրական պարտքերի գումարի խեղաթյուրումները.*

**Գնահատման կիրառելի հիմքերը.**

✓ «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» օրենքի

➤ 10-րդ հոդվածի 3-րդ մաս՝ «...Կազմակերպությունը պետք է պատրաստի իր ֆինանսական հաշվետվությունները (բացառությամբ դրամական հոսքերի մասին տեղեկատվության)՝ կիրառելով հաշվապահական հաշվառման հաշվեգրման հիմունքը, որի համաձայն գործառնությունները, այլ դեպքերը և իրադարձությունները ճանաչվում են, երբ դրանք տեղի են ունենում և ներկայացվում են այն ժամանակահատվածների ֆինանսական հաշվետվություններում, որոնց դրանք վերաբերում են...»:

➤ 11-րդ հոդվածի 1-ին մաս՝ «...հաշվապահական հաշվառման գրանցումները կատարվում են սկզբնական հաշվապահական հաշվառման փաստաթղթերի (այսուհետ՝ սկզբնական հաշվառման փաստաթղթեր) հիման վրա, որոնք արձանագրում են գործառնությունների կատարումը, այլ դեպքերի և իրադարձությունների տեղի ունենալը...»:

✓ ՀՀՀՀՍ պարագրաֆ 2.22՝ «...Հաշվապահական հաշվառման հաշվեգրման հիմունքի համաձայն՝ գործառնությունները, այլ դեպքերը և իրադարձությունները ճանաչվում են, երբ դրանք տեղի են ունենում (և ոչ թե, երբ դրամական միջոցները կամ դրանց համարժեքները ստացվում կամ վճարվում են) և գրանցվում են հաշվապահական հաշվառման գրանցամատյաններում և ներկայացվում այն ժամանակաշրջանների ֆինանսական հաշվետվություններում, որոնց դրանք վերաբերում են...»:

✓ Պայմանագրի 6.2 կետ՝ «...աշխատանքների կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա



համար գանձվում է տույժ կատարման ենթակա սակայն չկատարված աշխատանքի գնի 0.1 %-ի չափով...»:

✓ ՀՀ կառավարության 2024 թվականի հոկտեմբերի 3-ի թիվ 1582-Ա<sup>94</sup> որոշման 1-ին կետ՝ «...թույլատրել Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեին (այսուհետ՝ կոմիտե) սույն որոշման հավելվածում ներառված շինարարական աշխատանքների կատարման պետական գնման պայմանագրերով (համաձայնագրերով) (այսուհետ՝ պայմանագիր) նախատեսված աշխատանքների կատարման ժամկետը խախտելու դեպքում կապալառուի նկատմամբ հաշվարկված (հաշվարկվող) տույժերի (այսուհետ՝ տույժեր) համար պայմանագրով սահմանել հետևյալ պայմանները՝

1) տույժերը պակասեցվում են կատարողականների դիմաց կապալառուին վճարվող գումարներից՝ պայմանով, որ սույն որոշման հավելվածում նշված վերջնաժամկետի պահպանման դեպքում պահված տույժերը վճարվում են կապալառուին: Կապալառուի կողմից սույն որոշման հավելվածում նշված վերջնաժամկետը չպահպանվելու դեպքում պահված տույժի գումարները վերադարձվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ որպես կատարողականների դիմաց վճարված գումարներից հաշվանցված միջոցներ:

2) տույժերը չեն պակասեցվում կատարողականների դիմաց կապալառուին վճարվող գումարներից, եթե կապալառուն ներկայացնում է այդ գումարի չափով բանկային երաշխիք: Բանկային երաշխիքը պետք է լինի անհետկանչելի և ուժի մեջ լինի սույն որոշման հավելվածում նշված վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված երեսուն աշխատանքային օր...»:

✓ ՀՀ կառավարության 2025 թվականի հունիսի 20-ի N<sup>o</sup> 817-Ա<sup>95</sup> որոշման

➤ 1-ին կետի 1-ին ենթակետի ա պարբերություն՝ «... եթե «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված ընթացակարգերով կազմակերպված կապիտալ շինարարական ծրագրերի գնման գործընթացների շրջանակում Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կամ Հայաստանի Հանրապետության առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակի (այսուհետ՝ պատվիրատու) հետ կապալառու ընկերությունը (այսուհետ՝ կապալառու) ունի կնքված մեկից ավելի

<sup>94</sup> «Գնման պայմանագրերում փոփոխություններ կատարելու թույլտվություն փայլու մասին»

<sup>95</sup> «Գնման պայմանագրերը փոխադարձ համաձայնությամբ լուծելու և նոր գնման գործընթացների պայմանները սահմանելու մասին»



օբյեկտների շինարարական աշխատանքների կատարման պայմանագիր, ապա սույն որոշման գործողության ընթացքում պատվիրատուն կարող է դիմել կապալառուին՝ առաջարկելով փոխադարձ համաձայնությամբ լուծել այն օբյեկտների մասով պայմանագրերը, որոնց շրջանակում առկա է հետևյալ դեպքերից առնվազն մեկը՝

- ա. աշխատանքների կատարման ժամկետները խախտված են 30 օրից ավելի, և դրա արդյունքում կապալառուի նկատմամբ կիրառված են (կիրառվում են) տույժեր....»
- 2-րդ կետի 1-ին ենթակետ՝ «...Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահին, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի գործադիր տնօրենին և Հայաստանի Հանրապետության առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակի տնօրենին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հետո քսան աշխատանքային օրվա ընթացքում գնահատել մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը կնքված պայմանագրերի՝ որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով նախատեսված պայմանները բավարարելու հանգամանքը և կապալառուներին ներկայացնել առաջարկություններ համաձայնագրեր կնքելու վերաբերյալ՝ դրանք ուղարկելով կապալառուների էլեկտրոնային փոստի հասցեներին...»:

**խեղաթյուրումը.** Ձև Հ-4 հաշվետվությունում ներկայացված «Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ դեբիտորական պարտքեր» ցուցանիշը խեղաթյուրված (պակաս) է 235,599.23 հազ. դրամով:

**Փաստերը, որոնց հիման վրա արձանագրվել են խեղաթյուրումը.**

✓ ՀՀ Արարատի մարզի Արտաշատի բժշկական կենտրոնի կառուցման պայմանագրով<sup>96</sup> սահմանված աշխատանքների ավարտի ժամկետը ՀՀ կառավարության 2024 թվականի հոկտեմբերի 3-ի № 1582-Ա որոշման հիման վրա երկարացվել<sup>97</sup> և սահմանվել է 2025 թվականի փետրվարի 25-ը, սակայն այս ժամկետում նույնպես աշխատանքները չեն ավարտվել: Պատվիրատուն միակողմանի չի լուծել պայմանագիրը, չի դիմել Կապալառուին փոխադարձ համաձայնությամբ պայմանագիրը լուծելու համար, առանց պայմանագրի ժամկետի երկարացման շարունակել են աշխատանքները: Աշխատանքների կատարման ժամկետի խախտման համար հաշվարկվել և գանձվել է 2,791.33 հազ. դրամի տույժ:

<sup>96</sup> Պայմանագիր ՀՀԲԿ-ԲՄԱՇՁԲ-23/6

<sup>97</sup> 2024 թվականի դեկտեմբերի 23-ի Համաձայնագիր N 5



Հաշվեքննողների կողմից կատարված վերահաշվարկով պարզվել է, որ աշխատանքների կատարման ժամկետի խախտման համար հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ Կապալառուի կողմից վճարման ենթակա տույժը կազմում է 70,366.16 հազ. դրամ:

✓ ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավանի բժշկական կենտրոնի կառուցման պայմանագրով<sup>98</sup> սահմանված աշխատանքների ավարտի ժամկետը ՀՀ կառավարության 2024 թվականի հոկտեմբերի 3-ի N° 1582-Ա որոշման հիման վրա երկարացվել<sup>99</sup> և սահմանվել է 2024 թվականի նոյեմբերի 1-ը, սակայն հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ աշխատանքները չեն ավարտվել: Պատվիրատուն միակողմանի չի լուծել պայմանագիրը, չի դիմել Կապալառուին փոխադարձ համաձայնությամբ պայմանագիրը լուծելու համար: Առանց պայմանագրի ժամկետի երկարացման շարունակել են աշխատանքները: Պայմանագրով սահմանված աշխատանքների կատարման ժամկետի խախտման համար չեն հաշվարկվել պայմանագրով սահմանված տույժերը: Հաշվեքննողների կողմից կատարված վերահաշվարկով պարզվել է, որ աշխատանքների կատարման ժամկետի խախտման համար հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ Կապալառուի կողմից վճարման ենթակա տույժը կազմում է 12,458.00 հազ. դրամ:

✓ ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտի առողջության կենտրոնի կառուցման պայմանագրով<sup>100</sup> սահմանված աշխատանքների կատարման ժամկետը ՀՀ կառավարության 2024 թվականի հոկտեմբերի 3-ի N° 1582-Ա որոշման հիման վրա երկարացվել<sup>101</sup> և սահմանվել է 2024 թվականի նոյեմբերի 1-ը, սակայն այս ժամկետում նույնպես աշխատանքները չեն ավարտվել: ՀՀ կառավարության 2025 թվականի հունիսի 20-ի N° 817-Ա որոշման հիման վրա կնքված Համաձայնագրով<sup>102</sup> պայմանագիրը 2025 թվականի հուլիսի 25-ին փոխադարձ համաձայնությամբ լուծել են: Աշխատանքների կատարման ժամկետի խախտման համար հաշվարկվել և գանձվել է 10,653.58 հազ. դրամի տույժ, այնինչ հաշվեքննողների կողմից կատարված վերահաշվարկով այն կազմում է 166,219.98 հազ. դրամ:

Նշվածների արդյունքում Ձև Հ-2 հաշվետվությունում «Հաշվետու ժամանակահատվածի վերջի դրությամբ դեբիտորական պարտքեր» ցուցանիշը խեղաթյուրված (պակաս) է 235,599.23 հազ. դրամով:

<sup>98</sup> ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-23/1

<sup>99</sup> 2024 թվականի հոկտեմբերի 11-ի Համաձայնագիր N 4

<sup>100</sup> Պայմանագիր ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-23/6

<sup>101</sup> 2024 թվականի դեկտեմբերի 23-ի Համաձայնագիր N 11

<sup>102</sup> 2025 թվականի հուլիսի 25-ի Համաձայնագիր N 14



### **«Քաղաքաշինության կոմիտեի մեկնաբանությունը».**

«...Շինարարական աշխատանքների գնման պայմանագրերով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետում (օրացուցային օրերով արտահայտված) չեն ներառվում այն ժամանակահատվածները, երբ պայմանագրի կատարումն ապահովելու համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել (Պայմանագրով սահմանվում է, որ աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով), ինչպես նաև երբ առաջացել են կապալառուի գործողություններից կամ անգործությունից անկախ պատճառներով աշխատանքների դանդաղեցման կամ կատարման անհնարինության դեպքեր (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ և 421-րդ հոդվածներ), որոնց մասնագիտական գնահատականը տալիս է պարզաբանության անունից պայմանագրի կառավարման գործառույթներով օժտված պատասխանատու ստորաբաժանումը: Միաժամանակ, պայմանագրով սահմանվում է, որ պայմանագիրը շարունակում է գործել մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը և յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0.1 տոկոսի չափով:

Տույժի գումարների հաշվարկներն արտացոլված են Կոմիտեի պատասխանատու ստորաբաժանման կողմից տրված Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ եզրակացություններում, որոնք գնումների էլեկտրոնային «PPCM» համակարգի միջոցով տրամադրվում են կապալառուներին:

1. 2023 թվականի հունիսի 30-ին կնքված ՀՀ Արարատի մարզի Արտաշատի բժշկական կենտրոնի կառուցման NՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-23/6 պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետ է սահմանվել 360 օրացուցային օր:

2025թ. ինն ամսվա ընթացքում Կոմիտեի պատասխանատու ստորաբաժանման կողմից 2 կատարողականների մասով ուսումնասիրվել, գնահատվել, հաշվարկվել և վճարումներից նվազեցվել է ընդհանուր՝ 2.791.332 դրամի տույժի գումար, որից՝

- N7 կատարողականի մասով՝ ժամկետանց 33 աշխատանքային օրվա հաշվարկով՝ 1.938.061 դրամի տույժի գումար,

- N8 կատարողականի մասով՝ ժամկետանց 32 աշխատանքային օրվա հաշվարկով՝ 853.271 դրամի տույժի գումար:



2. 2023 թվականի հունիսի 15-ին կնքված ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավանի բժշկական կենտրոնի կառուցման NՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-23/1 պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետ է սահմանվել 360 օրացուցային օր:

2025 թվականի ընթացքում Կոմիտեի պատասխանատու ստորաբաժանման կողմից միայն N7 կատարողականի մասով է հաշվարկվել և վճարումներից պահվել 35 ժամկետանց օրվա համար փուլի գումար, որը կազմել է 2.054.884 դրամ: ՀՀ կառավարության 2024 թվականի հոկտեմբերի 3-ի N1582-Ա որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանվել է, որ շինարարական աշխատանքները փաստացի ավարտելու 2024 թվականի նոյեմբերի 1-ի ժամկետի պահպանման դեպքում պահված փուլերը վճարվում են կապալառուին, իսկ չպահպանելու դեպքում վերադարձվում են ՀՀ պետական բյուջե՝ որպես կատարողականների դիմաց վճարված գումարներից հաշվանցված միջոցներ: Կոմիտեի պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կողմից 2024 թվականի դեկտեմբերի 26-ին ներկայացվել է եզրակացություն (Ն/27.1/11457-2024)՝ շինարարական աշխատանքների 2024 թվականի հոկտեմբերի 31-ին փաստացի ավարտը հավաստելու վերաբերյալ և ՀՀ կառավարության 2024 թվականի դեկտեմբերի 19-ի N2030-Ա որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի հիմքով պահված փուլի գումարը վերադարձվել է կապալառուին:

3. 2020 թվականի հոկտեմբերի 21-ին կնքված ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտի առողջության կենտրոնի կառուցման NՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/7 պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետ է սահմանվել 720 օրացուցային օր:

2024 թվականի ընթացքում Կոմիտեի պատասխանատու ստորաբաժանման կողմից միայն N15 կատարողականի մասով է վճարումներից պահվել 63 ժամկետանց օրվա համար հաշվարկված փուլի գումար՝ 10.653.579 դրամի չափով, որը պայմանագրի փոխադարձ համաձայնությամբ լուծման շրջանակում 2025 թվականի հուլիսի 10-ին գանձվել է ՀՀ պետական բյուջե:

Կարծում են, որ հաշվեքննության եզրակացության սույն կետի ենթակետերով ներկայացված համապատասխանաբար 70,366.16 հազ. դրամի (1-ին ենթակետ), 14,151.53 հազ. դրամի (2-րդ ենթակետ) և 113,395.9 հազ. դրամի (3-րդ ենթակետ) փուլի գումարները հիմնավոր չեն:...»:

**Հաշվեքննողների արձագանքը.**

Համաձայն պայմանագրերի



- 8.5 կետի՝ «...պայանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են ... պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է ՀՀ կառավարությունը:...

-8.6 կետի «...Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը...: Ընդ որում սույն կետով նախատեսված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 աշխատանքային օրով...»:

Համաձայն NՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-23/1 և NՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-23/6 պայմանագրերի 6.2.1 կետի «...Ուշացված օրեր չեն հաշվարկվում պատասխանատու ստորաբաժանման եզրակացության հիման վրա: Պատասխանատու ստորաբաժանումը նման եզրակացություն է ընդունում՝ հիմք ընդունելով տեխնիկական հսկողություն իրականացնող ընկերության կողմից տվյալ ժամանակահատվածի համար ներկայացված հաշվետվությամբ արձանագրված համապատասխան օրերի ընթացքում շինարարական աշխատանքների կատարման անհնարինության վերաբերյալ տեղեկատվությունը:...

Վերը նշված պայմանագրերից որևիցե մեկի շրջանակում տեխնիկական հսկողություն իրականացնող ընկերության կողմից տվյալ ժամանակահատվածի համար ներկայացված հաշվետվությամբ շինարարական աշխատանքների կատարման անհնարինության վերաբերյալ տեղեկատվություն և դրա հիման վրա ուշացած օրեր չհաշվարկելու պատասխանատու ստորաբաժանման եզրակացություն չի տրամադրվել:

Խեղաթյուրումներն արձանագրելիս հիմք են ընդունվել Պայմանագրերով և դրանց անբաժանելի մաս հանդիսացող Համաձայնագրերով սահմանված աշխատանքների ավարտի ժամկետները և այդ ժամկետներում կատարման ենթակա սակայն չկատարված աշխատանքների ծավալները:

Մեկնաբանությունում նշված ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-23/6 և ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/7 պայմանագրերի շրջանակներում Կապալառուներից գանձված փուլերի գումարները հաշվեքննողների կողմից հաշվի են առնվել խեղաթյուրումները հաշվարկելիս ինչը նշված է Ընթացիկ եզրակացությանում: Ինչ վերաբերվում է ՀՀ Կոտայքի մարզի



Չարենցավանի բժշկական կենտրոնի կառուցման NՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-23/1 պայմանագրի մասով բերված մեկնաբանությանը առ այն, որ «...Կոմիտեի պարասիսանարու ստորաբաժանման ղեկավարի կողմից 2024 թվականի դեկտեմբերի 26-ին ներկայացվել է եզրակացություն (Ն/27.1/11457-2024)՝ շինարարական աշխատանքների 2024 թվականի հոկտեմբերի 31-ին փաստացի ավարտը հավաստելու վերաբերյալ...», ապա հարկ է նշել, որ համաձայն 2024 թվականի դեկտեմբերի 20-ին կապալառուի կողմից ներկայացրած և նույն պարասիսանարու ստորաբաժանման ղեկավարի կողմից 2024 թվականի դեկտեմբերի 24-ին և 2025 թվականի մարտի 20-ին ստորագրված «Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների հանձնման-ընդունման» N°8 և N°9 արձանագրությունների՝ 27,491.06 հազ. դրամի և 9,533.20 հազ. դրամի աշխատանքները պայմանագրով սահմանված 2024 թվականի մայիսի 16-ին կատարելու փոխարեն կատարվել են 2024 թվականի դեկտեմբերի 20-ին:

Հետևաբար ներկայացված մեկնաբանությունները չեն բխում իրավական ակտերով և պայմանագրերով սահմանված պահանջներից:

**Ընթացիկ եզրակացության «6. Խեղաթյուրումներ» բաժին կարելի է վերադառնալ հետևյալ հղմամբ՝ [6.10.5](#):**

**6.10.6. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Մասսայական սպորտ» ծրագրի՝ (1163) ««Վորքաութ» տեսակի մարզահրապարակների կառուցում» միջոցառում (1163-32005) կատարող՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ**

**6.10.6.1. Շենքերի և շինությունների շինարարություն» տնտեսագիտական հոդվածի (511200) փաստացի ծախսերի, դեբիտորական և կրեդիտորական պարտքերի գումարի խեղաթյուրումները.**

**Գնահատման կիրառելի հիմք.**

✓ «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մաս՝ «...գործառնությունները, այլ դեպքերը և իրադարձությունները ճանաչվում են, երբ դրանք տեղի են ունենում և ներկայացվում են այն ժամանակահատվածների ֆինանսական հաշվետվություններում, որոնց դրանք վերաբերում են»:

✓ ՀՀ ֆինանսների նախարարի 13.03.2019թ. N° 254-Ն հրամանի Հավելված 2-ի «Օրինակելի ձև Հ-2-ի լրացման պահանջների» 9-րդ կետի Հ-2 հաշվետվության փաստացի ծախսի սյունակում լրացվում են «...հաշվետու ժամանակահատվածում հիմնարկի՝ համապատասխան փաստաթղթերով



ձևակերպված իրական ծախսերը, ներառյալ կրեդիտորների չվճարված հաշիվները...»:

**Խեղաթյուրումը.** Ձև Հ-2 հաշվետվությամբ ներկայացված «Փաստացի ծախս» ցուցանիշը խեղաթյուրված է 22,889.69 հազ. դրամով: Ձև Հ-4 հաշվետվությունում ներկայացված «Տարեսկզբի դեբիտորական պարտք» «Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կրեդիտորական պարտք» ցուցանիշները խեղաթյուրված են 22,889.69 հազ. դրամով:

**Փաստերը, որոնց հիման վրա արձանագրվել է խեղաթյուրումը:**

Հաշվետու ժամանակահատվածի տարեսկզբի դեբիտորական պարտքի գնահատման նպատակով վերահաշվարկվել են ցուցանիշի հիմքերը (գործարքները), որոնց արդյունքում այն կազմել է 22,889.69 հազ. դրամ, մինչդեռ՝ Ձև Հ-4 հաշվետվությունում տարեսկզբի դեբիտորական պարտքը ներկայացված է 0.0 դրամ կամ 22,889.69 հազ. դրամ հազ. դրամով խեղաթյուրված:

Միջոցառման շրջանակում կնքված Պայմանագրերով<sup>103</sup> հաշվետու ժամանակահատվածում ընդունվել են 151.262.60 հազ. դրամի աշխատանքների հանձնման-ընդունման արձանագրություններ, սակայն Ձև Հ-2 հաշվետվությունում «Փաստացի ծախս» ցուցանիշը արտացոլվել է 128,375.72 հազ. դրամ կամ 22,889.69 հազ. դրամով խեղաթյուրված:

Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կրեդիտորական պարտքի գնահատման նպատակով կատարված վերահաշվարկից պարզվել է, որ Ձև Հ-4 հաշվետվությունում «Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կրեդիտորական պարտքեր» ցուցանիշը խեղաթյուրված է 22,889.69 հազ. դրամով:

**Ընթացիկ եզրակացության «6. Խեղաթյուրումներ» բաժին կարելի է վերադառնալ հետևյալ հղմամբ՝ [6.10.6](#):**

<sup>103</sup> Պայմանագրեր ՀՏՁՀ-ՄԳՀ-ԱՇՁԲ-2024/1-1 և ՀՏՁՀ-ՄԳՀ-ԱՇՁԲ-2024/1-2